
ԿՈՐՒՆ



ԱՐՔ ՄԱՀԿՈՅԻ

1084

ԿՈՐԻՒՆ



ՍՐՔ ՄԱՇՏՈՑ

ԲՆԱԳԻՐԸ, ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԱՅԼ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆԵՐՈՎ,
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ, ԱՌԱՋԱԲԱՆՈՎ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ
Ի ՁԵՌՆ ՊՐՈՖ. ԴՐ. ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆԻ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»
Գ ա հ ի ր է
1954

ԱՌԱՋԱԲԱՆ

1· Սոյն 1940 թ· Փետրուարի 17ին լրացաւ Մեսրոպ Մաշտոցի մահուան 1500ամեակը:

Նախ քան 5րդ դարի սկզբները հայերէն լեզուով մէկ բառ անգամ գրուած չունենիք ոչ քարերի վրայ, ոչ գրքերի մէջ:

Առաջին մարդը, որ հոգում է հայերէն գրի ու գրականութեան կամ, ինչպէս այն ժամանակ ասում էին, դպրութեան մասին, է Մեսրոպ Մաշտոցը:

Ժամանակի տնտեսական – քաղաքական պայմաններն էին առաջ բերել գրի ու գրականութեան անհրաժեշտութիւնը, եւ Մաշտոցը բնականաբար մենակ չէր իր գործունէութեան մէջ: Նրա հետ եղել են Սահակ կաթողիկոսը, Վռամշապուհ թագաւորը եւ Մաշտոցի ու Սահակի աշակերտները:

Ի՞նչ էին ժամանակի այդ պայմանները:

Մեծ Հայաստանը 387 թուից ի վեր բաժանուած էր երկու հարեւան մեծ տէրութիւնների մէջ — Հռոմայեցոց կայսրութեան եւ Պարսից Սասանեան թագաւորութեան: Արեւելեան բաժնում, որ երկրի մեծ մասն էր, դեռ մնում էր Հայոց Արշակունի թագաւորութիւնը արքայից արքայի գերիշխանութեան ներքոյ: Այստեղ պարսից թագաւորները ձգտում էին մտցնել զրադաշտական կրօնը: Բացի այդ՝ նրանց հովանաւորութեամբ հայոց եկեղեցիներում եւ եկեղեցական դպրոցներում պահում էր ասորերէն լեզուն, որ անհասկանալի էր ժողովրդի համար, եւ ասորի եպիսկոպոսները ձկրտում էին գլուխ դառնալու նաեւ հայոց եկեղեցուն: Երկու կողմից, ուրեմն, վտանգ էր սպառնում հայ հոգեւորականութեան, առանձնապէս կաթողիկոսի տնտեսական շահերին:

Այդ վտանգի առաջն առնելու համար՝ պէտք էր քրիստոնէու-

թիւնը զօրացնել, որպէսզի մոգպետն ու մոգերը չտիրապետէին եկեղեցու եւ կաթողիկոսութեան կալուածներին ու եկամուտներին, որոնք փոքր չէին: Պէտք էր դէմն առնել նաեւ ասորի եպիսկոպոսների ոտնձգութիւնների:

Ասորերէն լեզուն մեծ արգելք էր հանդիսանում քրիստոնէական ուսման ծաւալուելուն ժողովրդական մասսաների մէջ, միաժամանակ եւ դրանով իշխում էր ասորական ազդեցութիւնը:

Ե՛ւ մոգութեան, ե՛ւ ասորի եպիսկոպոսների դէմ մաքառումը աջողութեամբ գլուխ բերելու համար՝ զգացւում է անհրաժեշտութիւն հայերէն գիր ու գրականութեան եւ հայերէն լեզուով դպրոցի ու ժամասացութեան եկեղեցիներում: Այս երէք էին գտնում հայ եկեղեցական դասի շահերը պաշտպանելու համար Պարսից բաժնի Հայաստանում:

Նոյն վիճակն ու պահանջը հայ հոգեւորականութեան համար կար եւ հռոմէական կամ, ինչպէս ասում էին, յունական բաժնի Հայաստանում: Այստեղ էլ իշխում էր յունարէն լեզուն, եւ կային նոյն եպիսկոպոսների ոտնձգութիւնները: Բացի այդ՝ վտանգ էր սպառնում, որ Հայոց եկեղեցին էլ, քաղաքական բաժանման հետեւանքով, պառակտուէր երկուսի: Այստեղ էլ, ուրեմն, յունական ազդեցութիւնը չլատելու համար, հարկաւոր էր առաջ բերել հայերէն լեզուով գրականութիւն ու դպրոց եւ հայերէն ժամասացութիւն եւ դրանով պահպանել Հայոց եկեղեցու միութիւնը մէկ ընդհանուր կաթողիկոսական իշխանութեան ներքոյ:

Արշակունի թագաւորական հարստութիւնը, որ 66 թուականից ի վեր տիրում էր ամբողջ Մեծ Հայաստանին, արդէն կորցրել էր իր իշխանութիւնն Արեւմտեան Հայաստանում: Արեւելքում էլ նրա գահը շատ խախուտ էր: Զկար այլեւս հռոմէական պաշտպանութիւնն ընդդէմ պարսիկների: Արշակունի արքան չէր կարող յենուել հայ նախարարական տոհմերի վրայ, որոնք, բացի մի քանիսից, ընդհանրապէս խաղալիք էին արքայից արքաների ձեռին: Ներքին ուժերից մնում էր եկեղեցին, կաթողիկոսութիւնը, իբրեւ մի յենարան արքայական տան համար: Սրա շահերն էլ, ուրեմն, պահանջում էին զօրացնել քրիստոնէութիւնն ու եկեղեցին: Արքունի տան եւ կաթողիկոսութեան շահերն այս դէպքում զուգադիպում էին միմեանց: Ուստի եւ Մաշտոցի հետ գործել է ոչ միայն Սահակ կաթողիկոսը, Գրիգոր Լուսաւորչի հայրապետական տոհմի վերջին արու ժառանգ-

գը· սրանց գործին մեծ զօրավիգ է հանդիսացել նաեւ վռամշապուհ թագաւորը թէ՛ խորհրդով եւ թէ՛ հոգալով պահանջուած ծախքերը:

Բայց Մաշտոցն առաջինն է եղել այդ գործի մէջ· ժամանակակիցներն առաջին պատիւը նրան են տալիս, եւ իրաւամբ:

Նա յօրինում է գրեր, թարգմանութիւններ անում, բանում է երկրի զանազան կողմերում դպրոցներ, ուսուցչութիւն անում, վանքեր հաստատում, նառեր ու թղթեր գրում: Նա հոգում է նաեւ վրթացիների եւ աղուանների համար, որոնք կապուած էին հայերի հետ եւ նոյն վիճակի մէջ էին, ինչ որ հայերը: Նա էրիստոնէութիւն է քարոզում երկրի հեթանոսական շրջաններում: Անցնում է Արեւմտեան Հայաստան, ուր արգելքի հանդիպելով իր գործունէութեան համար՝ ստիպուած է լինում նոյնիսկ կոստանդնուպոլիս գնալ, ներկայանալ կայսրին եւ համոզել նրան, որ թոյլ տայ հայերէն լեզուն գործադրել հայոց եկեղեցիներում ու դպրոցներում:

Զարմանալի մի եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս Մաշտոցը· կարճ ժամանակում հսկայական կուլտուրական գործ է կատարում նա իր ընկերներով, եւ որ գլխաւորն է՝ նրանք պատրաստում են իրենց համար գործակիցներ ու իրենց գործը շարունակող աշակերտներ: Ուստի չնայած իրենց ժամանակի եւ հետագայի հասարակական ու քաղաքական դժուարին պայմաններին՝ այդ գործը յարատեւում ու զարգանում է դարէ դար: Առաջ է գալիս հայերէն գրական լեզուով հայկական գրականութիւնը, որ զանազան այլազգի իշխանութիւնների ներքակայ ժողովրդի համար դառնում է ընդհանուր համազգային միութեան ամենամեծ պատմական–կուլտուրական գործօնը:

Այս մեծ իրողութեան սկզբնական պատմութեան ամենահաւաստի աղբիւրն է Կորիւն վարդապետի երկը, որի թարգմանութիւնը, ծանօթութիւններով հանդերձ, տրւում է այստեղ:

2· Կորիւն վարդապետը Մաշտոցի աշակերտն է: Նա իր ուսուցչի մահից յետոյ մտածում է գրել հայոց գրի ծագման մասին եւ դրա յօրինողի կենսագրութիւնը: Այդ գործը դեռ չսկսած՝ նա, ինչպէս իր գրքի առաջաբանից իմանում ենք, այդ անելու համար հրաման է ստանում Մաշտոցի աշակերտ Յովսէփից, որ կաթողիկոսական տեղապահն էր, այլ եւ այդ մասին բաջալերութիւն՝ Մաշտոցի ուրիշ

աշակերտներից: Ինչպես երեւում է, նրանցից շատերը միաժամանակ մտածել են գրով անմահացնել իրենց «վարդապետի», այսինքն ուսուցչի կատարած մեծ գործի պատմութիւնը եւ իրենց ուսուցչին:

Եւ Կորիւնը գրում է մի գովաբանական կենսագրութիւն, որի մէջ չի մոռանում եւ ուրիշներին, որոնք աշխատել են հայերէն դպրոութեան համար: Նրա գրուածքը հայկական տառերով յօրինուած առաջին ինքնուրոյն պատմական երկն է, որ իրաւամբ նուիրուած է հէնց այդ տառերի գիւտին եւ դրանց սկզբնահօրը:

Կորիւնի այդ երկի գրութեան նիշտ տարեթիւը մեզ յայտնի չէ: Դա յօրինուած է 443—451 թուականների մէջ: Կաթողիկոսական տեղապահ Յովսէփը, որ հրամայել է Կորիւնին գրել Մաշտոցի կենսագրութիւնը, Աւարայրի ճակատամարտից (451 թ.) ի՛չ յետոյ բռնուել, տարուել է Պարսկաստան եւ այնտեղ ճահատակուել, այսինքն իր հրնստոնէութեան համար սպանուել: Դարձեալ՝ եթէ 451 թուականից յետոյ գրուած լինէր, դժուար թէ Կորիւնն այնքան մեծ գովեստներ տար Վասակ Սիւնի «ուխտադրուժ» իշխանին, որ Վարդանանց պատերազմի ժամանակ անցել էր պարսիկների կողմը: Նա չէր անուանիլ նրան «ճաչն Սիսականն Վասակ. այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» — ճաչ Սիսականն Վասակը խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածային իմաստութեան շնորհով օժտուած մի մարդ (Հատ. ԺԴ): Միւս կողմից այդ երկը գրուած է Մաշտոցի մահից ոչ անմիջապէս յետոյ, քանի որ Սահակի համար ասում է. «Ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան զնոյն յիշատակն տօնախմբեն» — տարէց տարի հաւաքուելով նոյն ամսին՝ նրա յիշատակի տօնախմբութիւնն են անում (Հատ. ԻԴ.): Մի երեք–չորս տարի պէտք է այդ յիշատակը կատարուած լինէր Սահակի մահից (439 թ.) յետոյ, որպէսզի այդպէս գրել կարելի լինէր, ուրեմն 439+4=443 թ.: Ապա՝ նա գրում է, թէ Մաշտոցի մահից երեք տարի յետոյ, ուրեմն 440+3=443 թ., վահան Ամատունին տաճար է կանգնել տուել Մաշտոցի գերեզմանի վրայ: Հետեւաբար, եթէ Կորիւնն առաջ էլ սկսած լինէր իր աշխատութիւնը, նա այդ վերջացրել է ոչ վաղ քան 443 թուականը:

Այս է Կորիւնի երկի գրութեան ստոյգ ժամանակը: Հարկ եմ համարում յիշել, որ 19րդ դարի վերջերից ի վեր եղան բանասէրներ, որոնք մի ընդհանուր մարմաջով բռնուած՝ սկսեցին մեր մատենագիրների ժամանակն իջեցնել դէսը դէպի մեզ, յանախ առանց որեւէ

հիմքի, լոկ խօսքով: Այդպիսիների գրչից գերծ չի մնացել եւ Կորիւնը, ինչպէս կարծում եմ, երբեմն Կորիւնի բնագիրը լաւ չհասկանալուց (տես ծան. 165, 166):

3. Կորիւնի մասին մի քանի կենսագրական տեղեկութիւններ միայն ունենք հէնց իր գրքոյկից: Նա, ինչպէս ինքը գրում է առաջաբանի մէջ, բախտ է ունեցել լինելու Մաշտոցի մասնաւոր աշակերտը — իր աշակերտակիցների մէջ եղել է կրտսերագոյնը:

Գրքի վերջաբանի մէջ (Հատ. ԻԸ.) նա յայտնում է, թէ ինքն ականատես է եղել իր պատմածին, ընթերակայ է եղել նրանց, Մաշտոցի ու Սահակի գործերին, այլ եւ եղել է «արբանեակ», այսինքն փոքրաւոր գործակից: Գրել է ոչ միայն իր խմացածները, այլ եւ նշանաւոր գիտակ անձերից քաղելով:

Նա պատմուածքի ընթացքում էլ երկու անգամ յիշում է իրեն: Երբ Հայաստանի զանազան կողմերից վաղարշապատում հաւաքուած աշակերտներն ուսման մէջ կատարեալ են դառնում, այն ժամանակ նրանց խումբ խումբ ուղարկում են գաւառները սովորեցնելու: Կորիւնն իրեն էլ մէկն է ասում այդ ուղարկուածներից՝ այսպէս գրելով. «Սկսան... գումարել ի կողմանս, ի գաւառս... զհասուցելոցս ի կատարումն գիտութեան [զդասս], բաւականս եւ առ ի զայլսն զեղուցանելոյ» — սկսեցին գիտութեան մէջ կատարելութեան հասածներիս (բառացի՝ հասցուածներիս) խմբերն ուղարկել զանազան կողմեր, գաւառները՝ կարող համարելով՝ ուրիշներին էլ սովորեցնելու (Հատ. ԺԲ):

Մի ուրիշ տեղ (Հատ. ԺԹ) նա պատմում է, թէ մի քանի «եղբայրներ» գնում են Կոստանդնուպոլիս: Նրանցից առաջինն էր Ղեւոնդէս, երկրորդն ինքը Կորիւնը, որոնք մօտենում, յարում են եզնիկին, իբրեւ ընտանեգոյն սննդակցի,— «մատուցեալ յարէին յեզնիկն, իբրեւ առ ընտանեգոյն սննդակից»: Նրանք Կոստանդնուպոլսում հոգեւոր պիտոյքի խնդիրը կատարելուց, այսինքն թարգմանութիւններ անելուց յետոյ՝ վերադառնում են՝ հետները բերելով ձեռագիրներ, որոնց թւում եւ Եփեսոսի ժողովի կանոնները: Այդ ժողովը տեղի է ունեցել 431 թ.: Ուրեմն Կորիւնն իր ընկերների հետ վերադարձել է ոչ վաղ քան 431 թ.:

Եզնիկը, ինչպէս ինքը Կորիւնը գրում է, Այրարատեան գաւառի կողբ գիւղից էր. նա շատ յայտնի եզնիկ կողբացին է: Որ նա եղել է

Կորիւնի «ընտանեգոյն սննդակիցը», պէտք է ընդունել, որ Կորիւնը մանկութեան ժամանակ սնուած, մեծացած է եղել եզնիկի հետ: Այսպէս եւ Ղազար Փարպեցին իրեն անուանում է վահան Մամիկոնեանի «սննդակից», զի վերջինիս մայրը նրան իր որդու հետ «սնուցել» է, այսինքն մեծացրել, կրթել է:

Էլ ուրիշ կենսագրական տեղեկութիւններ չունենք մեր այս հերոսի մասին*): Հետագայում նրան միայն գովում են անուանելով՝ «այրն ցանկալի Կորիւն», «այրն հոգեւոր Կորիւն», «երանելի այրն Կորիւն», «երանելին Կորիւն», «սքանչելի այրն Կորիւն» եւ նոյնիսկ «սուրբն Կորիւն»: Այս գովեստները ցոյց են տալիս որ նա բարի համբաւ է թողել իր մասին:

Կորիւնն իբրեւ «վարդապետ»՝ անշուշտ պարապել է ուսուցչութեամբ ու քարոզչութեամբ, ինչպէս իր ուսուցիչ Մաշտոցը· նա պարապել է նաեւ թարգմանութիւններ անելով: Գուցէ նա գրեր է գրել· բայց ոչ մի երկ յայտնի չէ նրա անունով բացի Մաշտոցի «վարքի եւ մահուան պատմութիւնից»: Ձեռագիրների մէջ կայ հետեւեալը· «Ապաշխարող կարգել եւ արձակել ի մեծի հինգշաբաթին՝ երանելոյն կիւրղի Երուսաղեմացւոյ գրեալ··· եւ Արձան ս· Կորիւն թարգմանիչք բերին ի Հայս»: Այս երկի թարգմանութիւնը վերագրում են Կորիւնին: Գործածուած բառերի ու դարձուածների վրայ հիմնուելով՝ Նորայր Բիւզանդացին նրանն է համարում եւ ուրիշ թարգմանութիւններ**)· բայց այդ երկբայելի է, մասամբ եւ բոլորովին մերժելի:

4· Ի՞նչ արժէք ունի Կորիւնի այդ փոքր գիրքը:

Այս տիպի որեւէ գրուածք գնահատելիս՝ ամենից առաջ պէտք է նկատի ունենալ հեղինակի ծրագիրը, այսինքն՝ թէ ինչ է ուզեցել գրել, եւ գրելու ժամանակը, դարը: Արդ, Կորիւնը հէնց սկզբից յայտնում է, թէ ինքը մտածել է գրել հայկական «գրի մասին, թէ երբ եւ որ ժամանակ բաշխուեց եւ ինչպիսի մարդու ձեռով տրուեց այդ աստուածային նոր շնորհը, այլ եւ այդ մարդու լուսաւոր վարդապե-

---

*) *Տես ծան. 102· Կորիւնն իբր եպիսկոպոս է եղել Վրաստանում:*

**) *Տես Նորայր Բիւզանդացի՝ «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք՝ գիրք Մակարայեցւոց, Եւթող Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ», Տփխիս, 1900, էջ 6 հա.:*

տութեան (ուսման) եւ հրեշտականման առաքինի կրօնաւորութեան մասին»: Մի անգամ որ այս է եղել նրա ծրագիրը եւ որ նա հայոց պատմութիւն չի գրել, բնական է, որ այժմ մենք նրանից ուրիշ բաներ պահանջել չենք կարող: Նա շատ լաւ գործադրել է այն, ինչ որ ծրագրել է:

Ծիծաղելի է, երբ 19րդ դարի վերջում Եւրոպայում նստող մէկը ծաղրում է մեր այս հեղինակին գրելով, թէ Կորիւնը «առաւել քան զկար իւր կը համարի պատմել զվարս Մաշտոցի եւ կը վուրթայ խնդրել ի աստարութիւն զաղօթս ուսումնակցացն, որպէս թէ քանի մի էջ բան գրելն ստուգիւ մարդկային կարողութենէ վեր ըլլար եւ աստուածեղէն շնորհաց օգնականութեան կարօտ»*): Հնումն այդպէս մտածում եւ վարւում էին եւ ուրիշները, ինչպէս Ղազար Փարպեցին: Դա ժամանակի կրօնական ոգու սրտայայտութիւններից մէկն էր: Միւս կողմից՝ դա նաեւ մի համեստութեան խօսք է Մաշտոցի աւագ եւ մեծ դիրք ունեցող աշակերտի, կաթողիկոսական տեղակալ Յովսէփի նկատմամբ:

Բայց որ նա իրեն դիմող ընկերների աղօթքն էլ խնդրում է ասելով, «զի կամակարագոյնս եւ ուղղագոյնս նաւիցեմք գհամատարած ալեօքն վարդապետական ծովուն»— որպէսզի աջողութեամբ եւ *ուղիղ* նաւեմք վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով, դա լոկ մի քաղաքավարական խօսք չէ, կամ լոկ մի արտայայտութիւն այն ժամանակի կրօնական ոգու, ըստ որի ամէն բան կատարւում է աստուածային շնորհքով: Կայ եւ մի ուրիշ կողմ:

Պէտք է իմանալ, որ Կորիւնն իր ընկերների հետ սովորել եւ աշխատել է Կ. Պոլսում այն ժամանակ, երբ յուզւում էին աստուածաբանական մեծ վէճերը եւ տեղի էր ունենում Եփեսոսի ժողովը Նեստորականութեան դէմ: Նա իր ընկերների հետ Հայաստան բերել է այդ եւ Նիկիոյ ժողովների կանոնները· Նա ինքը պատմում է, որ Սահակն ու Մաշտոցն էլ մաքառել են Հայաստան թափանցած աղանդների դէմ, ինչպէս՝ բարբարիանոս կոչուած աղանդի, այլ եւ Նեստորի ուսուցիչ Թէոդորոս Մոպսուեստացու ուսման դէմ: Այսպիսի դրութեան ժամանակ նա՝ իբրեւ մի բարեպաշտ մարդ՝ աստուածային շնորհքին պիտի դիմէր՝ «վարդապետական ծովի *համատարած ալիքների վրայով ուղիղ նաւելու*» համար, այսինքն դաւանաբանական սայթաքում չանելու:

---

*) Նոյն, էջ 7:

5· Առաջին կարճ ու անհրաժեշտ առաջաբանից յետոյ Մաշտոցի վարքագիրը գրում է մի երկրորդ ձիգ ու երկայն նախաբան (Հատ· Բ)՝ պատասխանելու համար այս հարցին, թէ արդեօք թոյլատրելի՞ է «կատարեալ» մարդկանց վարքը գրել, թէ՞ ոչ,— «իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանց կատարելոց»:

Աստուածաշնչից չափազանց շատ ցիտատներ բերելով՝ նա ցոյց է տալիս, որ այդ ոչ միայն թոյլատրելի է, այլ եւ հարկաւոր է՝ ուրիշներին իբրեւ օրինակ ծառայելու համար: Եւ վերջը եզրակացնում է, թէ ինքն եւս կարող է համարձակուել գրի առնելու «արդար մարդու», այսինքն Մաշտոցի վարքը:

Երկրորդ անգամ մեր այս հեղինակն Աստուածաշնչից շատ ցիտատներ է բերում այն ժամանակ, երբ պատմում է, թէ սկսում են «թարգմանել, գրել եւ ուսուցանել»: Նա իր բերած օրինակներով ցոյց է տալիս, որ «երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ»— մեր երանելի հայրերն այդ անելու համարձակութիւն, թոյլտուութիւն են առել ոչ միայն մարգարէներից, այլ եւ նոյն իսկ Յիսուսից (Հատ· ԺԱ):

Եւ վերջապէս երրորդ անգամ նա վկայութիւններ է բերում Սուրբ Գրից, երբ վերջում նորից խօսում է Մաշտոցի կրօնաւորական, միաբնակեցական կեանքի եւ քարոզչութեան մասին: Նա այդ անում է իր ուսուցչին մեծացնելու համար եւ ցոյց տալու, որ նա մեծ հետեւող է եղել ոչ միայն առաքեալներին եւ ուրիշներին, այլեւ նոյն իսկ Յիսուսին (Հատ· ԻԲ):

Ինչի՞ համար է այդ ամէնը:

Ինձադատել, թէ յիշուած երկրորդ առաջաբանը շատ երկայն է եւ թէ դա իբր աւելորդ է, կամ եղել է «զարմանալի երկիւղածութեամբ», եւ թէ զուր են Աստուածաշնչից բերուած բազմաթիւ ցիտատները, այդ նշանակում է չհասկանալ կորիւնին եւ նրա ժամանակը:

Նա, ինչպէս եւ Մաշտոցի միւս աշակերտները, որոնք մտածում էին իրենց ուսուցչի վարքը գրելու մասին, շատ լաւ գիտէին, որ թոյլատրուած է այդ անել: Նրանք, որ վաղուց թարգմանութիւններով էին զբաղուած, շատ լաւ եւ այն գիտէին, որ թոյլատրուած է Ս· Գիրքը թարգմանել եւ գրել հայերէն: Նրանք ծանօթ էին եւ Մաշտոցի կրօնաւորական կեանքին, գիտէին այն ցիտատները, որ կորիւնը բերում է: Այդ ամէնը նրանց համար չէր, ոչ էլ մեզ հա-

մար է, մեր ժամանակի մարդկանց: Այլ այդ ուղղուած է Մաշտոցի եւ նրա աշակերտների հակառակորդներին:

Մաշտոցն իր ճգնաւորական եւ «առաքելական» մեծ հեղինակութեամբ կարող էր հակառակորդներին զսպել եւ զսպել է· «Իւրով աւետարանական եւ ողջապատում գնացիւքն առաջի թագաւորաց եւ իշխանաց եւ ամենայն հեթանոսաց եւ *անընդդիմակաց ի հակառակորդաց*՝ զամենափրկչին *Յիսուսի* անուն կրեաց յանձին» (Հատ· ԻԱ),— իր աւետարանական եւ ողջապատում վարքով՝ նա ամենափրկիչ Յիսուսի անունը կրեց իր անձի վրայ թագաւորների եւ իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ եւ առանց ընդդիմութեան հակառակորդների կողմից: Բայց այդ հակառակորդներն արդէն գըլուխ էին բարձրացրել, եւ նրանց կռիւն ընդդէմ Սահակի եւ Մաշտոցի ջանքերով առաջ եկած նոր սերնդի՝ շատ զգալի էր եղել, եւ այդպէս նոյն իսկ մինչեւ 5րդ դարի վերջերում:

Այս տեսակէտով մօտենալով խնդրին՝ Կորիւնի երկրորդ առաջաբանը եւ նրա մէջբերած բազմաթիւ ցիտատները մեզ համար էլ կարեւորութիւն են ստանում այն ժամանակի ոգին ու դրութիւնը պատկերացնելու համար: Ժամանակն էր այդ պահանջել:

Այդ բոլորովին նոր գործը, Մաշտոցի կենսագրութիւնը, ըստ ինքեան էլ կարող էր բամբասանքի դուռ բանալ ոչ միայն հակառակորդների, այլ եւ ընդհանրապէս տգէտների համար, քանի որ ամէն նորութիւն անհասկացողների համար անընդունելի է, ո՞ւր մնաց Մաշտոցի կենսագրութիւնը հայերի մէջ 440ական թուականներին:

Այդ ժամանակներում չկար այլեւս Հայոց թագաւորութիւնը: Պարսկական իշխանութեան հովանաւորութեամբ չափազանց զօրացած էր ասորի հոգեւորականութեան ազդեցութիւնը Հայաստանում: 430ական թուականներին աթոռից զրկուած էր Սահակ կաթողիկոսը, եւ նոյն իսկ ասորի կաթողիկոսներ էին իշխում: Սահակի ու Մաշտոցի եւ նրանց աշակերտների թարգմանչական գործունէութիւնն ուղղուած էր հէնց այդ ասորական ազդեցութեան, ասորերէն լեզուի դէմ: Այս պարագաներում հասկանալի է, թէ ինչո՞ւ Կորիւնն այնքան երկայն եւ Ս· Գրքից ցիտատներով լի առաջաբան է գրում՝ ցոյց տալու համար, որ թոյլատրելի է գրել Մաշտոցի վարքը, եւ կամ աւելի ուշադրութիւն է դարձնում Մաշտոցի միայնակեցութեան եւ առաքելական գործունէութեանը, որ ճանաչուած էր նաեւ ասորոց եպիսկոպոսներից, ինչպէս նաեւ Բիւզանդացոց կողմից, որ եւ ու-

բանալ չէին կարող հակառակորդները: Այսպէս ուրեմն, որ նա Մաշտոցին իբրեւ կրօնաւորի բարձրացնում է, այդ միայն իրականութիւնից եւ աշակերտական ակնածութիւնից չի քխում: Նա դրանով ջանացել է լռեցնել հակառակորդներին:

Այս վերջիններին չզայրացնելու համար՝ նա չի շօշափում ժամանակի բաղաքական, եկեղեցական գործերը. նա մի խօսք անգամ չի ասում այն մասին, որ Հայոց եկեղեցում լեզուն եղել է ասորերէն. եւ դպրոցներում սովորում էին ասորերէն, եւ որ շնորհիւ Սահակի ու Մաշտոցի՝ այդ ասորերէնին փոխարինում է հայերէնը: Առհասարակ զգուշութեամբ «ասորի» անունն էլ նա չի գործածում, բացի երկու դէպքից: Մէկն այն է, թէ ասորի Դանիէլ եպիսկոպոսի մօտ գտնուել են հայերէն լեզուի համար ալփաբետներ,— կարծես Հայաստանի ասորի հոգեւորականներին ցոյց տալու համար, թէ Մաշտոցից առաջ մի ասորի եպիսկոպոս է մտածել հայերէն դպրութեան մասին: Միւս դէպքն էլ այն է, թէ Եդեսիայի եւ Ամիդի ասորի եպիսկոպոսները մեծ պատուով ընդունում են Մաշտոցին ու նրա մարդկանց եւ հոգում նրանց համար, եւ թէ՝ նրանք ուրախանում են հայերէն նշանագրերի եւ դպրութեան համար: Այս էլ, կարծես ասելու համար, որ եթէ ասորոց այդ հռչակաւոր եպիսկոպոսները, Ռաբուլասն ու Ակակիոսը, այդ վերաբերմունքն են ցոյց տուել հայ դպրութեան նկատմամբ, Հայաստանի ասորի հոգեւորականները էլ պիտի նոյնպէս վարուեն:

Եւ վերջապէս, ժամանակի պարագաներով է բացատրւում եւ այն, թէ ինչու Կորիւնը՝ 440ական թուականներին, ուրեմն Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնից առնուազն երեսուն հինգ տարի յետոյ, այդ գրքից բերած ցիտատներով ապացուցում է, որ Մաշտոցն ու Սահակն իրաւունք են ունեցել Ս. Գիրքը թարգմանելու, եւ թէ նրանք այդ արել են՝ «հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւն»,— աչքի առաջ ունենալով տիրոջ (Աստուծու) տուած բարձր հրամանները: — Կորիւնը ստիպուած է եղել այդ անելու:

6. Թէ իմ այս տեսակէտը ճիշտ է, այդ երեւում է նոյն իսկ Կորիւնի հետեւեալ խօսքերից, որոնց վրայ ուշադրութիւն չեն դարձրել: Նա իր գրքի վերջաբանի մէջ (Հատ. ԻԸ) յայտնում է, թէ Մաշտոցի կենսագրութիւնը համառօտ է գրել. «զյաճախագոյնն թող-

եալ՝ ... զհամպուօտս կարզեցաք»,— շատը թողնելով՝ այս համպուօտը գրեցինք: Եւ իսկոյն նա իր վարմունքը պատճառաբանում է սյսպէս· «Ինձզի չէաք իսկ հանդուրժողք՝ զամենայն արարեալսն կտակաւ նշանակել զիւրաքանչիւրն» [Սուտ–Կորիւն՝ «քանզի եւ ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն գրով նշանակել զիւրաքանչիւրն»], այլ ի դիւրագոյնս եւ ի հեշտագոյնս — յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք»:

Ի՞նչ է ասում Կորիւնն այս խօսքով:

«Հանդուրժել» բառը նշանակում է «դիմանալ»: Բերենք երկու օրինակ դրա համար: Ղազար Փարպեցին պատմում է, թէ Սիւնիքի հզօր իշխան Վասակը թշնամանալով իր փեսայ Վարազվաղանի հետ՝ ուզում էր նրան սպանել: Այդ իմանում է Վարազվաղանը, «եւ զի ոչ կարէր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն... փախուցեալ յերկիրն Պարսից»,— եւ որովհետեւ չէր կարող դիմանալ իր աներն սաստիկ բռնութեանը՝ ուստի փախաւ Պարսից երկիրը: Բերենք մի ուրիշ բոլորովին համապատասխան կազմութեամբ օրինակ: Մովսէս Խորենացին (Բ· լե) պատմում է, թէ Աբգար թագաւորի կին Հեղինէն, որ քրիստոնեայ էր, «ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտից, այլ չոգաւ յԵրուսաղէմ», չդիմացաւ կռապաշտների մէջ բնակուելուն, [ուստի նրանց մէջ չբնակուեց], այլ գնաց Երուսաղէմ»: Այսպէս եւ Կորիւնը վերեւում բերուած խօսքի մէջ ասում է· «որովհետեւ իսկապէս չէինք դիմանալ նրանց իւրաքանչիւրի բոլոր արածները գրելուն, [ուստի գրեցինք ոչ բոլորը], այլ ապաւինեցինք այս աւելի հեշտ ու դիւրինին— առաքելականին», բառացի թարգմանութեամբ՝ «մեզ պատսպարեցինք=պատսպարուեցինք այս աւելի հեշտ ու դիւրինով — առաքելականով»:

Հիմա հարց է: Ինչո՞ւ Հեղինէն չդիմացաւ կռապաշտների մէջ բնակուելուն:— Անշուշտ, նրա համար, որ նրանց մէջ բնակուելը որեւէ նեղութիւն էր պատճառում նրան: Այսպէս եւ երբ Կորիւնն ասում է, թէ «չէինք դիմանալ նրանց [Սահակի եւ Մաշտոցի] բոլոր արածները գրելուն», անշուշտ նրա համար, որ այդ բոլորը գրելը նրան որեւէ նեղութիւն կը պատճառէր: Կը նշանակէ՝ Կորիւնն զգուշացել է, չասենք թէ վախեցել է, Սահակի ու Մաշտոցի բոլոր արածները գրելու: Եւ ոչ միայն այդ: Նա պաշտպանուելու համար դիմել է «առաքելականին», այսինքն Մաշտոցի «առաքելական» գործունէութեանը, քրիստոնէութիւն քարոզելուն: Այդ շատ պարզ

երեւում է նաեւ նրա գործածած «*պատասպարուել*» բառից, որ նշանակում է՝ *ապաւինել*, *ապաստանել*, *պաշտպանուել* մի բանից մի բանով: Կորիւնն, ուրեմն, պատսպարուել է իր բերած բազմաթիւ ցիտատների յետեւում:

Մի անգամ որ նա թողնում է շատ բան, ինչպէս ինքն ասում է, սրբերի «բազմախոտոռն արգասիքները» — վաստակները, բնականաբար նպատակ է դնում իր գրած «կարեւորագոյն հանգամանքները» մանրամասն, «մանրակրկիտ» պատմելու:

7· Կորիւնն անշուշտ պատրաստուած չի եղել պատմութիւն կամ կենսագրութիւն գրելու: Նրա ուսումը լոկ կրօնական է եղել: Մի մարդ, որ պարապել է զանազան կրօնական գրքերի թարգմանութեամբ, ունի լաւ ծանօթութիւն Ս· Գրքի, որից դէնը չի անցնում իր հայեացքով: Բայց չնայելով դրան, չնայելով նրա լուսաւորներին, կարելի չէ ասել, թէ նրա այդ փոքր գրքոյկը, ինչպէս գրում են, «իբրեւ պատմական գրուածք չունի մեծ արժէք»: Ընդհակառակը: Դա հայ պատմական կեանքի նոր դարաշրջանի սկզբնաւորութեան հետ ծանօթանալու նկատմամբ՝ ունեցել է եւ ունի շատ մեծ արժէք: Բաւական է միայն ասել, որ եթէ չլիներ այդ գրքոյկը, մենք չափազանց քիչ բան, այն էլ կասկածելի, կ'իմանայինք այնպիսի կարեւոր եղելութեան մասին, ինչպիսին է հայ գրի ու գրականութեան սկզբնաւորութիւնը: Հետագայ գրողները Կորիւնից են օգտւում:

Նա բաւարար չափով տեղեկութիւններ է տալիս իր *աւուշադրած անդրի* վերաբերմամբ եւ սովորաբար շատ որոշ կերպով: Նրա գրածով մենք պատկերացնում ենք մի խելօք կերպով ծրագրած ու կատարած գործունէութիւն, իսկ գլխաւոր գործիչը, Մաշտոցը, հանդէս է գալիս իբրեւ անսպառ եռանդի տէր, շնորհալի եւ ազդեցիկ տղամարդ, որ մտածում եւ հոգում է ամբողջ հայութեան, այլ եւ հարեւան ժողովուրդների համար· որ շարունակ շրջում է եւ իր տեսչական այցելութիւններով հաստատուն հիմքերի վրայ դնում իր սկսած գործը:

Անշուշտ, ոչ միայն Կորիւնը, այլ եւ ամէն մի հին հեղինակ չի կարող բաւարարել հետագայի հարցասէր մարդկանց պահանջներին, որոնք յաճախ ծագել են կամ Կորիւնի գրածը չհասկանալուց, կամ որեւէ ուրիշ թիւրիմացութիւնից: Այդպէս են հետեւեալները· Մաշտոցը քանի՞ նշանագիր է յօրինել, «երեսուն եւ վե՞ց, թէ՞ տաս-

նուչորս, թէ՞ եօթն»: Արդեօք հայերը էրիստոնէութիւնից առաջ չե՞ն ունեցել գրի գործածութիւն: Արդեօք «Դանիէլեան ալիւաբետը» չի՞ եղել «հայոց հին այբուբենը», որ «մոռացուել էր՝ տեղի տալով այլոց դպրութեանց, այսինքն այլոց գրերին, եւ ապա կրկին յայտնուել»: Ի՞նչ են եղել «Դանիէլեան» նշանագրերը, եւ Մաշտոցն ինչո՞վ է լրացրել դրանք*): —Կարծես, Կորիւնը պարտաւոր էր գուշակել, թէ դարեր յետոյ ինչեր կը հարցնեն, եւ դրանց պատասխանը պիտի տար առաջուց:

Կորիւնն առանձին ուշադրութիւն է դարձրել նաեւ ժամանակագրութեանը. նա յիշել է ուրիշ աղբիւրներից ստուգուող ճիշտ թուականներ, հարկաւ, թագաւորների տարիներով, բանի որ այն ժամանակ չկար թուականութեան կիրառութիւն: Նրա յիշած, երբեմն երկրորդ եւ երրորդ անգամ մի ուրիշ ձեւով կրկնած թուականները վերաբերում են հայերէն նշանագրերին, Մաշտոցի կրօնաւորութեանը եւ Սահակի ու Մաշտոցի մահուանը: Այստեղ էլ ուրեմն, նա հետեւում է իր առաջադրած ծրագրին: Անշուշտ, լաւ կը լինէր, որ նա յայտնած լինէր Մաշտոցի գործունէութեան մի բանի ուրիշ թուականներ եւս, երէ միայն գիտէր:

Կանգ առնենք եւ հետեւեալի վրայ: Ասում են, թէ Կորիւնն իրը չի յայտնել, թէ Մաշտոցն «ուր է հնարել իր նշանագրերը»: Կորիւնն այդ մասին գրել է, ինչպէս կարելի է տեսնել իր աշխատութեան ե. հատուածից: Դա Եդեսիա քաղաքն է, բայց քաղաքի անունը ձեռագիրներից դուրս է ընկել:

8. Եւ նրա աշխատութիւնն ընդհանրապէս, մանաւանդ վերջի մասում, շատ աղճատուած է արտագրողների ձեռով: Դրան յանախ ուշադրութիւն չեն դարձրել այդ գրքոյկից օգտուողները:

Վերջիններիս համար մի դժուարութեան հանգամանք էլ եղել է նաեւ Կորիւնի գրութեան ոճը: Նա յօրինում է շատ նոռում, աւելորդ զարդերով ու կրկնութիւններով. ինչպէս ինքն ասում է, «ծաղկեցրնում է»: Նրա գրածը յանախ մութ է նաեւ անկանոն լեզուի պատճառով. պակասում են անհրաժեշտ բառեր, կամ շատ կան ամ-

---

*) *Այս խնդիրների, ինչպէս եւ չաւերի մասին, տողերիս դրողի տեսակէտները պարզուած են նրա մի ուրիշ աշխատութեան մէջ՝ «Մեսրոպ Մաշտոց եւ հայ գրի ու գրականութեան սկիզբը», որ դեռ ձեռագիր է:*

բողջ նախադասութիւնների փոխարինող իւրայատուկ նորահնար բարդ բառեր, այլեւ բառերի կիրառութիւն ոչ մեզ ծանօթ սովորական նշանակութեամբ: Վրան ուելացրէք եւ բնագրի մասամբ աղճատուած լինելը, եւ հասկանալի կը լինի, թէ ինչո՛ւ այդ փոքրիկ գիրքը շատերի համար դժուար հասկանալի է եղել:

Դժուար մատչելի է եղել այդ գրուածքը նաեւ միջին դարերում. ուստի առաջ է եկել մի նոր խմբագրութիւն, կորիւնի գրքից բաղուածօրէն կազմուած, հետը միացրած նաեւ Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւնից» տեղեկութիւններ, նոյնիսկ փոխանակ Կորիւնի հաղորդումների: Դա յայտնի է *Սուտ-Կորիւն* անունով: Դրա վերնագիրն է. «Ի յիշատակի պատմութեան վարուց երանելոյ սուրբ վարդապետին Մեսրովբայ, զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեանն»:

9. Մի բանի խօսք էլ իմ այս աշխատութեանս մասին, որ կատարել եմ Հայպետհրատի յանձնարարութեամբ Մաշտոցի մահուան 1500ամեակի առթիւ:

Թարգմանութիւնն սկսելուց առաջ հարկաւոր էր բաղդատել Կորիւնի ձեռագիրները, որ կան Մատենադարանում: Դա գուցէ ուղղումներ մտցնէր բնագրի մէջ եւ պարզէր մի բանի մութ տեղեր: Ինձ համար անհնարին էր այդ անել: Մի բանի տեղ առաջարկեցի այդ գործը կատարել, բայց այդ ուշանում էր. իսկ թարգմանութիւնը պէտք էր տրուած ժամկէտին վերջացնել: Ուստի բաւականացայ Վենետկի 1894 թ. տպագրութեամբ, որ արտատպուած է Վենետկի 1834 թ. հրատարակութիւնից. «Պատմութիւն վարուց եւ մահուանէ առն երանելոյ սրբոյն Մեսրովպայ վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ, յաշակերտէ նորին»: Նոյնն արտատպուած է Թիֆլիս 1913 թ.:

Ինչպէս կարելի է նկատել, գրքի վերնագրի մէջ է *Մեսրովպ* անունը, իսկ համառօտ վերնագրի մէջ է՝ *Մեսրոպ* («Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի»), մինչդեռ բնագրի մէջ այդ անունը չկայ, այլ միայն *Մաշթոց*: Այս անունն էլ բնականաբար այսպէս պահւում է այստեղ թարգմանութեան մէջ. եւ վերնագրի մէջ էլ փոխում դարձնում եմ Մաշթոց: Ղազար Փարպեցին ունի միայն *Մաշտոց*, իսկ Մովսէս Խորենացին, երբ գրերի եւ դպրութեան մասին է գրում, ունի բազմա-

թիւ անգամներ Մեսրոպ, Մեսրովպ, մէկ անգամ միայն նա գործ է ածել Մաշտոց անունը (Բ· ժ·) գրելով, թէ Եւսեբիոս կեսարացու «Էկլէսիաստէ» գիրքը «ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու»: Այժմ ընդհանրացած է՛ւ Մեսրոպ, է՛ւ Մաշտոց, այլ եւ միասին՝ Մեսրոպ Մաշտոց: Իմ յօդուածների մէջ պահուած է ընդհանրացած Մաշտոց գրութիւնը:

Թարգմանութեան ժամանակ արել եմ կէտադրութեան եւ բնագրի բազմաթիւ ուղղումներ, որոնք,— ոչ բոլորը,— ցոյց են տրուած եւ բացատրուած են ծանօթութիւնների մէջ: Ուղղումների համար օգտուել եմ բնականաբար վենետկեան հրատարակութեան մէջ բերուած այլ ընթերցուածներից, սակաւադէպ նաեւ Սուտ-Կորիւնից:

Ցանկալի էր թարգմանութեան մէջ նշտութեամբ պահել Կորիւնի առանձնայատուկ ոճը՝ իր բառերով եւ մտածութեան ձեւերով: Բայց այդ անհնարին էր աշխարհաբարում լիովին կատարել՝ առանց մթնեցնելու թարգմանութիւնը եւ դժուար հասկանալի դարձնելու այն, ինչպէս երբէ գրուէր՝ «*մատենանչան* յիշատակարաններ ծաղկեցնել», «մտիս խորհրդանոցում միայնագործ հոգում էի» եւ նմանները: Տեղ տեղ պարզութեան համար աւելացրել եմ բառեր անկիւնաւոր փակագծերի մէջ: Սակաւաթիւ բառերի համար ներքեւի լուսանցքներում դրուած են բացատրութիւններ, որովհետեւ այդ բառերը, որ պահուած են բնագրից, աշխարհաբարում տարբեր նշանակութեամբ են գործածւում:

Բնագիրը մասեր կամ գլուխներ չունի, այլ ընթանում է միապաղաղ: Ընթերցողների դիւրութեան համար՝ ես այն բաժանել եմ ըստ բովանդակութեան խոշոր եւ նրբ մասերի, որոնք միմեանցից անջատուում են անկիւնաւոր փակագծերի մէջ դրուած հայկական թուանշաններով:

Բնագիրը լաւ հասկանալու համար՝ գրքի վերջում դրել եմ բազմաթիւ ծանօթութիւններ· սրանց մէջ նաեւ հեղինակի բերած ցիտատները Ս· Գրքի մէջ եղած ձեւով: Այդ կարեւոր է աւելի բնագրի հրատարակութեան համար՝ Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան ուսումնասիրման եւ այլ տեսակէտներով:

Ցանկանում էի այս աշխարհաբար թարգմանութեան հետ զոյգ տպագրել տալ նաեւ գրաբար բնագիրը — մէկ էջի վրայ՝ բնագիրը,

միւսի վրայ՝ թարգմանութիւնը: Բայց այդ կարելի էր անել Կորիւնի ձեռագիրների բաղդատութիւնից յետոյ միայն:

10· Այս աշխատութիւնը Հայպետհրատին յանձնելուց յետոյ՝ Ժողկոմխովետին կից «Ձեռագիրների ուսումնասիրութեան գիտական Ինստիտուտից» (Մատենադարանից) ստացայ մատենադարանի վեց ձեռագիրների տարբեր ընթերցուածքները, որ Մատենադարանի գիտ· աշխատողներից մէկը նշանակել էր իմ խնդրով՝ բաղդատութեամբ վենետիկի 1894 թ· հրատարակութեան հետ:

Այդ տարբեր ընթերցուածները ըստ բաղդատական հրատարակութեան համար ընդունուած ձեւի*) դասաւորելուց, ուսումնասիրելուց եւ մի ֆանիսն անձամբ ձեռագիրների վրայ վերստուգելուց յետոյ՝ տեսայ, որ դրանցով մեծ մասամբ նշտուում են իմ կատարած ուղղումները եւ մի ֆանի նոր ուղղումներ են մտցուում Կորիւնի բնագրի մէջ: Ուստի ես հարկ համարեցի իմ աշխատութիւնը ետ ստանալ Հայպետհրատից եւ վերանայել: Միաժամանակ եւ կազմեցի Կորիւնի բնագիրն ստացած տարբեր ընթերցուածներով հանդերձ, որովհետեւ Հայպետհրատի վարչութիւնը որոշեց գրաբար բնագիրն եւս հրատարակել աշխարհաբար թարգմանութեան եւ տարբեր ընթերցուածների հետ միասին: Այս դէպքում կարելի էր գրքի վերջում դրուած ծանօթութիւններից մի ֆանիսը դուրս գցել, բայց այդ չարի՝ խուսափելով դրանց թուահամարները փոխելուց, որ կարող էր սխալների ու շփոթութիւնների դուռ բանալ:

Բաղդատուած ձեռագիրներն իրենց համառօտագրերով հետեւեալներն են·

ե·— **No**· 2639 Ձեռ· Պետ· Մատենադարանի· Պատմագիրների ժողովածու՝ Ագաթանգեղոս, Մ· Խորենացի, Եղիշէ, Ղազ· Փարպեցի, Մեսրոպ երէց, Սեբէոս եւ Կորիւն: Բոլորագիր· գրուած է Ամբրտոլու վանքում 1672 թ·, ընդարազարդել է Սահակ վանեցի:

ը·— **No**· 1891· Ձեռ· Պետ· Մատ·, բովանդակում է Ղազ· Փար-

---

*) *Այդ ձեւով «Բաղդատութեամբ ձեռագրաց» արդէն հրատարակուած են Ագաթանգեղոս, Տփխիս, 1909· Մ· Խորենացի Տփխիս, 1913· վերջինս «աշխատութեամբ Մ· Աբեղեան եւ Ս· Յարութիւնեան», իսկ առաջինը «աշխատութեամբ Գ· Տէր-Մկրտչեան եւ Ստ· Կանայեանց»:*

պեցի եւ կորիւն··· գրուած է 1774 թ· էջմիածնում, ուտրգիր:

ժ·— **No**· 131· Ձեռ· Պետ· Մատ·, ժողովածու զանազան երկերի· էջ 39ից կորիւն: Գրիչն է Համբարձում դպիր· գրուած է էջմիածնում 1781 թ· նոր ուտր գրով:

ե·— **No**· 3143· Ձեռ· Պետ· Մատ·, ժողովածու ճառերի· էջ 13ից կորիւն· գրել է Յովսէփ Բժշկեան էջմիածնում 1828 թ· ուտրանման շղագրով:

ճա·— **No**· 3787· Ձեռ· Պետ· Մատ·, ճառընտիր բոլորագիր· էջ 103ից կորիւն· գրիչներն են՝ Գրիգոր Հիւյ·, Սոսթանէս եւ տէր Աւագ: Գրութեան ժամանակը յայտնի չէ· ունի ԺԴ—ԺԵ դարերի գրչութեան նշաններ:

ճբ·— **No**· 3797· Ձեռ· Պետ· Մատ·, ճառընտիր բոլորագիր· Գլուխ ԻԶ–ից կորիւն· գրիչն է Նադիր· գրութեան ժամանակն անյայտ· ընտիր օրինակ է· ունի ԺԴ դարի գրչութեան նշաններ:

Սրանից վրայ աւելացնում եմ եւ հետեւեալները·

α·— Վենետկի 1894 թ· տպագիրը, որ կատարուած է մի ձեռագրից:

վ·— Վենետիկի 1894 թ· տպագրի ներքեւի լուսանցքում տրըպուած տարբեր ընթերցուածները, որոնք բերուած են «միւս օրինակից»: Այդ երկու օրինակներն էլ «անթուական եւ ուտրագիր» են:

Ս·— Սուտ–կորիւն (տես վերը §8): Տպուած է Վենետկի 1894 թ· եւ Թիֆլիսի 1913 թ· հրատարակութիւնների հետ: Քանի որ դրա մէջ ամբողջ հատուածներ կան կորիւնից առնուած, բնականաբար որոշ դէպքերում պիտանի է կորիւնի բնագրի մէջ եղած աղճատումներն ուղղելու համար: Օգտագործել եմ սակաւաթիւ դէպքերում:

Մ· ԱԲԵՂԵԱՆ

30 *Հոկտ*· 1940

կրճատ գրութիւններ

Միւսն·— *միւս ձեռագրերը*:
Փոխ·— *փոխանակ, երբ մի բառի փոխանակ կայ մի ուրիշը*:
Ուղղ·— *ուղղում եմ*:
Ջիխ·— *հին հեռւում գրուած բառը*:
Լուս·— *լուսանցքում*:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ
ԱՌՆ ԵՐԱՆԵԼՈՅ ՍՐԲՈՅՆ ՄԱՇԹՈՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՄԵՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԻ
Ի ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ՅԱՇԱԿԵՐՏԷ ՆՈՐԻՆ

[Ա]

ՉԱՉԻԱՆԱՉԵԱՆՑ Աղդին եւ դՀայաստան աչխարհին զաստուածապարդեւ դբոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ եւ որպիսի՛ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն չնորհս երեւեցաւ եւ վասն նորին լուսաւոր վարդապետութեան եւ հրեչտակարար կրօնիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանչան ծաղկեցուցանել եւ մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտայս վասն յուշ արկանելոյ միայնադործ հոդայիցն, եկեալ հասանէր առ իս հրաման առն մերոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ, աչակերտի առն այնորիկ եւ ընդ նմին այլոց եւս քաջալերութիւն աչակերտակցաց մերոյն վարդապետութեան: Ուստի եւ իմ մանաւանդ աչակերտութեան վիճակ առեալ, թէպէտ եւ էի կրտսերադոյն, եւ առաւել քան զկար մեր, զրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փութանակի եւ առանց յապաղելոյ զառաջի եղեալն

1–6 b· Յիշատակ սրբոյն Մեսրովպայ արարեալ երանելոյն (այլ կողմի լուս. նոր չղադրով՝ «Կորիւն Վրդպա»)

d· Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն վարդապետին Մեսրոպայ եւ յաղագս գիւտոյ հայկական դպրութեան արարեալ ի Գորիւն վարդապետէ յաչակերտէ նորին ի խնդրոյ եւ հրամանաւ սրբոյ կաթուղիկոսին Յովսէփայ որ նահատակեցաւ ընդ գեւոնդեանցն

3 Բոլոր *Մեսրոպ, Մեսրոպ*, փոխ. *Մաչթոց*

5 ce *արարեալ ի Կորիւն*

8 b *դՀայաստան*, միւսն. *Հայաստան*

11 e *վարդապետութեանն*

12–13 d*վ մատենանչան* l միւսն. *մատնանչան*

13 c լուս· *խորհէի*

13 bde*վ մատցն*

14 b *հոկատա* l c *հոդայի* l միւսն. *հոդացայ*

16 bc *քաջալերութիւնն* l d *քաջալերութեանն*

16–17 bc *վարդապետութեանն*

17 c *աչակերտութեան* l միւսն. *աչակերտութեամբ*

19 d *առաջի*

ԵՐԱՆԵԼԻ ՄԱՐԴՈՒ, ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՍՈՒՐԲ ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԱՐՔԻ*) ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ

[Ա.]

Ասքանազեան2 ազգի եւ Հայաստան աշխարհի աստուածասպարզեւ ըրի մասին, թէ ե՛րբ ու ո՛ր ժամանակ բաշխուեց եւ ի՛նչպիսի մարդու ձեռով եղաւ այդ աստուածային նոր տրուած չնորհքը, այլ եւ այդ մարդու լուսաւոր ուսման եւ հրեշտականման առաքինի կրօնաւորութեան մասին մտածում էի մի առանձին մատեանի մէջ ըըրուած յիշատակարաններ ծաղկեցնել: Եւ մինչդեռ ես իմ մտքի մէջ մենակ հոգում էի3 [երողութիւնները] յիշելու, [ահա] եկաւ, հասաւ ինձ Յովսէփ4 կոչուած մի պատուական մարդու, նրա աշակերտի հրամանն [այդ անելու համար], դրա հետ նաեւ ուրիշների, մեր ուսման աշակերտակիցների քաջալերութիւնը: Ուստի եւ ես, որ քահոս էի ունեցել [նրա] մանուկ աշակերտը լինելու, թէպէտ եւ կրտսերագոյնն էի [նրա աշակերտների մէջ], եւ այդ մեր ուժից վեր էր, [բայց եւ այնպէս] բռնադատուելով [ինձ] հասած անաչառ հրամանից, [սկսեցի] չտապով եւ անյապաղ ըրի անցնել առաջադրանքը: Եւ մենք նրանց ամէնքին աղաչում ենք, որ աղօթքով մասնակից

---

*) վարք–կեանք, կեանքի ընթացք՝ առանձնապէս քրիստոնէական «սրբերի»: «Վարք սրբոց»—սրբերի կեանք, վիճնսագրութիւն: «Վարքագրութիւն»— կենսագրութիւն (սրբերի):

մատնապրել: Զորս եւ մեր համօրէն աղաչեալ երկրպագանել ընդ մեզ ալօթիւք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն չնորհացն, զի կամակատարողքն եւ ուղղադոյնս նաւիցեմք զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն:

[բ]

Եւ արդ առեալ նախաբանեցուք, եթէ էյէ համարձակութիւն պրով նշանակել զվարս արանցն կատարելոց, ոչ ի մէնջ արուեստախոսեալ մերոյն կարծեօք վիճարանելով, այլ յօրինակացն առելոց ընդդիմակացն բարձրացուցանել: Քանզի Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւրոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ ջէքնալ եւ զրարձրադոյն հատուցումն բաւական համարիլ յանսպառ յաւիտեանան, այլ եւ աստէն իսկ կանխադոյն, զի անցաւոր ժամանակօքս մատենագրուած երկնարերձ պայծառացուցանել, զհոդեվինացն եւ զմարմնակառնացն առ հասարակ վայելիցն:

Եւ ի մովսիսական պատմութեանն յայտնի է երանելեաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաստատութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, աքանչելական կենացն պայծառութիւն: Զի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալն, եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ ամենակուլ մահուանն կենօք երեւեալ, եւ միւս ոմն բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն հանդերձ ամենայն չնչականօք տարեւոր ժամանակօք նաւակաց պահեալ, եւ միւսոյն յանկարծապիտ հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախոս դաչնաւոր կատարեալ, եւ զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ:՝

1 bc աղաչեցեալ
1 b զեկախառնել l c ուղղած՝ զոգեխառնել
2 de՛ի աստուածային
2–3 b զկամարարդոյնս l c ուղղած՝ զկարեւորադոյնս
3 bc զուղղադոյնս
7 bc կատարելոցն: «կատարեալ» նշանակում է նաեւ մեռած, թարգմանում եմ «կատարեալ»—հմմտ· եզ 34 ա· 24 — նոյն իմաստը «արդար» բառով արտայայտած:
8 bc առելոցն
9 bc քան փոխ· քանզի
12 bc զանցաւոր
16 bc հաստատութեան
17 bc զոքանչելական
19 de արուեստին
20 bc միւսումն փոխ· միւս ոմն
21 bc լեռնացելոց
21 bc զաստուածապատիժ
22 b պահել
24 bc աւետիս
24 bc զհանդերձելոց l de հանդերձելոցն
24 e բարեաց

լինեն մեր աչխատութեանը՝ յանձնարարելով [մեզ] աստուածային չնորհքին, որպէսզի աջողութեամբ եւ ուղիղ նաւենք վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով:

[Բ]

Բայց արդ՝ նախ մի առաջաբան անենք, թէ թոյլատրելի՞ է արդեօք կատարեալ մարդկանց վարքի մասին դրել: Ոչ թէ մեր կողմից, մեր կարծիքով վիճաբանելով կը ճարտարախօսենք, այլ որպէս օրինակներով պարզ կերպով կ'ապացուցանենք հակառակը*): Որովհետեւ բարերար Աստուածն այնպէս է բարի կամեցել իր սիրելիներին, որ ոչ միայն արժանի համարի [տալ նրանց] ըստ [իրենց] առաքինի վարքի չքնաղ եւ բարձրագոյն հատուցումն անապատ յաւիտենականութեան մէջ, այլ եւ որ հէնց այստեղ, այս աշխարհում, առաջուց այս անցաւոր կեանքում մատեանի մէջ պատմել տալով [նրանց մասին]՝ երկնաբարձր կերպով պայծառացնի [նրանց], որպէսզի [նրանք] ընդհանրապէս եւ՛ հոգեւոր եւ՛ մարմնաւոր փայլով փայլեն:

Եւ Մովսիսական պատմութեան մէջ5 յայտնի է երանելի մարդկանց աղնուութիւնը, [նրանց] ճշմարիտ հաւատքի հաստատութիւնը, աստուածամերձ, աստուածամօտ կեանքի վայելչութիւնը**), սքանչելի կեանքի պայծառութիւնը: Որովհետեւ մէկն ընդունելի դոհաբերութեամբ արդար է կոչուել6· մէկ ուրիշն [իր] համելի պտղով, չնայելով ամենակուլ մահուան, կենդանի է մնացել7· մի երրորդն էլ [իր] կատարեալ արդարութեամբ՝ համատարած լեռնացած, աստուածապատիժ ծովի վրայ՝ բոլոր չնչաւորների հետ միասին՝ մէկ տապի ժամանակով նաւի մէջ մնալով՝ պահուել է8: Մի չորրորդն էլ [իր] յանկարծապիտոյ հաւատով արդարացել է, դարձել է աստուածամերձ, աստուածախօս, դաչնակից եւ ժառանգել է պաշիք բարիքների խոստումը9: Շատ բաներով աստուածածա-

---

*) Այսինքն՝ հակառակն այն մարդկանց կարծիքի, որոնք ասում են, թէ թոյլատրելի չէ:

**) Այսինքն վայելուչ կեանքը:

Բաղմօք եւ այլ նոյնպիսիք աստուածածանօթ գտեալք, որոց աղնուականութիւնքն յամենայն աստուածածանօթ ղրոց պատմի:

Հանդոյն ասացելոցս երանելւոյն Պաւղոսի10 առ Երրայեցիսն կարդեալ զանուանս՝ դովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն. որով զվարձահատոյց մխիթարութիւն ընկալան յամենապարդեւողէն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառաջադիմութեանցն. նա եւ զժանդագործին Բահաբու11 զհիւրընկալութիւն լրտեսացն՝ համեմատէ: Իսկ իրրեւ հայեցեալ ի բազմախուռն դումարութիւն արդարոցն՝ զսակաւուցն զանուանս յայտ առնէ, եւ զայլովք եւս զանց առնէ, անրաւական ժամանակն առ ի կարդի պատմելոյ: Ի կիր արկանէ այնուհետեւ նշանակել մխանգամայն զփորձութիւնս ի վերայ յարձակեալս եւ զնոցա զանընդդիմակաց զնահատակութիւնն, զորս եւ պատուականս քան զաչխարհական վաճառս համարի:

Սոյն օրինակ եւ ամենայն դիրք հոդեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զօրացս. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրօնից զրարեյաղթութիւն, եւ զոմանց՝ ըստ աչխարհակիր կարդաց զմարտից եւ զպատերազմաց արութիւնն, որպէս զներբոտայ12 եւ զՄամփսոնին13 եւ զԴաւթայն14: Եւ զոմանց զրնական զիմաստութիւն դովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն15 յեգիպտոս, եւ զԴանիէլին16 ի Բաբիլոն17: Ցորոց եւ հզօր թագաւորացն խրատիչք

1 de *աստուածածանօթք*
1 b *յորոց*
3 bcde *ասացելոցս* l միւսն. *ասացելոյս*
3 v *երանելւոյն* l միւսն. *երանելոյն*
4 d *զանուանքս*
4 d *հաւատոցն ճշմարտութիւն*
5 b *զվարձահատոց*
5 bc *յամենապարդեւէն*
6 cde *ժանդագործին*
7 c *Բահարաւ*
8 b *արդարոցն* l c *արդարոց* l միւսն. *արդարեւ*
9 bc *զայլօք*
10–11 bc *զմիանգամայն*
11 b *զնոցա* l միւսն. *նոցա*
12 c *զաչխարհական վաճառս*] միւսն. *զաչխարհս առ վաճառ*
13 bc *համարին*
14 b *նչանեալ*
16 b *աչակերտակիր* l v *աչխարհակիր* l միւսն. *աչխարհագիր*
17 b *զերբոտայն* l c *զեփթայեայն* ուղղած է *զերբոտայն*
18 b *իմաստութիւն*
18 b *դովել*
19 b *Յովսէփայն*
20 b *Բաբելոն*
20 bc *որոց*
20 d *թագաւորութեանցն*

նօթ են դանուել եւ ուրիշ այսպիսիները, որոնց աղնուութիւնների մասին պատմում են բոլոր աստուածային դրքերը:

Աստծնեբիս նման՝ երանելի Պօղոսը10 «Առ Եբրայեցիսն» [թղթի մէջ] անուննեբը տալով՝ դովում է այդպիսիների ճշմարիտ հաւատքը, որով՝ իւրաքանչիւրն իր առաջադիմութեան համեմատ՝ վարձատրական մխիթարութիւն է ընդունել ամէն ինչ պարզեւող Աստծուց: Նա օրինակ է բերում նաեւ չարագործ Բահաբի11 հիւրընկալութիւնը [որ սա արել էր] լրտեսներին: Իսկ երբ [նա] տեսնում է [այդպիսիների] խուռն բազմութիւնը, իսկապէս քչերի անուններն է յայտնում, ուրիշներինը դանց է անում, ժամանակն անբաւական [համարելով ամէնը] կարդով պատմելու համար: Այնուհետեւ [նա] ընդհանուր կերպով նշանակում է [այդպիսիների] դլխին եկած փորձութիւնները եւ նրանց նահատակութիւնները*) առանց դիմադրելու, որ եւ աւելի պատուական է համարում, քան աչխարհիս ապրանքները:

Այսպէս եւ բոլոր հոդեպատում դրքերը նշանակած ունեն բոլոր զօրականների քաջութիւնները. ոմանց բարեյաղթութիւնն ըստ աստուածային կրօնքի, եւ ոմանց արութիւնները մարտերի ու պատերազմների մէջ ըստ աչխարհական կարդի, ինչպէս Նեբրովթինը12, Սամսոնինը13 եւ Դաւիթինը14: Մի քանիսինն էլ դովում են բնական լիաստութիւնն աստուածային լիաստութեամբ հանդերձ, ինչպէս Յովսէփինը 15 Եդիպտոսում եւ Դանիէլինը16 Բաբելոնում17: Նրանց մէջ կային եւ հզօր թադաւորների խրատատուներ, [որոնք] աչխար-

*) Նահատակութիւն — կտրճութիւն, մարտիրոսութիւն:

էին, զաչխարհական կենցաղոյս կշանդամանան ցուցանէին, հանդերձ ամէնիշխանին Աստուծոյ ծանօթս առնելով: Զորոց եւ մարգարէին խոկ դովեալ զիմաստութիւնն, ասէր ցոմն այսպէս. «Մի՛թէ իմաստնացո՞ս էցես քան զԴանիէլ. կամ իմաստո՞ւնք խրատուք խրատեցին զքեզ հանճարով իւրեանց»18: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ հոգեկան ազգին հրեշտակութեամբ՝ զովեալ զսրբոցն զօրութիւն որ զԴանիէլ յանկալի քարոզելովն կոչէին. եւ զսուրբ Տիրամայրն ի Գաւիթեայ՝ օրհնեալ ի կանայս19:

Բայց զի՞նչ ասիցեմք զղուզականացն զառ ի միմեանց պատուեալ զգովութիւնս, զորոց եւ Տէրն իսկ ամենայնի՝ բերանաւոր գոչէր զպաղնուականութիւնն, ոչ միայն գյանդիմանական գործոյն, այլ եւ զծածուկ սրտիցն լուսաւորութիւնս առաջի հրեշտակաց եւ մարդկան բերէ: Որպէս զՀիւրամեծարին Արրահամու20 հրեշտակօքն հասեալք զծառայական հաւատարութիւնն յայտ արարեալ, պատմելով նմա յետ աւետացն ընկալելոց, զինչ ի Սոդոմն21 էր գործելոց: Նոյնպէս եւ զքաջի նահատակին Ցորայ յառաջ քան զպատերազմիլ առաջի պատերազմականին՝ յօրինէ զգովութիւն ասելով. «Այր ճշմարիտ, արդար եւ աստուածապաշտ, եւ որոչեալ յամենայն գործոց չարաց»22: Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով հնչեցուցեալ, զորոյ եւ զաղաչութեան զկայտառութիւնն յայտ արարեալ աստուածեղէն օրինացն. նա եւ զայլազգոյն զՅոթորի23 եւս զխրատն չանցուցեալ անգիր:

1 c եղեն փոխ. էին
1 c զաչխարհական l միւսն. զաչխարհակալ
1 b կենցաղս
1 bc հանգամանս
2 b առնելոյ
4 b չիf խրատուք
6 d յիշատակութեամբ
6 բոլորը զսրբոյն ուղղ. զսրբոցն
6 bc զԴանիէլի
6 c զյանկալի
7 bc զտեառնամայրն
9 b զղուզականացն l միւսն. զղուզանացն
9 b զառիմեանոյ
10 e կոչէ
12 bcdeվ լուսաւորութիւնան
13 b հուրամեծարին l e զհիւրամեծարն
15 bc ընկալելոյն
15 bc գործելոյն
15 b զքաջին
17 b զպաղութիւնն
20 b զաղաչութենէ
20 b զկատարութիւն
21 b զՑաթոնի l c զՑոթորայ
21 b եւ փոխ. եւս
22 e անցուցեալ

հական կեանքի հանդամանքներն էին ցոյց տալիս, մեժամանակ եւ ծանօթութիւն էին տալիս ամէնքի իշխան Աստծու մասին: Մարդկային այդպիսինների խմաստութիւնը դավելով՝ ասում է մէկին այսպէս. «Մի՞թէ աւելի խմաստուն ես, քան Դանիէլը. կամ խմաստուն խորհուրդնե՞ր են խորտել քեզ երկնից հնչքով»1: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ դավում է արքերի օրութիւնը՝ պատուհասը ուղարկելով հրեշտակներին, որոնք յայտարարելով Դանիէլին գանկալի էին կոչում, եւ աւերը Տիրամօրը Գալիլիայում՝ կանանց մէջ օրհնեալ19:

Բայց ի՞նչ ասենք այն դավաճանքի համար, որով մխիանց պատուում էին ընկերները, որոնց աղնուութիւնների մասին ամէնն Տէրն ինքը բերանալիր պոչում էր, հրեշտակների եւ մարդկանց առաջ ցոյց տալիս ոչ միայն նրանց յայտնի գործերի, այլ եւ ծածուկ սրտերի լուսաւորութիւնները*): Ինչպէս՝ եկած հրեշտակների միջոցաւ յայտնեց հաւատացեալ Աբրահամի20 ծառայական արտակարգութիւնը, առաջ խոստումներից յետոյ պատմեց նրան՝ ինչ որ Սոդոմում21 գործուելու էր: Նոյնպէս եւ քաջ նահատակ Յոբի գովքն է անում նախ քան պատերազմելը՝ պատերազմականի**) առաջ ասելով. «Ճշմարիտ, արդար մարդ, ատուածապաշտ եւ ամէն չար գործերից հեռու»22: Իսկ մեծ Մովսէսի աւելի եւս ատուածամուխ մերձաւորութիւնը հռչակել է ամէն ևկեղեցական գրքերով. ատուածային աւանդութիւնը նրա մանկական կայտառութիւնն էլ է յայտնել. նաեւ այլապէս Յոթորի23 խրատն էլ չէր թողել:

---

*) Երեւի, նշանակում է՝ մարդերի զազանի խորհուրդները, պատանի մտածութիւնները:

**) Սատանայի առաջ:

Եւ այնպէս միահամուռ ամենայն աստուածակրօն արուեստակա-
նացն բարեզործութիւնք՝ փայլեն յաստուածպէսէ օրինացն, զորոյ չէ
ոք բաւական յիշատակել զերանելի անուանդ գումարութիւն: Եւ ոչ
միայն ղյաւաջադունիցն, այլ եւ զկնի եղելոցն զմիածնի24 որդւոյն
Աստուծոյ փրկչին ամենեցուն՝ ի լուսաբեր աւետարանին իւրում ծաղ-
կեցուցանէր զաղնուականութիւնս, մանաւանդ երանութեամբ25 իսկ պա-
կէր ոչ միայն սեպհականացն զերկոտասանիցն26, եւ կամ ղյաւաջա-
մուտ զկարապետին27, այլեւ զայլոց մաուսկելոցն պոլէ զհաւատոցն
ճշմարտութիւն: Քանզի `ընաթանայէլ առանց նենդութեան նշանակէ28 եւ
զթադաւորապէն զմեծութիւն հաւատոցն՝ անպիտա յիսրայէլի ասէ29: Բայց
ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զթեթեւադոյնսն բարձրադոյնս
[առնէ] անարդամեծարն Քրիստոս, որ սակաւիկ ինչ զծախ, իւղոյն
յարդէ, եւ զծախելեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի
ներքոյ երկնից30: Եւ զկնոջէն քանանացւոյ մեծ զհաւատոցն ասէ31·
նաեւ զդանկաց երկուց ընծայելոցն պոլէ զարկանելեացն զյօժարութիւն
առաւել քան զմեծացն32:

Իսկ Պաւղոսի ի մոլ եղեալ էր չընչեցուցանել զքրիստոսապէսն կարզացն
պայծառութիւնն, անօթ ընտրութեան անուանեալ, անուանակիսն յաշ-
խարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ33: Վասն որոյ երանելոյն հայե-
ցեալ ի չնորհացն բարձրութիւն առ իւրոյ մեծ օրինացն եւ առ ամենայն
սրբոցն, բարձրադոյն բարբառով ի փառաւորութիւն դառնայ, եթէ «Շնորհք
Աստուծոյ, որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս եւ զհոտ
գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն տեղիս34: Ի վերայ
այնորիկ ապա եւ զհամարձակագոյնն բերէ, եթէ «ո՞ կարէ բիծ դնել ընտ-
րելոց Աստուծոյ»35: Եւ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի ա-

2 վ փայլին
6–7 bc սպակէ
7 d զերկոտասանիցս
8 d կարապետին
---

*) Նոր Քաղաքում, Վաղարշապատում:

**) Սահակն ու Մաշտոցը:

[ԺԹ]

Յետ այնորիկ առնայր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս պի տէր եպիսկոպոսն92 ի կայենականն93, եւ նա ի սիւնիս հեթանոսացն94 զրանն կենաց սերմանիցեն: Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ օղնականօքն, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն95, եւ երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ, որք էին սուրբք եւ զուարթադոյնք, հանդերձ այլովք եւս սպասաւորօք աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել: Որովք յանձն եղեալ երանելին չնորհացն Աստուծոյ, երթեալ իջանէր յԻոտաստանն96 Գողթան, յառաջին դաստակերտն իւր: Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւատարութեամբն բարեպաշտին Շարաթայ, լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի. եւ կարգէր յամենայն գիւղս գաւառին դաստ սրբոց վանականաց: Որում եւ հասեալ ժամանեալ հայրարարուին Գոտայ, որդւոյ Շարաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իրրեւ հաւատարի որդւոյ վարդապետին տանէր:

[Ժ]

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնեականն97 աշխարհն ելանէր: Եւ անդ աստուածասէրն հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր վաղենակ անուն: Բազում օղնականութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս ի նիւթ վարդապետութեանն, առեալ զդպրանամիսա զվայրենագոյն զճիւաղարարոյ կողմանցն. եւ այնչափ վոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկարար անուցանել եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենացն եպիսկոպոս տեսուչ98 եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս, այր սուրբ եւ երեւելի, հայրարարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ99: Ապա եւ զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր:

2 d *որպէս վոխ· որպէսզի*
3 bc *տէրն*
4 b *սերմանեցին* l c *ուղղած է՝ սերմանիցէ*
4 d *հրաժարեալք*
4–5 abcde *հանդերձ այլովք* [b *այլօք*] *եւս* [d *եւ*] *օղնականօքն· ճապավ· այլովք եւս: Տես ծանօթ· 92*
5 c *Հորձենական*
6 cf *Մուշեղ*
7 bc *այլօք*
8 բոլորը *որով ուղղ· որովք*
9 bc *առուս տակն* l *միւսն· առուս տանն: Ուղղում եմ՝ յԻոտաստանն: Տես ծանօթ· 96*
11 b *Շարաթայ* l c *Շարաթու*
15 c *հաւատարի ուղղած է՝ հաւատարիմ*
20 de *օղնականութիւնս*
22 b *ժողովել*
27 d *չիf սուրբ*
27 b *հայրարարոյ*
28 bc *վերկիրն ամենայն Սիւնեաց*
28 bd *վանականացն*

[ԺԹ]

Դրանից յետոյ երանելի Մաշթոցը համաձայնութիւն ստացաւ, որ տէր Եպիսկոպոսը92 կայենականների93 մէջ*), իսկ ինքը հեթանոսների սփիւռքում94 սերմանեն կեանքի խօսքը: Եւ բաժանուեց նրանից**) իր օգնականների հետ, որոնց առաջինի անունը Տիրայր էր, ծորձենական դաւառից95, եւ երկրորդի անունը՝ Մուշէ, Տարօնի նահանգից, որոնք սուրբ եւ աչքաբաց [մարդիկ] էին, այլ եւ աւետարանի ուրիշ ապաւաւորների հետ, որ չեմ կարող անուններով նրբանակել: Երանելին նրանց հետ մխային յանձնուելով Աստծու շնորհքին՝ դնաց իջաւ Գողթնի Ռոտաստակը96, իր առաջուայ դաստակերտը: Եւ իր մշտական սովորութեամբ իր վարդապետութիւնը բանեցընելով այնտեղ՝ բարեպաշտ Շաբաթի ընկերութեամբ դաւառը լիացրեց Քրիստոսի աւետարանի ողջոյնով, եւ դաւառի բոլոր դիւղերում կարդեց սուրբ վանականների դասեր: Նրա մօտ եկաւ հասաւ եւ հայրաբարոյ Գիտը, քրիստոսասէր մարդ Շաբաթի որդին, [որ] ինչպէս մի որդի, մի որդու հաւասար, չատ ծառայութիւն էր անում

[ԺԴ]

Ապա դրանից յետոյ ելաւ սահմանակից Սիւնական աշխարհը97: Այնտեղ էլ աստուածասէր հնազանդութեամբ ընդունեց նրան Սիւնիքի իշխանը, որի անունը Վաղինակ էր: [Մաշթոցն] իր առաջադրած գործի համար չատ օգնութիւն ստաւ նրանից, այնպէս որ պտըտեց, վերահասու եղաւ Սիւնիքի բոլոր կողմերում: Եւ սովորեցնելու համար մանուկներ ժողովեց, աւելի գաղանամիտ, վայրենի, ճիւաղաբարոյ կողմերինը, եւ այնքան հոգ տարաւ, դաստիարակի պէս կըրթեց, խրատեց, որ մինչեւ անգամ հէնց այն վայրենիներից կարգեցին Սիւնիքի եկեղեցու համար եպիսկոպոս-տեսուչ98, որի անունն էր Անանիաս, մի սուրբ ու երեւելի [եւ] եկեղեցու ժառանգաւորներ99 համար հայրաբարոյ մարդ: Ապա Սիւնեաց երկիրն էլ լցրեց վանականների դասերով:

---

*) Այսինքն՝ Սահակ կաթողիկոսից, Վռամշապուհ Թագաւորից:

**) Այսինքն արքունի ղօրակայաններում եղողների մէջ:

Ցորում ժամանակի պարզեւեալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ100, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, չնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իրրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան գհրամայեալսն ի գործ բերէր:

[ԺԵ]

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտիւ արկանէր սիրելին Քրիստոսի եւ վասն բարբարոսական կողմանն: Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ չնորհեցելոյն նմա ի Տեառնէ: Գրէր, կարդէր եւ օրինօք յարդարէր. եւ առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց: Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր, եւ եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին եւ զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն:

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում եւ յանձն առեալ ամենեցուն գինդրելին կատարել: Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ եւ ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց եւ ի խառնաղանջ գաւառաց իշխանութեանն իւրոյ ժողովել մանկունս եւ տալ ի ձեռն վարդապետին: Ջոր առեալ՝ արկանէր ի բուվս վարդապետութեանն եւ հոգեւոր սիրոյն եռանդմամբ զաղտ եւ գժանդ չարաւահոտ դիւացն եւ զսնոտիագործ պաչտամանն ի բաց քերէր, այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց եւ անյիշատակ ցուցանել, մինչեւ ասել, թէ՝ «Մոռացայ ժողովուրդ իմ եւ զտուն հօր իմոյ»:101

2 ce քաջ
6 c գվայելչութեանն
11 c գկարգեալ
11 b ըստ չնորհելոյ l acվ չնորհեցելոյ
13–14 e իջանէր
15 c նախ զօր, ապա ուղղ. զօրում
22 d խառնիճաղանջ
23 c եւ տալ l միւսն. չիf եւ
24 c եւ եռանդմամբ
25 b ժանդ
26 adeվ չիf քերէր
27 bc մինչ
27 e չիf իմ

Այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիքի իշխանութեան դըռւխն անցաւ քաջ Սիսական Վասակը100, խելացի ու հանճարեղ եւ կանխատես, աստուածային իմաստութեան շնորհքով օժտուած մի մարդ: Նա շատ նպաստեց աւետարանի քարոզութեան գործին: Նա ինչպէս որդին հօրը՝ հնազանդութիւն ցոյց տալով եւ աւետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչեւ վերջը գործադրում էր նրա հրամայածները:

[ԺԵ]

Դարձեալ՝ մէջտեղում մի ժամանակ անցնելուց յետոյ՝ Քրիստոսի սիրելին մտածեց հոգ տանել նաեւ բարբարոսական կողմի համար: Եւ սկսեց Տիրոջից իրեն շնորհուածի համեմատ նշանապրեր յօրինել վրացերէն լեզուի համար: Գրեց, դասաւորեց ու օրինաւոր կերպով յարդարեց եւ իր աշակերտներից մի քանի լաւագոյններին հետն առաւ, վեր կացաւ, գնաց, իջաւ Վրաց կողմերը: Եւ գնաց, ներկայացաւ թագաւորին, որի անունը Բակուր էր, եւ աշխարհի եպիսկոպոսին, [անունը]՝ Մովսէս: Եւ թագաւորն ու աղնուականները, բոլոր գաւառներով միասին, շատ անսացին նրան ըստ աստուածային օրէնքի:

Եւ նա իր արուեստն առաջարկելով՝ խրատեց, յորդորեց նրանց, եւ այն ժամանակ ամէնքը յանձն առան նրա ուղածը կատարել: Եւ վրացերէն լեզուի մի թարգմանիչ գտաւ, որ անուանւում էր Ջաղա, մի գրագէտ եւ ճշմարտահաւատ մարդ. այնուհետեւ Վրաց արքան հրամայեց իր իշխանութեան զանազան կողմերից եւ խառնաղանջ գաւառներից մանուկներ ժողովել եւ տալ վարդապետի ձեռքը: [Նա էլ] նրանց առաւ, ուսման բովի մէջ ձգեց եւ հոգեւոր սիրով ու եռանդով ի բաց քերեց [նրանցից] դեւերի ու անոտի կուռքերի պաշտամունքի չարաւահոտ աղտն ու ժանգը, այնքան անջատեց հեռացրեց [նրանց] իրենց հայրենի [աւանդութիւններից] եւ անյիշող դարձրեց, որ մինչեւ անգամ ասում էին, թէ՝ «Մոռացայ իմ ժողովուրդն եւ իմ հօր տունը»101:

Եւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնաւոր եւ ի լաժանեալ լեզուացն ժողովեցան, միով ասաուածարարրան պատգամաբն մի աղբ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր: Ցորոց եւ զաան արժանիք՝102 ելեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ եւ բարեպաշտօն, եպիսկոպոս կոչեալ տանն արքունականի:

Իսկ իրրեւ ընդ ամենայն տեղիս վրայ կարգեալ զղործ աստուածպաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ զառնալոյ յերկիրն Հայոց եւ պատահեալ Սահակայ կաթուղիկոսին Հայոց, պատմէր զողջութենէ եղելոցն, միանգամայն եւ փառաւոր առնելով զԱստուած, զմեծանունն Քրիստոս:

[ԺԲ]

Ապա դարձեալ ելանէր, չրջէր զտեղեաք կարգելովք եւ զղաւառաբն աչակերտելովք աչխարհին Հայոց, զուարթացուցանել, նորոգել եւ հաստատել: Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ աւետարան Տեառն եւ ամենեցուն զղուչացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ առնէր այնուհետեւ վասն կէս աղգին Հայոց, որ էր ընդ իչխանութեամբ Թագաւորին Հոռոմոց103:

Եւ փութացեալ գնայր հանդերձ աչակերտօք բազմօք անցանել ի կողմանս Ցունաց: Եւ վասն առաւելադոյն բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն գնմանէ անդ ի հիւսիսական կողմանց104 հռչակելոց՝ առաւել միամտութեամբ ընտաներաբ յեպիսկոպոսաց աչխարհին եւ յիչխանաց եւ ի զաւառականացն պատուեալ լինէր, մանաւանդ ի սպասյապետէն աչխարհին, որ անուանեալ կոչէր Անատողիս, ի մուտ ճանապարհին. որ զիրս առաջի եղեալ՝ զրով ցուցանէր կայսերն, որում անուն Թէոդոս105 կոչէին, որպի Արկադու106 կայսեր. ուստի եւ հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ:

1 b *այնչափ*
3 c ուղղած է՝ *փառաբանիչս*
4 *եղեալ* ուղղ. *ելեալ*
5 de չիf *անուն*
9 abceվ *կաթուղիկոսի*
10 abdeվ չիf *եւ*
10 c *առնելոյ*
11 b *զմեծն անուն*
13 *Բոլորը կարգելեօք* ուղղ. *կարգելովք*
14 b *աչակերտել*
14–15 abdeվ չիf *եւ (հաստատել)*
16 dվ *զղուչացեալ*
16–17 d *վարելոյ*
17 վ *առնէր* l միւսն. *առնոյր*
17 b *եւ վասն*
18 de չիf *ընդ*
18 b *Հոռովմոց*
20 e *համբաւուցն*
21 bc *հռչակելոյ*
23 adeվ չիf *լինէր*
24 a *Անտիոխ* l bc *Անատող* l d *Անտիոք* l e *Անտեսիս* l վ *Անտիսի* ուղղ. *Անատողիս*
24 bc *զմուտս* l c *որ զմուտ* վոխ. *ի մուտ*
25 c *որոյ*
25 aվ չիf *անուն*

Եւ արդ՝ նրանց, որ այնքան առանձին եւ բաժանուած լեզուներից ժողովուեցին, մէկ աստուածային պատգամներով կապեց, դարձրեց մէ՛կ ազգ, մէ՛կ Աստծու վարդապետներ: Նրանցից գնուեցին եւ եպիսկոպոսական կարգին, վիճակին բարձրացած արժանաւորներ102, որոնց առաջինը, Սամուէլ անունով մի սուրբ եւ բարեպաշտ մարդ, եղաւ արքունի տան եպիսկոպոս:

Իսկ երբ Վրաստանի բոլոր կողմերում կարգի դրեց աստուածապաշտութեան դործը, այնուհետեւ բաժանուելով նրանցից՝ վերադարձաւ Հայոց երկիրը եւ հանդիպելով Հայոց Սահակ կաթողիկոսին՝ պատմեց նրան բոլոր եղելութիւնների մասին, [եւ] մի բանի փոխանցեցին Աստծուն, մեծանուն Քրիստոսին:

[ԺԶ]

Ապա դարձեալ դուրս եկաւ, չրջեց [իր] կարդած տեղերը եւ Հայոց աշխարհի աշակերտած գաւառները՝ զօրացնելու, նորոդելու եւ հաստատելու համար: Եւ երբ բոլոր տեղերն այնպէս լիացրեց Տիրոջ սուրբ աւետարանով եւ ամէնքին զգուշացրեց, որ կեանքի ճանապարհով ընթանան, այնուհետեւ մտածեց Հայոց կէս ազգի համար, որ Հոռոմների թագաւորի իշխանութեան տակ էր103:

Եւ չտապեց, չատ աշակերտների հետ գնաց յունական կողմերն անցնելու: Եւ իր բարի գործերի մեծ համբաւի համար, որ առաջուց այնտեղ նրա մասին հռչակուած էր հիւսիսային կողմերից104, [նա այնտեղ] մտնելու ճանապարհի հէնց սկզբից մեծ մտերմութեամբ ընտանեբար պատիւ ստացաւ աշխարհի եպիսկոպոսներից եւ իշխաններից ու գաւառապետներից, մանաւանդ աշխարհի սպարապետից, որ անուանուում էր Անատոլիս: Սա [Մաշթոցի] մտադրած բանը գրով յայտնեց կայսրին, որի անունը Թէոդոս էր105 կոչուում, Արկադ106 կայսրի որդին, որից եւ հրաման դուրս եկաւ, որ վայել մեծարանքով Ակումիտ*) անունով կոչեն սրբին:

---

*) Տքնող, անքուն հսկող, ինչպիսին էր Մաշթոցն իրրեւ ճգնող:

Իսկ նորա զրազմութիւն աշակերտացն տարեալ ի քաղաքն Մելիտինացւոց[107], յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակաւիոն կոչէին, եւ դվխաւոր աշակերտացն Թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին, այր հաւատարիմ եւ ճշմարտապաշտ: Եւ առեալ երանելոյն զպատուական եպիսկոպոսն Դերջանոյ[108], որոյ անուն կոչէր Գինթ, եւ զսակաւս յաշակերտաց անտի, եւ ելեալ յանդրուարն[109], դիմոսական եւ բազում պատիւ դտեալ, հասանէին ի Թաղաւորակաց քաղաքն Կոստանդինական: Զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն, եւ մտեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարդ Թաղաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին, յորոց եւ դտեալ չնորհս: Հրամայեալ լինէր ժամանակ մինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել զարմանօք կարդելովք յեկեղեցւոյն եւ յարքունեաց եւ ի պատուական իշխանաց քաղաքին:

Եւ ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, եւ առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք[110] կայսերազիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազդէն Հայոց ժողովելոյ, եւ վասն ժանտազործ ազդին բարբարիանոսաց[111], եւ եկեղեցեաց հաստատութեան, եւ մեծամեծ պարգեւօք պատուելոյ: Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարքունիսն, անընկալ Թողոյր: Եւ երկիր պագեալ Ծիրանափառ օդոստականացն[112] եւ սրբոյ կաթուղիկոսին, եւ ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն եւ յերեւելի իշխանացդ

1 b զրազմութիւնն
1–2 c մելիտոնացւոցն l abdվ մելիտինացւոց
2 e եպիսկոպոսին
5 b Թերջանոյ
6 abdeվ սակաւս
6 բոլորը յանարւոյն ուղղ· յանդրուարն
12 b մեծարեալ
14 c լցուցեալ
15 bc հանդամանսն
17 b ազդին
17–18 բոլորը բարբարոսաց ուղղ· բարբարիանոսաց, ինչպէս է ինչ յետոյ
18 c հաստատութեանն
18–19 բոլորը պատուել ուղղ·պատուելոյ
19 c ուղղած է՝ ճշմարտասիրին
19 c ուղղած է՝ անակնկալ
20 d օդոստականաց
20 b սրբոյն
21 acdeվ իշխանացն

Իսկ նա իր աշակերտների բազմութիւնը տարաւ Մելիտինէ քաղաքը107, յանձնեց քաղաքի սուրբ եպիսկոպոսին, որ Ակակիոս էր կոչւում, եւ աշակերտների համար պէսպէս թողեց նրան, որ Ղեւոնդէոս էին կոչում, մի հաւատարիմ եւ ճշմարտապաշտ մարդու: Եւ [ապա] երանելին հետն առաւ Դերջանի108 պատուական եպիսկոպոսին, որի անունը Գինթ էր, եւ այնտեղի աշակերտներից քչերին, եւ նստելով հանրային անդրուարը*)109 եւ չատ պատիւ դնելով՝ հասան Թադաւորանիստ Կոստանդնիական**) քաղաքը: Նրա մասին իսկոյն պատմեցին արքունիքում, եւ նա պատուական աթոռի առաջ մտնելով՝ ներկայացաւ աստուածակարդ թագաւորներին***) եւ աշխարհամուտ դռան հայրապետ սուրբ կաթուղիկոսին, որի անունն Ատտիկոս էր, եւ չնորհք գտաւ դրանցից****): Հրամայուեց՝ մի որոշ ժամանակ այնտեղ, տիեզերական քաղաքում մեծարել [նրանց] եկեղեցուց, արքունիքից եւ քաղաքի պատուական իշխաններից կարգուած ապրուստով:

Եւ ապա Զատիկն անելուց յետոյ՝ կայսրին բացատրեց նա պէտոյքի հանգամանքները եւ անընդդիմանալի հրաման առաւ՝ կայսերադիր դրոշմած սակերներով110 հայոց կէս աղդից սովորեցնելու նպատակով մանուկներ ժողովելու, բարբարիանոսների111 ժանտադործ մարդկանց ու եկեղեցու հաստատութեան համար, ինչպէս եւ մեծամեծ պարգեւներով [նրան] պատուելու համար: Արդարն այդ մասին համոզեց պալատականներին, ինքը բան չառնելով՝ թողեց [նրանց]: Եւ երկրպադեց ծիրանափառ օգոստականներին112 ու սուրբ կաթուղիկոսին եւ [հրաժեշտի] ողջերթ ընդունեց եկեղեցուց ու քա-

---

*) Անդրուար, անդրուվար—սայլակառք, պատգարակ:

**) Կոստանդնուպոլիս:

***) Այսինքն թագաւորին (կայսրին) եւ թագուհուն (կայսրուհուն):

****) Հաճելի եղաւ նրանց:

քաղաքին, եւ ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս եւ ի կառս արքունատուրս, եւ մեծաւ չքով եւ բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս: Եւ ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառապոյն երեւէին:

Եւ մեծամեծ պարգեւս գտեալ, զային հասանէին ի ժամադիր կողմանս: Եւ անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվաղակի զհրամանն կատարել: Եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտւոյ ժողովել եւ նոցին ոռճիկս կարդել ի պատեհադոյն տեղիս, յորս եւ երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, եւ ժողովելոցն քաղցրացուցանէր:

Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր զդժպատեհ եւ զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ: Եւ իրրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զքէչուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս: Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս եւ զունակ զունակ խայտառակեալս, եւ յաչխարհէն կորզէին:

Իսկ երանելւոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ սակեալ եւ վճարեալ: Եւ բազում չնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ113 ստացեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն, եւ լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք:

Ցայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան114 ազգաւ, Բենիամէն անուն, եւ նորա հարցեալ եւ քննեալ զրարբարոս զրանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նչանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Քրիստոսի չնորհացն կարգեալ եւ հաստատեալ կչռէր:

1 bc իւրայօքն
1 abceվ չիf եւ
5 e ժամադիրս
7 de չիf հանդերձ
7 b հանդերձ սակերօք հանդերձ կայսեր
9–10 b իչխանութեանն
10 e մանկտոյ
11 b ի պատեհադւոյն
11 acdeվ յոր
12 b քաղցացուցանէր
13 b զկամարակոր
13–14 c բարբարոսական
14 b աղանդ
15 bc դաղանն
16 e վ ծայրադոյն
16 b ի գլորանս l c եւ ի գելարանս
17 b որժամ
17–18 c խորտակեալք
18 b խանձեալք
18 e մրեալ
18 b խայտառակեալ
18–19 c չիf եւ (յաչխարհէն)
21 բոլորը՝ սակեալ l U սկսեալ
24 վ եղեալ փոխ. եկեալ
25 c աղդաւ l միւսն. աղդով
27 b յակողութեամբ

ղաքի երեւելի իշխաններից, եւ բոլոր իրայիններով աջողութեամբ նստեցին արքունիքից տրուած դեսպակների ու կառքերի մէջ, եւ մեծ փառքով ու պատուով բռնեցին թագաւորական ճանապարհները: Եւ բոլոր քաղաքները դիմաւորում էին, [եւ ամէն] քաղաքում երեւելի էին հանդիսանում:

Եւ մեծամեծ պարգեւներ ստանալով եկան, հասան ժամադիր կողմերը: Եւ իսկոյն եւեթ հանդիպեցին Հայաստանի սպարապետին, կայսրի սակերներով ներկայացան [նրան]: Եւ երբ նա ստացաւ կայսերական դրոշմներով սակերները, չտապեց իսկոյն հրամանը կատարելու: Եւ այնուհետեւ պատգամաւորներ ուղարկեց կայսրի իշխանութեան մէջ եղած հայոց կէս աղդի դաւառները՝ բազմաթիւ մանուկներ ժողովելու եւ նրանց թոշակ նշանակելու յարմարաւոր տեղերում, ուր եւ երանելին իր ուսուցչութիւնը գործադրում եւ քաղցրացնում էր ժողովուածների համար:

Ապա դրանից յետոյ ձեռնարկեց նա անպատշաճ ու ծուռ բարբարիանոս աղանդը քննել: Եւ երբ ոչ մի հնար չդտաւ ուղղութեան բերելու, սկսեց թշուառացնող դաւաղանը գործադրել խիստ ծանր պատուհասներով — բանտերով, տանջանքներով, դելարաններով: Իսկ երբ դրանով էլ փրկութիւնից դուրկ մնացին, [այն ժամանակ] ջարդ տուին*), ապա խանձեցին, մրեցին ու պէսպէս ձեւերով խայտառակեցին եւ աշխարհից դուրս քշեցին:

Իսկ երանելին իր ուսուցչական գործն աներով՝ կարդի դրեց ու վերջացրեց: Եւ եկեղեցու հայրերի113 չատ չնորհագիր մատեաններ ձեռք բերելով՝ իր վարդապետութեան խորութիւնը ծովացնում էր եւ լիքը լցնում էր ամէն բարութիւններով:

Այն ժամանակ եկաւ, հանդիպեց նրան մի երէց մարդ, աղդով՝ աղուան114, անունը՝ Բենիամին: Եւ նա**) հարցրեց ու քննեց աղուաներէն լեղուի բարբարոս խօսքերը, ապա վերուստ պարգեւուած իր սովորական կորովամտութեամբ նշանագրեր յօրինեց եւ Քրիստոսի չնորհքի աջողութեամբ՝ կշռադատեց, կարգաւորեց, հաստատեց:

---

*) Այսինքն՝ սաստիկ ծեծեցին:

**) Մաշթոցը:

Ցետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց, յիշխանաց աշխարհին եւ ամենայն եկեղեցեաց· առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ ղերկուս ոմանս յիւրոց աշակերտացն, որոց առաջնոյն Ենովք անուն էր, եւ երկրորդին Դանան, արք կրօնաւորք եւ յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն· զորս յանձն արարեալ չնորհացն Աստուծոյ՝ անդէն զետեղէր: Եւ ինքն բազում աշակերտօք գայր, անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց եւ հասեալ ի Նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս115 կոչէին, եւ ամենայն բանակին: Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց չնորհացն Աստուծոյ, զաղարէր անդաւուրս ինչ, մխիթարէր վասն հոգեւոր անճուկն սփռելոյ:

[ժէ]

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ· որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի: Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր: Եւ նոցա երկոցունց զուդակցելոց, եպիսկոպոսին եւ թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ· տային եւս հրաման՝ ի գաւառաց եւ ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել եւ դումարել՝ ըստ արժանաւոր եւ պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց, եւ ռճիկս կարդել ի գարմանս:

Իսկ իրրեւ հրամանն այն արդեամբք եւ գործովք յանկ ելանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի եւ ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային զրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յաւէտ թօթափել վայրենամիտ եւ դաժարկասուն եւ անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարդարէապէտք եւ առաքելածանօթք եւ աւետարանաժառանգք լինէին, եւ ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ

1 bcd *եւ իշխանաց*
2 b *եկեղեցեայց*
3 c *որոյ* lմիւսն· *որ* ուղղ· *որոց*
3–4 b *անուանէր*
6–7 bc *կողմանց*
11 b *մխիթարեալ*
15 d չիf *անուն*
16 de *Արսվաղէ*
16 de չիf *էր*
17 b *յորոյ* l c *որոց* l միւսն· *որոյ*
18 b *ի նոցանէն*
19 բոլորը *զուդացելոց* ուղղ· *զուդակցելոց*
21 b *տեղաց*
21–22 bc *մանկանցն*
27 bc *վայրենամարաք*
27 bc *դաժարկասունք*

Դրանից յետոյ բաժանուեց եպիսկոպոսներից, աշխարհի իշխաններից եւ բոլոր եկեղեցիներից: Նրանց մօտ հաւատացեալների համար վերակացուներ թողեց իր աշակերտներից երկուսին, որոնց առաջինի անունը Ենովք էր, եւ երկրորդինը՝ Դանան, կրօնաւոր եւ աւետարանական սպասաւորութեան մէջ առաջադէմ մարդիկ, որոնց յանձնարարելով Աստծու չնորհքին՝ հէնց այնտեղ տեղաւորեց: Եւ ինքը չատ աշակերտներով եկաւ, անցաւ Մեծ Հայաստանի կողմերը եւ Նոր Քաղաքը հասնելով՝ ներկայացաւ սուրբ եպիսկոպոս Սահակին եւ հայոց թագաւորին, որի անունն Արտաշէս115 էր, եւ բոլոր քանակին. եւ պատմեց նրանց այն կողմերում Աստուծու չնորհքի աջողութեամբ [կատարած] գործերը, մի քանի օր մնաց այնտեղ, յորդորեց [նրանց]՝ հոգեւոր սէր սիրելու համար:

[ԺԷ]

Եւ ապա դրանից յետոյ մնաք բարով ասաց՝ Աղուանքի կողմերը գնալու համար: Եւ գնաց, իջաւ նրանց աշխարհը եւ հասնելով թագաւորական տեղերը՝ տեսաւ Աղուաննեըի սուրբ եպիսկոպոսին, որի անունը Երեմիա էին ասում, եւ նրանց թագաւորին, որի անունն Արսվաղ էր, որոնք եւ բոլոր ազատանիներով հանդերձ մեծ հնազանդութեամբ ընդունեցին [նրան] Քրիստոսի անուան համար: Ապա երբ հարցրին, նա բացատրեց իր գալու նպատակը: Եւ նրանք երկու զուգակիցները, եպիսկոպոսն ու թագաւորը, յանձն առան ընդունել ջկրութիւնը եւ հրամայեցին իրենց իշխանութեան գաւառներից ու տեղերից գլորութեան արուեստի համար բազմաթիւ մանուկներ բերել, ժողովել, արժանաւոր ու յարմարաւոր տեղերում դասատներդլրոցներ [կազմել] եւ [նրանց] ապրուստի համար թոշակ նշանակել:

Իսկ երբ հրամանն իսկապէս գործով գլուխ եկաւ, ապա այնուհետեւ երանելի Երեմիա եպիսկոպոսն սկսեց չուտով աստուածային գրքերի թարգմանութիւնն անել, որով իսկոյն մի ակնթարթում Աղուանքի վայրենամիտ եւ դատարկասուն եւ անասնաբարոյ մարդիկը մարդարէացէա եւ առաքելածանօթ եւ աւետարանի ժառանգներ

իւիք անտեղեակք: Դարձեալ առաւել եւս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ վուխթով հրաման տայր սատանայակիր եւ դիւամոլ ազգին սասուիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն եւ հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի:

Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ եւ լցեալ զպիտոյն իւրեանց եւ զկամացն յօժարութիւն, ձեռնառու եւս եղեալ նմա սրբոյ վարդապետութեանն ի Բաղասականից116 կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա եւ ի թագաւորէն եւ յեպիսկոպոսացն եւ յամենայն եկեղեցւոյն Աղուանից: Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անունն Ցոլնաթան կոչէին, որոյ բազում յօժարութիւն ի վարդապետութենէն էր գտեալ:

Եւ յանձն առնելով զնոսա եւ զանձն՝ ամենապահ չնորհացն Աստուծոյ, խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաչխարհն Վրաց:

[ԺԸ]

Եւ հանդիպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն117: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում [անուն] Խուրս կոչէին, եւ ասպընջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով: Առաւելագոյն իսկ վայելեալ ի հիւթ եւ ի պարարտութիւն վարդապետութեանն, յուղարկէ զերանելին՝ ուր եւ երթալոցն էր: Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանն:

Առ որով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորեալ վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն. եւ նորա չրջեալ զամենայն աշակերտօքն, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն:

Ցայնժամ իշխանին Տաշրացւոց118, առն պատուականի եւ աստուա-

2 b սատանակիր
3 bc յունայնավայր հնացելոյն
5 b արեալ
6 b զյօժարութիւնն l c. յօժարութիւնն
6 վ ձեռնտու
6–7 bc սատմատոյց
7 bc վարդապետութեամբն
8 բոլորը չիf անուն. տես էջ 70 տ. 8–9, 15–16 եւ այլն
19 bc Խուրսն
22 ce վարդապետութեան
27 aվ աչակերտօք l c աչակերտելօքն
27–28 dce ճշմարտութեան

դարձան եւ բոլոր աստուածային աւանդութիւններին ոչ մի բանով անտեղեակ [չմնացին]: Դարձեալ՝ Աղուանքի աստուածավախ թագաւորն աւելի եւս հաւատարիմ հոգացողութեամբ սաստիկ հրամայեց սատանայակիր եւ դիւամոլ ժողովրդին՝ ձեռք քաշել, աղատուել հնացած դատարկ բաներից եւ հնազանդուել Քրիստոսի ամենահեշտ լծին:

Եւ երբ այդ արին հաւատարապէս եւ կատարեցին՝ ինչ որ իրենց պէտք էր եւ ինչ որ ուղում էր,— նրան իր սրբամատոյց վարդապետութեան համար Բաղասական116 կողմերում օձնեց նաեւ սուրբ եպիսկոպոսը, որի անունն էր Մուշեղ,— ապա նա բաժանուեց եւ Աղուանքի թագաւորից եւ եպիսկոպոսներից ու բոլոր եկեղեցուց: Եւ իր աշակերտներից մի քանիսին նրանց վրայ վերակացու կարգեց, արքունական դռան մի քահանայի հետ, որի անունը Յովնաթան էր, որ եւ մեծ յօժարութիւն էր ցոյց տուել նրա վարդապետութեան համար:

Եւ նրանց ու ինքն իրեն յանձնելով Աստուծու ամենապահ չնորհքին՝ ճանապարհ ընկաւ, Աղուանքի կողմերից եկաւ Վրաց աշխարհն անցնելու համար:

[ԺԸ]

Եւ եկաւ հասաւ Գարդմանական ձորի117 դիմաց: Նրա առաջ դուրս եկաւ Գարդմանքի իշխանը, որին Նուրս էին անուանում, եւ աստուածասէր երկիւղածութեամբ հիւրընկալելով նրան՝ ինքն իրեն, իր իշխանութեամբ հանդերձ, տրամադրեց վարդապետին: Նրա վարդապետութեան հիւթն ու պարարտութիւնը չատ վայելելուց յետոյ՝ [իշխանը] երանելիին ճանապարհ դրեց դէպի ուր որ գնալու էր, իսկ նա անցաւ, դիմեց այն կողմերը:

Այն ժամանակները Վրաստանի թագաւոր եղաւ Արձիւղ անունով [մէկը], որ չատ պայծառացրեց, ծաղկեցրեց ուսումը, եւ նա*) չրջեց բոլոր աշակերտների մօտ, պատուիրեց, որ ճշմարտութեան մէջ մընան:

Այն ժամանակ Տաչրացիների118 իշխանը, մի պատուական

---

*) Մաշթոցը:

ծասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն զաւառովն իւրով. եւ նորա ամենափիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ, քան զայլոցն զաւառաց անցուցեալ:

Եւ յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն զառնայր ի կողմանս Հայոց Մեծաց. եւ եկեալ ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ եւ ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնր եւս նորագործ իրացն. որք իրրեւ լուան, առաւել զոհանային զպարգեւացն Աստուծոյ

[ԺԹ]

Ցետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց աղին զդպրութիւն առաւել յարդել եւ զիւրացուցանել: Զեռն ի գործ արկանէր ի թարգմանել եւ ի դրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջադոյն սովորութեանն:

Որոց զարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ119, զոր ի վերոյն յիշեցաք, եւ երկրորդն Եղնիկ120 անուն՝ Այրարատեան զաւառէն, ի կողր գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն դրեալս զարձուսցեն:

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, եւ կատարեալ զհրամանն եւ առ պատուական հարսն առաքեալ, անցեալ զնային ի կողմանս Ցունաց, ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարդէին ըստ հելլենական լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Ցունաց, որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդն՝ Կորիւնս, եւ մատուցեալ յարէին յեղնիկն, իրրեւ առ ընտանեդոյն աննդակից՝ ի կոստանդնիանական քաղաքին, եւ անդ միաբանութեամբ հոդեւոր պիտոյիցն

2 c նորա զիւր ամենասփիւռ
l de զամենասփիւռ վարդապետութեանն
3 b պակասութիւն l c պակասադոյն l d պակասութեամբք
3 c ուղղած ցուցեալ
7 b չիf եւս
8 bc որոց իրրեւ
11 b երկոցունցն
12 cde զդպրութիւնն
12 b դպրացուցանել
12–13 e արկանէր մեծն Իսահակ

ի դրել եւ ի թարգմանել ըստ
15 b եղբայրս
19 b դարձուցին
21 e զնացին
24 b անցելոյ
25 b դիմեալ իջանէր
26 b Ղեւոնդէոս
26 b անուանէր
26 e երկրորդն l միւսն. երկրորդին
26 bc կորիմինոս փոխ. Կորիւնս
26–27 b մատուցեալք
28 bc քաղաքէն

եւ աստուածասէր մարդ, որ անուանուում էր Աչուշա, նրա տրամադրութեան տակ դրեց ինքն իրեն իր ամբողջ գաւառով, եւ նրա*) ամենաստիւռ վարչապետութիւնը, առանց որեւէ պակասութեան, ղեկավարեց, քան բոլոր գաւառներինը:

Եւ յանձնարարելով նրանց սուրբ եպիսկոպոս Սամուէլին,— այն որ վերեւում նշանակեցինք,— ինքը ետ դարձաւ Մեծ Հայաստանի կողմերը. եկաւ սովորական տեղերը, մտերմական ողջոյնը տուեց սուրբ Սահակին եւ բոլոր պատահողներին, պատմեց նրանց այն նոր գործերի մասին եւս: Նրանք որ այդ լսեցին, աւելի դոհութիւն տուին Աստծուն [իր] պարգեւների համար:

[ԺԹ]

Դրանից յետոյ երկու երանելիներն էլ ուշադրութիւն դարձրին, որ իրենց աղքի զբաղութիւնն աւելի զարդացնեն եւ հեշտացնեն: Մեծ Իսահակն սկսեց թարգմանել եւ դրել իր առաջուայ սովորութեամբ:

Պատահեց դարձեալ, որ նրանք իրենց աշակերտներից երկու եղբայրների**), [առաջինը] Յովսէփին119, որ վերեւում յիշեցինք, եւ երկրորդը՝ [Մէկին] Եղնիկ120 անունով, Այրարատեան գաւառից, Կողբ գիւղից, ուղարկեցին Ասորոց կողմերը, Եդեսիա քաղաքը, որպէսզի նրանց սուրբ հայրերի աւանդութիւնները ասորերէն լեզուից հայերէնի դարձնեն ու դրեն:

Իսկ թարգմանիչները հասան այնտեղ, ուր ուղարկուեցին, եւ նրանց պատուէրը կատարեցին եւ [թարգմանութիւններն] ուղարկեցին պատուական հայրերին, [իսկ իրենք] անցան, գնացին յունական կողմերը, ուր եւ ուսանելով եւ հմտանալով՝ կարդուեցին հելլենական լեզուից թարգմանիչներ:

Այս մէջտեղում մի ժամանակ անցնելուց յետոյ՝ պատահեց, որ մեր Հայաստան աշխարհից գիմեցին, իբր յունական կողմերը մի քանի եղբայրներ, որոնց առաջինի անունը Ղեւոնդէս էր, եւ երկրորդը եւս Կորիւնս [էր], եւ Կոստանդնուպոլսական քաղաքում մօտեցան, յարեցին Եղնիկին, իբրեւ ընտանեղոյն աննզակցի, եւ այնտեղ միասին կատարեցին հոգեւոր պիտոյքի խնդի-

*) Մաշտոցի:

**) Եկեղեցական իմաստով եղբայր—կրօնաւոր:

զխնդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր զրոցն եւ բազում չնորհաւիր հարց յետ այնր աւանդութեամբք, եւ Նիկիականն121 եւ Եփեսոսականն122 կանոնօք, զային երեւելով աչխարհին Հայոց, եւ առաջի դնէին հարցն զրերեալ կոտակարանն123 եկեղեցւոյ սրբոյ:

Իսկ երանելւոյն Սահակայ զեկեղեցական զրոց դումարութիւնն՝124 կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց ճշմարիտ զիմաստութիւնն125: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ եղնակաւ126 զյառաջադոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք: Եւ չատ եւս մեկնութիւն զրոց127 թարգմանէին:

Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս զրոց ծախէին հարքն՝ զտիւ եւ զդիչեր, եւ նովիմբ ծաղկեալք եւ չհաւատեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին. մանաւանդ զի ունէին պատուիրանս զղուչացուցիչս յաստուածակարդ պատգամաւորացն128. յորոց առաջինն հրամայէ, թէ՝ «Ցօրէնս Տեառն խորհեցիս ի տուէ եւ ի դիչերի»129. եւ երկրորդն հանդոյն նմին պատուիրէ, թէ՝ «Մի՛ տ դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյթ առնել զչնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեա՛ եւ ի դոյն յամենչիր. զայդ եթէ առնիցես, ե՛ւ զանձն ապրեցուսցես, ե՛ւ զայնոսիկ, որ քեզն լսիցեն»130:

1 բոլորը՝ *որոյ* ուղղ. *որոց*
2 bc *հայոց* փոխ. *հարց*
2 bc *այն* փոխ. *այնր*
7 b *ի յունական* l միւսն. չիf *ի*
9 բոլորը *եղնակաւ* l *U եղնկաւ*
10 c *զփոխանակի*
10 c *ճշմարիտն* l b *զճշմարիտ օրինօք բերելօք*
11 b *չատ այլեւս*
11 e *մեկնութիւն թարգմանէին զրոց*
12 bc *ընթերցուածոց*
14 b *առ ընթերակաց* l c *ընթերակացիցն* l միւսն. *առ ընթերակայից*
15 c *զղացուցիչս*
15–16 e *պատգամաւորաց*
16 b *յորոցն առաջին*
17 c *հանդոյն նմին* l միւսն. չիf *նմին*
18 b *մխիթարութեանն*
20 bc *ապրեցուցանես*
20–21 c *որք քեզն*

ըը*): Յետոյ նրանք աստուածատուր դրքերի**) հաստատուն օրինակներով եւ շատ չնորհազիր հայրերի հետազայ աւանդութիւններով եւ Նիկիական121 ու Եփեսոսական122 կանոններով՝ եկան, երեւացին Հայոց աշխարհում եւ հայրերի առաջ դրեցին սուրբ եկեղեցու կտակարանները123, որ բերել էին իրենք:

Իսկ երանելի Սահակն առաջ յունարէն լեզուից հայերէն էր դարձըրել եկեղեցական դրքերի124 ամբողջութիւնը եւ շատ սուրբ հայրապետների իմաստութիւն125: Դրանից յետոյ դարձեալ նա Եղնակի126 հետ միասին սկսեց [եւ] առաջուայ յանկարծադիւտ չտապովի թարգմանութիւնները***) հաստատեց բերուած ստոյգ օրինակներով: Եւ Գրքի****) շատ էլ մեկնութիւն127 թարգմանեցին:

Եւ այսպէս՝ հայրերն իրենց բոլոր ժամանակը, օր ու գիշեր, դրքերի ընթերցանութեամբ էին անցկացնում եւ դրանով ծաղկած ու չահուած՝ բարի օրինակ էին դառնում [իրենց] ուսումնասէր ընթերականերին, մանաւանդ որ ղուչացուցիչ պատուիրաններ ունէին Աստծու կարդած պատգամաւորներից128, որոնց առաջինը հրամայում է, թէ՝ «Տիրոջ օրէնքի մասին պիտի խորհես գիշեր ցերեկ129», եւ երկրորդը նմանապէս պատուիրում է. «Ուշադրութիւն դարձրու ընթերցանութեան, մխիթարութեան, վարդապետութեան. անփոյթ չպիտի լինես չնորհքիդ վերաբերմամբ, որ կայ քեզնում. այդ մասին խորհիր. եւ դրանով անցրու ժամանակդ. եթէ այդ անես, կ'ազատես եւ քեզ եւ նրանց, որ քեզ կը լսեն»130:

---

*) Այսինքն՝ թարգմանութեան դործը:

**) Աստուածաշնչի:

***) Ս. Գրքի թարգմանութիւնները:

****) Աստուածաշնչի, Ս. Գրքի, որ հին հեղինակները կոչում են նաեւ պարզապէս Գիր կամ Գիրք:

[Ի]

Ապա յետ այնորիկ զարձեալ՝ այնպիսի առաւել եւ բարձրադոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախադոյնս131, դիւրապատում, չնորհազիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ դրոց մարդարէականաց կարդել եւ յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան: Ցորս բազում նմանութիւնս եւ օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն, յերիւրեալ կազմեալ, վէ հեչտընկալք եւ դիւրահասոյցք տխմարադունիցն եւ մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել եւ զարթուցանել եւ հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել:

[ԻԱ]

Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց, Վրաց եւ Աղուանից զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն եւ զձմեռն, զտիւ եւ զգիչեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ իւրով իսկ աւետարանական եւ ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց եւ իշխանաց եւ ամենայն հեթանոսաց եւ անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Քիստոսի անուն կրեաց յանձին: Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ եւ հոգեղէն

2 բոլորը՝ չիf այնորիկ· ուղղ· ըստ էջ 70· տ· 13· եւ այլն
2 ձա ձբ ապա յետ այնպիսի առաւել: Այստեղից վերսկսւում են ձա ձբ
2 c յետս դարձեալ
3 b վարդապետութեանն ձա ձբ վարդապետութեան
3 ձա ձբ Մեսրովբայ փոխ· Մաշթոցի
3–4 b յաջախագոյնս
4 b եւ չնորհազիրս l ձա ձբ չնորհազիւտս
4 ձա ձբ բազմադիմիս ի զորութենէ եւ
5 c մաքրականաց
6 ձա ձբ չիf ճաշակօք աւետարանական
6 ձա ձբ կարդեալ եւ յօրինեալ լի ամենայն հաւատոցն
6 b ճշմարտութեանն
6 ձա ձբ չիf 6րդ տողի «Ցորս բազում» բառից մինչեւ 11րդ տողի քաջալերել ներառեալ
7 b յանցաւորաց
8 b կազմի
9 b տխմարադունիցն l միւսն· ախմարադունիցն
10 b սրաղելոցս
10 b եւ ի զարթուցանել
13 b այսպէս
13 բոլորը զամենայն ուղղ· յամենայն
13 ձա ձբ Հայոց եւ
14 ձա ձբ աւուրս փոխ· ժամանակս
15 e չիf եւ (առանց)
15 ձա ձբ իւրով իսկ l միւսն· իսկ, իւրով
15–16 ձա ձբ ողջունաւտու փոխ· ողջապատում
16 ձա ձբ չիf եւ (ամենայն)
16–17 c չիf հեթանոսաց եւ
17 c ընդդիմակաց l e անընդդիմակացն
17 ձա ձբ չիf ի
17 bc ձա ձբ զանուն Քիստոսի
18 ձա ձբ չիf յանձին
18 ձա ձբ քրիստոսազգեստս եւ հոգեղէնս

[Ի]

Ասպա դրանից յետոյ դարձեալ՝ երանելի Մաշթոցն իր այնպիսի չատ ու բարձրագոյն ուսումով սկսեց կարդել եւ յօրինել յաճախագոյն131, դիւրապատում, չնորհադիր, բազմադիմի ճառեր մարդաբէական դրքերի լուսաւորութիւնից ու հիւթից, աւետարանական ճշմարիտ հաւատքի ամէն ճաշակներով լիքը: Դրանց մէջ՝ աւելի հանդերձեալ կեանքի յարութենական յոյսի վերաբերեալ՝ չատ նըմանութիւններ եւ օրինակներ յերիւրեց, կազմեց աշխարհիս անցաւոր բաներից, որպէսզի տխմարներին ու մարմնական բաներով զբաղուածներին հեչտ ընդունելի եւ հեչտ հասկանալի լինին՝ [նրանց] սթափեցնելու ու զարթեցնելու եւ խոստացուած պարգեւների նկատմամբ հիմնովին քաջալերելու համար:

[ԻԱ]

Եւ այսպէս՝ Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանքի բոլոր կողմերում իր ամբողջ կեանքի ընթացքում ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, անվեհեր եւ առանց բնաւ յապաղելու, իր իսկ աւետարանական եւ ողջապատում վարքով ամենափրկիչ Յիսուսի անունը կրեց իր անձի վրայ թագաւորների, իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ եւ առանց ընդդիմութեան հակառակորդների կողմից: Եւ ամէն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով ու հոգեպէս, եւ չատ բան-

վառեաց, եւ բազում բանդականաց եւ կալանաւորաց եւ ապաշխարից ի բանտարգաց Թոդոսիոն արարեալ՝ կորզելով զնոսա անհաւատ զգեստեղէնսն Քրիստոսի։ Եւ բազում մարդկան անիրաւութեան պատառեալ, եւ բազում ողաւորաց եւ կարճամաղեաց՝ մխիթարական վարդապետաւթեամբն զանկարգութիւն յատկի բան յայտնութեան վառաց մեծին Աստուծոյ փրկչին մերոյ Քրիստոսի132 նախնեաց։ Եւ զամենայն ժխանգամայն յաստուածապաշտութեան պայման անդր վտխեաց։

[իբ]

Եւ զարձեալ բազում եւ անհամար զանգս վանականաց ի չէնս եւ յանչէնս, զաչատականս եւ լեռնականս, անմատոյցս եւ արդելականս133 բնակեցուցեալ հաստատէր։ Զոր ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր։ առեալ զոմանս յաչակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն եւ երթեալ լեռնակաց, որոմտուտ ծակախիթ եղեալ՝ զաւօրէական զկերակուրն խոտարուտ ճաշակօքն վճարէին։ Եւ այնպէս վշտակից ակարութեան զանձինս տային, մանաւանդ որոց հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բանիցն, թէ՝ «Ցորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ»134։ Եւ թէ՝ «Վաւ եւս լիցի պարծել ակարութեամբս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի»135։

1 de չիf եւ բազում
1–3 ձա ձր բանդականաց կալականաց եւ տապնապելոց փըրկութիւն արարեալ եւ զօրութեամբ [ձր չիf զօրութեամբ] վառացն Քրիստոսի
2 bcdվ կորզելով l α կորզեալ
3 ձա ձր չիf եւ
3 ձա ձր մուրհակս արիւնագիրս զանիրաւութեան
5 abcde չակընկալ
5 ձա ձր չիf ըստ յայտնութեան վառաց մեծին Աստուծոյ
6 ձա ձր եւ փրկչին
6 bc ձա ձր նուաճեաց
7 c զաստուածպաշտութեան
7 d չիf պայման
7 b անդի l c անտի l ձա ձր անդր l միւսն. անդ
9 ձա ձր չիf եւ անհամար
9 ձա ձր զունդս զունդս
11 ձա ձր զոր
11 b ըստ ժամանակս
11–12 ձա ձր իւրով իսկ անձամբն աւրինակ ցուցանէր l միւսն. իւրով մարմնովն իսկ օրինակ ցուցեալ
12 ձա ձր զոմանս ոմանս
12 e ձա ձր յաչակերտացն
13 c մենաստանեացն
13 bc ծառախիթ
14 bc զաւօրեակն l ձա ձր զաւօրեայ զկենցաղս
14 bc ձա ձր չիf զկերակուրն
14 d խոտարուտ
14–15 abcdeվ չիf եւ (այնպէս)
15 c տկարութեանն
15 b զանձնանային փոխ. զանձինս տային
15 abcdeվ զանձն
15 ձա ձր տուեալ
15 ձա ձր որոյ
16 c մխիթարութիւնն
16–17 ձա ձր «Ցորժամ վասն Քրիստոսի տկարանամ, զաւրացեալ լինիմ»
17–19 ձա ձր չիf լաւ եւս լիցի միչեւ Քրիստոսի

առիւնականը ու կատանաւորնը եւ նեղեալնը ազատեց՝ Քրիստոսի ահաւոր զօրութեամբ կորզելով նրանց բռնակալների ձեռքից: Եւ շատ անլրաւ մուրհակներ պատռեց, եւ շատ պատւորների ու նեղսրտածների իր մխիթարական վարդապետութեամբ ակնկալութիւն ու յոյս տուեց մեծ Աստծու, մեր փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքի յայտնութեան132 ժամանակի համար, եւ ամէնքին ընդհանրապէս՝ վոխեց, աստուածպաշտութեան կարգ ու կանոնի մէջ դրեց:

[ԻԲ]

Եւ դարձեալ չէն ու անչէն տեղերում բնակեցնելով հաստատեց վանականների շատ ու անհամար խմբեր, դաշտական ու լեռնական, անձաւամուտ ու արդելական133: Ժամանակ առ ժամանակ իր անձով հէնց՝ օրինակ էր յոյց տալիս նրանց. ամէն մենաստաններից հետո առնում էր աշակերտներից մի քանիսին, եւ դնում, լեռնակեաց, սոլամուտ*), ծակախիթ էին դառնում, իրենց օրական անունդը խոտեղէն ուտելով էին վերջացնում: Եւ այսպէս վշտակեաց տկարութեան էին անձնատուր լինում, մանաւանդ որ աչքի առաջ ունէին առաքելական խօսքերի մխիթարութիւնը, թէ՝ «երբ տկար եմ Քրիստոսի համար, այն ժամանակ զօրացած եմ լինում»134, եւ թէ՝ «Աւելի լաւ է պարծենամ տկարութեամբս, որպէսզի ինձնում բնակուի Քրիստոսի զօրութիւնը»135:

*) Սոլամուտ լինել — ծակերի, խոռոչների մէջ մանել:

Անդ էր այնուհետեւ չարբենալ գինւով, այլ առաւելուլ հոգւով, եւ պատրաստել զսիրտս երդովք հոգեւորօք135բ, ի վառս եւ ի գովութիւն Աստուծոյ: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդորական վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պսակահաս քրիստոսապիր կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղօթք աղերսալիք, եւ խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած:

Եւ նովին հոգեկրօն արուեստիւն հանէր աւուրս բաղումս յանապատ տեղիս, մինչեւ ազդ լինէր յերիցանց՝ իրաց ինչ օգտակարաց եւ կեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յօդնականութիւն չնորհօքն Քրիստոսի: Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ դործակցօք իջեալ ի թիկունս դիպացն պատահելոց, եւ վճարեալ զօրութեամբն Աստուծոյ, եւ յորդորադոյնս եւ պարարտադոյնս եւ անփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն ի սիրտս լսողացն ծաւալեցուցանէր:

Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր վասն անձին եւ վասն աշխարհի. քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնս կանոն աշակերտելոցն դնել, մանաւանդ յուշ առնելով զտէրունականն՝ զմիոյ `միայնոյ իմաստնոյն Աստուծոյ. «Քանզի սկսաւ ճիտուս առնել եւ ուսուցանել»136: Որոյ բաղում անդամ առեալ զաչակերտսն ուրոյն, եւ աննիւզական անձամբն օրինակ կարօտելոցն լինէր, յորժամ ի Թաբօրական137 լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր, եւ յորժամ ի նմին լերին զկանոնական138 զաղօթս առնէր, մինչդեռ աչակերտքն ի Տիբերական139 ծովուն նաւէին: Եւ դարձեալ յաւուրս բա-

1 ձա ձբ ապա փոխ. այնուհետեւ
1 bc ձա ձբ գինով
1 ձա ձբ առաւելել
1 b հոգով
2 ձա ձբ երդովք լ միւսն. երգօք
2 b ի գովութիւնն լ վ ի գոհութիւն
3 ձա ձբ չիք Աստուծոյ
3 b կրթութիւնն
3 ձա ձբ հոգեպատումն
4 bc քաջալերութիւնն
4 c յորդորականն
4 bc վարդապետութիւնն լ ձա ձբ յորդորական լուսաւոր վարդապետութեանն
5 ձա ձբ ընտրութիւն
5 ձա ձբ պսակահամբար
5–6 b անդ առեալ հոգով c անդ առաւելեալ
6 ձա ձբ պաղատանք փարելիք փոխ. աղօթք աղերսալիք
7 c հեչտացուցիչք
7 bde եւ վասն
9 ձա ձբ նովին լ միւսն. նորին
9 bc ձա ձբ արուեստիւ
10 bcdվ ազատ, փոխ. ազդ
10 ձա ձբ տեղիսն. մինչեւ ազդ լինէր իրացն ինչ հոգեւորաց եկեղեցւոյ [ձբ եկեղե այ] կողմանցն
10 d օգտակարեաց
12 bc ձա ձբ Աստուծոյ փոխ. Քրիստոսի
12–14 ձա ձբ չիք եւ նորա—պարարտադոյնս
13 bc իջանել
15 bc զվատակս
15 ձա ձբ սերմանելեացն փոխ. լսողացն
16 ձա ձբ չիք իւր
17 c սովորութիւն ճշմարիտ վարդապետաց
19 ձա զտեւան հրամանն լ ձբ զհրա-

Այնտեղ այնուհետեւ չէին հաղորդում դինով, այլ լցուում էին հոգով եւ սրտերը հոգեւոր երգերով135բ պատրաստում ի փառս եւ ի գովութիւն Աստծու: Այնտեղ վարժուում էին հոգեպատում դրքերի քաղցրուսոյց ընթերցանութեամբ: Այնտեղ վարդապետի քաջալերութիւնն ու յորդորը, որ ընտրեալներն առաջ դիմելով հասնեն Քրիստոսի դրած պսակահաս կէտին*): Այնտեղ հոգով եռում էին աստուածապաշտական ծառայութեամբ: Այնտեղ աղերսալի աղօթքներ եւ ամէնքի կեանքի համար հաչտեցուցիչ խնդրուածքներ մարդասէր Աստծուց:

Եւ նա այս մխեւնոյն հոգեկրօն արուեստով շատ օրեր անց էր կացնում անապատ տեղերում, մինչեւ որ երէցներից իմաց էր տըրւում [նրան], որ այն կողմերի եկեղեցիներին մի որեւէ օգտակար բանի համար օգնութեան հասնէր Քրիստոսի չնորհքով: Եւ նա առանց բնաւ դանդաղելու՝ իր գործակիցների հետ իջնում էր պատահած դէպքին օգնելու, եւ Աստծու զօրութեամբ վերջացնում էր, եւ անվհատ բերանով աւելի յորդ ու առատ էր ծաւալեցնում վարդապետութեան վտակները լսողների սրտերի մէջ:

Եւ այս անում էր նա իր ամբողջ կեանքում իր անձի եւ աշխարհի համար: Որովհետեւ ճշմարիտ ուսուցիչներն խնամքով սովոր են լրենց առաքինութիւններն աշակերտների համար օրինակ դարձնելու. մանաւանդ որ մտաբերում էր տէրունականը, մի՛միայն իմաստուն Աստծունը. «Որովհետեւ սկսեց Յիսուս գործել եւ սովորեցնել»136: Նա**) շատ անգամ իր աշակերտներին առնում, մի կողմ էր տանում եւ իր անկարօտ անձով օրինակ էր դառնում կարօտեալների համար, երբ Թաբորական137 լեռան վրայ տալիս էր խոստացած երանութիւնը եւ երբ նոյն լեռան վրայ կանոնական138 աղօթքն էր անում, մինչդեռ աշակերտները նաւում էին Տիբերական139 ծովի վրայ: Եւ դարձեալ բաղարջակերաց140 օրերում, օրինական ուտելին, Զիբեդեայ լե-

---

*) «Պսակահաս կէտ» — այն տեղը ուր դրուած է լինում պսակ՝ մրցութեան մէջ յաղթողին տալու համար:

**) Յիսուս:

մանն տեառն փոխ· գոհրունականն

19 bc գմիոյ միայն l ձա ձր չիf գմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուածոյ

20 ձա ձր չիf որոց բազում բանից միևչեւ տպագիրս 84րդ էջի

21րդ տողը՝ առաւելովքն բարձրացուցանէին խօսքը

21 b աննեղնական l c անեզական l e աննիւզ

22 c լերինն

23–24 d աչակերտս

ղարջակերացն140 յօրինական ոճնին՝ ղղիչերոյն ոտօքքն եւ ցայդոյ, ի Զիթատառանաց լերինն141 առանձինն մատուցանէր: Ուստի եւ յայնի իսկ է եւ առանց խուզելոյ, եթէ ոչ վասն անձին ամենատկերն, այլ հատմաչխարհի յուսումն զոյն ղործէր. որ է օրինակ ամենայն հնազանդելոց. վասն որոյ ասէր իսկ. «Արթուն կացէք, զի մի՛ ի փորձութիւն մատնիցէք»142:

Իսկ արդ եթէ թևթեւատոյն արուեստիւ՝ պահատուպն են ի պատուիրանէ ազգք երկրածնացս, ո՛րչափ եւս այնմ արուեստի ոք համապետացի եւ անպիտանալ՝ որ ընդ Աստուած զիւռան կատարէ: Որով երանելին Պաւղոս ամենեցուն տպիտանալ ասէ, վասն որոյ զամենակեցոյդ Հողին ի թիկունս հասանել՝ անմոռունչ հնծութեամբ բարեխօս գիտէ143:

Իսկ արդ յորժամ լսիցեմք, եթէ՝ «սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել»144, ապաքէն առնէ եւ ուսուցանէ, եւ ոչ եթէ զի պարզեւեսցէ իմանալի է: Եւ բարեխօսել նորա վասն սրոյ եւ բարեխօսել Հոգւոյն սրոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ, զի ընդ մխանց բարեխօսելն գիտելի է. քանզի միտպատիւ է ատտուածականն եւ ոչ բազմաբար145:

Իսկ երանելի առաքելոցն ընկալեալ ի վարդապետութենէ ճշմարտութեանն, նախ կարօտական անճանոյն մատակարարէին, եւ ապա աշակերտացն բարձեալ առնէին. երբեմն առանձինն՝ եւ երբեմն ժողովրդովքն զումարելովք՝ զիտան Քրիստոսի առաւելովք146 բարձրացուցանէին. քանզի առաւել օգտակար իսկ է՝ յամենայն աշխարհակիր գործառնոյ առանձինն սահմանել եւ միայն ատտուածպաշտութեանն պարապել, զոր եւ մարգարէքն զործէին, որք ի լերինս եւ յանապատս եւ ի վայրս վիմաց՝ զատտուածեղէն կրօնիցն զծառայութիւն հարկանէին:

1 bc *ցայդոյ*
3 b *առաւելոյ* l c *առաւելլոյ* փոխ. *խուզելոյ*
3–4 c *համայն աշխարհի*
5 bc *արթուն կացէք, յաղօթս կացէք, զի*
5 b *փորձութիւնն*
7 eվ *ի թևթեւատոյն*
7–8 deվ *ի զիւռութեան*
8 abdeվ չիf *եւս*
9 bc չիf *եւ (անպիտանալ)*
9 d *անպիտանայ*
9 bc *ատտուածախօսն* l e *զիւռն*
10 c *վասն որոյ* l abdeվ *որով* փոխ. *որոյ*
9–10 b չիf *վասն որոյ երանելին Պաւղոս ամենեցուն տպիտանալ ասէ*
13 c *եւս առնէ եւ*
14 d *նոցա*
16 bc *բազմաբար*
18–19 bc *աշակերտելոցն*
19–20 d *ժողովուրդք*
20 բոլորը *առաքելովքն* ուղղ. *առաւելովք*: Տես ծան. 146
21 ճա ճր *քանզի եւ*
21 bc *ամենայն*
21–22 b *սրօսանց*
21–22 ճա ճր *սրատտուածոյ աշխարհի*
22 ճա ճր *սահմանել զկիրս*
22 c *յատտուածպաշտութիւն* l ճա ճմ *ատտուածպաշտութեանն*
23 ճա ճր *մարգարէքն յատաջադոյն զործէին* l bc *կռչէին* փոխ. *զործէին*
23 ճա ճր *յանապատս եւ յայրս*
24 ճա ճր *ատտուածեղէն*
24 ճա ճր *զծառայութիւն* l միւսն. *զծառայութիւնն*

ան վրայ141 առանձնացած դիշերուայ աղօթքն էր անում: Ուսոմ եւ առանց քննելու էլ իսկապէս յայտնի է, որ ամէնաառաջը ոչ թէ իր անձի համար, այլ համայն աշխարհին սովորեցնելու համար էր այն պարծում, ինչ որ օրինակ է բոլոր հնազանդուածներին, որի համար ասում էր. «Արթուն կացէք, որ փորձութեան մէջ չմտնէք»:142

Իսկ արդ՝ եթէ հոլածին մարդիկը թեթեւ արուեստների վերաբերմամբ պիտուքիւնից պակաս են, մարդս որչափ եւս [պիտուքիւնից պակաս], նոյնիսկ տգէտ պիտի համարուի այն արուեստի նկատմամբ, որով Աստծու հետ է խօսում: Ուսոմ երանելի Պօղոսն ասում է, որ ամէնքը տգէտ են. դրա համար նա պիտէ, որ ամենակեցոյց Հոգին օգնութեան հասնելով՝ անմռունչ հեծութեամբ բարեխօս է143:

Իսկ արդ՝ երբ լսում ենք, թէ՝ «Սկսեց Յիսուս գործել եւ սովորեցնել»144, ապաքէն նա գործում եւ սովորեցնում է, եւ ոչ թէ [այդ այնպէս] պիտի հասկանալ, [եթէ] որպէսզի պարզեւի: Եւ նրա բարեխօսելը սրբերի համար, [եւ] Սուրբ Հոգու բարեխօսելը, [այդ] մեզ սովորեցնելու նպատակով է, որովհետեւ պէտք է հասկանալ միմեանց փոխանակ բարեխօսել. քանի որ աստուածականը միասատիւ է եւ ոչ թէ բարմապիսի [պատուով]145:

Իսկ երանելի առաքեալները ճշմարտութեան վարդապետից ընդունելով [օրինակը]՝ նախ [իրենց] կարօտ անձերին մատակարարեցին, ապա [այդ] վերցրին, տարան աշակերտներին: Նրանք երբեմն հաւաքուած ժողովուրդների հետ*) չատ ու չատ146 բարձրացնում էին Քրիստոսի փառքը, երբեմն էլ՝ առանձին: Որովհետեւ իսկապէս աւելի օգտակար է բոլոր աշխարհային զբաղմունքներից մի կողմ քաշուել, առանձնանալ եւ միայն աստուածպաշտութեամբ պարապել, ինչ որ անում էին մարգարէները էլ, որոնք լեռներում եւ անապատներում ու քարերի փոսերում**) աստուածային կրօնքի***) ծառայութիւնն էին անում:

---

*) Այսինքն՝ ժողովարաններում:

**) Քարերի ճեղքերում, քարայրերում:

***) Կրօնք — աստուածպաշտական կեանք, կրօնաւորական առաքինի կենցաղավարութիւն:

Նոյնպէս եւ ամենայն հարքն, որք յաջորդեցան յառաքելական կանոնաց, կրեալ անձամբք զլաւութիւնս՝ ընկէն վերջնոցս օրինակ. ուստի երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ, եւ ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ դուչակէր: Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն դանճուցն վայելչութեամբք լցեալք, պարարտացեալք, խաղացեալք զնային ի բազում ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք, ի նմին հանապազորդեալք:

[ԻԹ]

Ցայնմ ժամանակի ընդեալ երեւեցան ի Հայաստան աշխարհին դիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հռոմի, որում Թէոդորոս147 անուն: Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետացն148 եկեղեցեացն սրբոց նչանակեալ՝ ազգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր վուխով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ:

[ԻԹ]

Ցետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելւոյն Սահակայ լցեալ աւուրք երկայն ժամանակօք եւ վայելչացեալ աստուածարեր պտղոցն բարութեամբք, յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի, որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ149 գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասար-

1 b ձա ձր որ
1 c առաքելական
2 ձա ձր կանոնացն
2 bc ի վերջնոցս l d վերջնոյս l ձա ձր վերջնոցն
3 ձա ձր ուստի եւ
3 b բարձեալ է l ձա ձր բարձեալ տանէր
5–7 ձա ձր չիf եւ ամենայն բառից մինչեւ հանապազորդեալք ներառեալ, մինչեւ 7րդ տողի վերջը
6 վ խաղաղացեալք
6 c զնային l միւսն· զային ուղղ· զնային
7 e եւ ի նմին
9 ձա ձր ի Հայաստան l միւսն· չիf ի (Հայաստան)
10 b ձա ձր ընդունայնախօսք
10 ձր աղանդութիւնք
10 b որում l ձա ձր չիf ուրումն l e լուս· աւելացրած՝ աղանդ Թէոմամխոտացւոյ ըստ որոյ եւ զժողովն յԱչիչատ
11 Բոլորը Թէոդիոս, ուղղ·Թէոդորոս
11 c սիւնհոդոսական կանոնին հայրապետացն
12 bc եկեղեցեաց l ձա ձր եկեղեցւոյ սրբոյ
13 ձա ձր Մեսրոբայ փոխ· Մաշթոցի
14 ձ ձր աշխարհալած
14–15 abcdeվ չիf սահմանացն
15 b մերժեսցին l ձա ձր մերժէին
15 ձա ձր չիf ինչ
16 b սատանական
18 ձա ձր երանելւոյն l միւսն· երանելոյն
19 ձա ձր երկայնակեաց

Նոյնպէս եւ բոլոր հայրերը, որոնք առաքելական կանոններից չետոյ են եկել, անճամբ ունենալով բարեպաշտութիւնը՝ մեղ, վերջիններիս, օրինակ ցոյց տուին. ուստի այս երանելին իր վրայ վերցրած ունէր աւանդածների պատիւը, եւ նոյնը պատուիրելով՝ աղդաբարում էր ամէն իրեն մօտեցողներին: Եւ այսպէս չետոյ էլ բոլոր աստուածային դանձերի վայելչութեամբ լցուած, պարարտացած, կենցաղավարում էին չատ ժամանակներ՝ նոյնով նոյնի համար, առաւօտը կանուխ վեր կենալով եւ նոյնի մէջ ամէն օր չարատեւելով:

[ԻԳ]

Այն ժամանակ բերուեցին, երեւացին Հայաստան աշխարհում Թէոդորոս147 անունով մի հոռոմ մարդու աստուածային պատարկաբան աւանդութիւնները: Սուրբ եկեղեցիների սինհոդոսական հայրապետներն148 այդ մասին դրելով իմաց տուին ճշմարտահաւատ վարդապետներ Սահակին եւ Մաշտոցին: Եւ նրանք ճշմարտութեր ջանքով մէջտեղից վերացրին այն, աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին, որպէսզի ոչ մի աստուածային ծուխ չխառնուի լուսաւոր ուսմանը:

[ԻԴ]

Դրանից չետոյ պատահեց, որ երանելի Սահակը նոյն ճշմարտութեամբ, օրերով ու չատ տարիներով լցուած եւ Աստուծու տուած պտուղների բարիքներով վայելչացած, վռամի որդու, Պարսից աշխարհին թագաւոր դարձած Յազկերտի առաջին տարում Բագրեւանդ149 գաւառում, Բլրոցաց գիւղում [էր] նաւասարդ150 ամսի

19–20 ձա ձր եւ վայելեալք յաստուածեղէն քաղցրութեամբ փոխ· եւ վայելչացեալ աստուածարբեր պտղոյն բարութեամբք
20 bc ամին
20 abcdeվ չիf երկրորդ
21 e արքայի փոխ· Թագաւորի
21 ձա ձր չիf ի (Պարսից)
21–22 ձա ձր ի Բագրեւանդ
22 ձա ձր գեօղ Բլրացւոցն
22 e կատարեալ
22 ձա ձր ամսոյն

ղ150, որպէս եւ զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ խունկին151, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ, հայեցեալ ի բան մարգարէին, որ ասէր· «Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ»152· եւ Սեմէոնեան երանելոյ, որ ասէր· «Տէր Յիսուս, ընկալ՛ զհոգի իմ»153: Ըստ նմին օրինակի եւ նորա ապաքրեալ զանձն եւ զմնացեալս ամենապահ չնորհացն Աստուծոյ:

Զոր եւ առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք՝ ձեռնասուն աստուածասէրն պաշտօնէիցն իւրոց, որոց դլխաւորին երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ եւ բարեպաշտօն, հանդերձ աստուածասէրս խչխանակնաւ միով, որ անուանեալ կոչէր Դուսար154, որ էր կին վարպետաց, զոր ի վերնայն յիշեցաք, եւ բազում ամբոխիւ սրբոց ժողովոյ: Բարձեալ գաւազրն սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ հոդեւոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ ութ եւ ընդ դիշեր ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն խակ դիւղն յԱչաիչատ155: Եւ անդ ի մատուռն սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղեալ եւ կնքեալ քրիստոսական կնքովն՝ եւ զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետեւ իւրաքանչիւրն դառնային: Որոց եւ նոյնպէս ամ ամ դումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն:

1 ձա ձր չիf եւ
1 bce ծննդեանն
1 ձա ձր երանելոյն զնոյն համարեալ յիշէին· երրորդ
1 վ լուս· երրորդ
1–2 bc ձա ձր չիf ի (պաշտաման)
2 ձա ձր զանուշոդին
2 ձա ձր չիf իւղոյն
3 bc ծերունոյն
3 e հանդուցեալ փոխ· աւանդեալ
3 e ի բան մարգարէին l միւսն· չիք բան
4–5 d երանելոյն l միւսն· երանելոյ
5 bce ասէր l միւսն· ասէ
5–19 ձա ձր չիf ըստ նմին օրինակի մինչեւ սոյն էջի 19րդ տողը յիշատակն տօնախմբեն: Դրա փոխարէն ունեն Մ· խորենացու հատուածը՝ վասն մահուան սրբոյն Մեսրոպայ: Տեսեալ թէ ի վերջ հասեալ թողաւորութիւնն Հայոց... մինչեւ զհետ երթայր երկնաւորին
9 c որոց l միւսն· որոյ
10–11 b խչխանակնաւ
12 վ վեր նոյն
12 c ամբոխիւ
13 b բարբառովն
15 b դիւղ
16 bc սրբոյն l միւսն· սրբոցն
17 e քրիստոսապրոշմ l վ· քրիստոսապրոշ
19 bc որոյ
19 c ի նոյն յիշատակն
19 b տօնախմբել

վերջում, երբ եւ երանելւոյ ծննդեան օրն էին յիշում. ծերունին օրս-ուայ երկրորդ ժամին, անուշահոտ խունկ պաշտամունքի151 ժամանակ աստուածահաճոյ աղօթքներով [հոգին] Քրիստոսին աւանդեց, հետեւելով մարգարէի խօսքին, որ ասում էր. «Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին»152, եւ երանելի Ստեփանոսին, որ ասում էր. «Տէ՛ր Յիսուս, ընդունիր իմ հոգին»153: Նոյնպէս եւ նա լրեն եւ մնացածներին յանձնարարեց Աստուծու ամենասուրբ չնորհքին:

Շուտով ամենայն պատրաստութեամբ վերցրին նրան իր ձեռնասուն աստուածասէր պաշտօնեաները, որոնց ղեկավարի անունը Երեմիա էր, մի սուրբ եւ բարեպաշտ մարդ,— Դուստր154 անունով մի աստուածասէր իշխանակնոջ հետ, որ վերեւում յիշած Վարդանի կինն էր, այլ եւ ժողովուած սրբերի*) մեծ բազմութիւնը: Վերցրին սրբին սաղմոսներով եւ օրհնութեամբ ու հոգեւոր երգերով, քիչ օրերից յետոյ օր ու գիշեր [դնալով] հասցրին Տարօն մինչեւ բուն իսկ Աշտիշատ155 գիւղը: Եւ այնտեղ մարտիրոսական խորանում**) դրին [նրան] սրբի տապանի մէջ ամէն անուշահոտ քննկերով ու կնքեցին քրիստոսական կնքով***) եւ օրհնաւոր յիշատակը վրան կատարեցին, այնուհետեւ դարձան իւրաքանչիւրն իր տեղը: Նրանք տարէց տարի էլ հաւաքուելով նոյն ամսին՝ նրա յիշատակի տօնախմբութիւնն են անում:

---

*) Այսինքն՝ վանականների ու միայնակեացների:

**) Մարտիրոսական խորան — մատուռ:

***) Խաչով:

[Իե]

Իսկ երանելի զուզականին լուեալ, զմաչթոցէ ասեմ,, բազում անձկայրեաց տրտմութեամբ եւ արտօսրագութ ողբով եւ ծանրաթախիծ սղովք պաչարեալ դնէր· զի թէ առաքեալն սուրբ ոչ գտեալ առժամայն
5 զընդելակիցն զՏիմոթէոս՝156 անհանդիստ զհոգւոյն ասէ, ո՛րչափ եւս առաւել զմիանգամայն զհրաժարելոցն՝ սաստիկ կիրս մնայելոցն է համարեալ: Բայց թէպէտ եւ միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ չնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր, եւ
10 առաւել փութայր դուն եղեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն: Եւ զցայդ եւ զցերեկ պահօք եւ աղօթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրագոյն բարբառովք՝ զաստուածադիր պատուիրանացն հրամանս յուշ առնելով՝ զղուչացուցանէր ամենայն մարդոյ, մինչեւ բազմագոյնս եւ զժուարագոյն վարուց կրթութիւնս. մանաւանդ զի եւ
15 զմտաւ իսկ ածէր ըստ ծերունական157 հասակին զօր վախճանին, չտայր քուն աչաց եւ ոչ նիրհ արտեւանաց՝ մինչեւ հասանել ի հանդիստն տեառն:

[Իզ]

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրեւ զհոգեւոր եռանդն

2 b զոզականին
2–3 ձա ձր իսկ երանելւոյն Մեսրովբայ բազում անձկայրեաց
3 b անձկարեաց l c անձկալեաց
3 ձա ձր արտօսրակաթ
4 de ողով l b ձա ձր հոգովք փոխ· ոգով
3–7 ձա ձր չիf զի թէ մինչեւ սոյն էջի 7րդ տողի համարեալ
6 b զհրաժարելոյն
6 b մնացելոյն
7 bc միայնաւորութիւնն l ձա ձր մենաւորութեան
7 bc ձա ձր տրտմութիւնն
8–9 ձա ձր զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ
9 e չնորհօք
9 b պակասութեանն
9–11 ձա ձր չիf եւ առաւել մինչեւ քաջութիւն
11 ձա ձր չիf պահօք եւ
12 d ձա ձր բարբառով
12 abcdeվ աստուածադիր
12–13 ձա ձր զաստուածադիր [չիf պատուիրանացն] զհրամանն յուշ
13 bcde յուշ l αվ ուշ
13 b ձա ձր զղուչացուցանէր l միւսն· զղուչացուցեալ
14 c զժուարագոյն
14 ձա ձր բազմաց խստագոյն համարեալ ծանրարեռն զվարուցն կրթութիւն
14 բոլորը կրթութիւն ուղղ· կրթութիւնս
14 ձա ձր չիf եւ (զմտաւ)
15 ձա ձր չիf իսկ
15 ձա ձր ծերունական l միւսն· տէրունական
15 bc զաւուր
16 ձա ձր արտեւանաց եւ ոչ հանդիստ մինչեւ
16 de հանդիստ

[Իե]

Իսկ երանելի զուգականն*) [այդ] լսելով,— Մաչթոցի մասին եմ ասում,— չատ կարօտով այրուածՙ ընկել էր տրտմութեան եւ արտասուալի, դժաշարժ ողբերի ու ծանրաթախիծ սուգի մէջ. որովհետեւ եթէ սուրբ առաքեալը մի առժամանակ [իր մօտ] չպտնելով իր ընտելակից**) Տիմոթէոսին՝ 156 ասում է, թէ իր հոգին անհանգիստ է, ո՛րչափ աւելի եւս պէտք է կարծել թէ [աշխարհից] բոլորովին հրաժարուողների համար ասստիկ վիշտ կը կրեն մնացողները: Բայց թէպէտ եւ մենակ մնալու տրտմութիւնը չէր թողնում, որ զուարթանայ, սակայն աւետարանական ընթացքն ու սուրբ եկեղեցու վերակացութիւնը Աստծու չնորհքով առանց պակասութեան առաջ էր տանում եւ աւելի եւս հոգում, ջանք էր թափում, ամէնքին յորդորում, որ լաւ ու բարի լինեն: Եւ դիշեր-ցերեկ պահքով ու աղօթքով եւ ուժգին խնդրուածքներով ու բարձր ձայնով յիշեցնելով աստուածադիր պատուիրաններն ու հրամանները՝ զգուշացնում էր ամէն մարդու, [կատարում էր ճշնական] վարքի նոյնիսկ բազմատեսակ եւ դժուարագոյն կրթանքները. մանաւանդ որ ծերունական157 հասակի պատճառով մտաբերում էր իր վերջին օրը, քուն չէր տալիս աչքերին եւ ոչ արտեւանունքներին նիրհ՝ մինչեւ Տիրոջ հանդստին հասնելը:

[Իզ]

Եւ մինչդեռ այնպէս իր մօտին եղող մերձաւորների

---

*) Զուգական — երկու հաւասար ընկերներից մէկը, ամուսնակից:

**) Ընտելակից — ընկեր, որին վարժուած, ընտելացած է մարդ:

ածէր, եւ բաղում թուղթս խրատապիրս եւ զդուշացուցիչս ընդ ամենայն դաւառս առաքէր, անդէն ի նմին ամի, յետ ամաց վեցից անցելոց վախճանի երանելւոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով վարդապետաւն բանակն Հայոց յԱյրարատեան ի Նոր Քաղաք, եւ նովին հողեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կառարումն, յետ առեալ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի158: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտացն եւ խառնեալ ի դունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ եւ սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն մէջ, եւ համբարձեալ զձեռն հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր չնորհացն Աստուծոյ, ասէ նոցա օրհնականութիւն հայցէր:

Եւ անուանք պլխաւորաց աշակերտացն ժողովելոցն են այս. առաջնում Յովսէփ, զոր եւ ի սկզբան պրեցաք. երկրորդին Թադիկ. արք զդաստաք, զդուշապոյնք հրամանաց վարդապետութեանն: Ի պինուորականն կոչմանէն առաջնումն Վահան անուն յորդէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց. եւ երկրորդին Համայեակ՝159 ի Մամիկոնեան տոհմէն, արք պատուականք, երկիւղածք, հրամանակատարք վարդապետական հրամանաց: Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր չողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք

1–2 ձա ձր չիf եւ բաղում մինչեւ առաքէր
1 b զդուշացուցիչս l միւսն. զդացուցիչս
2 d ի նոյն ամի
2 ձա ձր յետ ամաց վեցից
3 d ձա ձր երանելւոյն l միւսն. երանելոյն
3 abcdeվ վարդապետով
4 ձա ձր ի բանակն
4 ձա ձր յԱյրարատ
4 b ձա ձր նորին վոխ. նովին
5 ձա ձր չիf սրբոյն
5 ձա ձր ի քրիստոսակոչ
6 ձա ձր երեքտասաներորդի ամսոյն
7 ձա ձր չիf եւ (յորժամ)
7 ձա ձր չիf որոշեալ
7 abcdeվ աշակերտաց
7–8 ձա ձր աշակերտացն ի դունդն Քրիստոսի հասանէր խառնեալ թեթեւացեալ եւ սթափեալ ի ցաւոցն
9–10 ձա ձր ի ժողովոյն ի մէջի, եւ համբարձեալ զձեռն իւր համատարած յերկինս զամենայն
10 ձա ձր առնելոյ
12 ձա ձր պլխաւորացն ժողովելոց աշակերտացն էին այսոքիկ
12 d ժողովոյն l e ժողովոյն
13 ձա ձր չիf. զոր եւ ի սկզբան պրեցաք
14 d եւ զդուշապոյնք
14 ձա ձր զդուշապոյնս վարդապետական հրամանացն
14–15 c եւ ի պինուորականն
14–15 ձա ձր իսկ ի պինուորացն: [չիf կոչմանն]
15 abcdeվ կոչմանն ուղղ. կոչմանէն
15 ձա ձր առաջինն
15 ձա ձր չիf անուն
17–18 bc երկիւղածք աստուածասէրք l d երկիւղածք l ձա ձր եւ երկիւղածք, աստուածասէրք, հրամանակատարք վարդապետական բանիւ
18 ձա ձր չիf ընդ երկինս
19 ձա ձր խաչանշան
19 ձա ձր չողացեալ ի վերայ
19 ձա ձր չիf ձեւ երեւէր l c ձեւով երեւէր
20 ձա զք վոխ. ուրուք

հոգևոր եռանդը չարժում էր եւ չատ խրատական ու պղուչայուսիչ թղթեր էր ուղարկում բոլոր պաւառնեըը, հէնց մխեւնոյն ատրում, երանելի Սահակի մահից վեց ամիս անցնելուց յետոյ, Հայոց բանակը սուրբ Վարդապետի հետ միասին գտնուում էր Այրարատեան Նոր Քաղաքում, եւ միեւնոյն հոգեկրօն վարքով հասաւ սրբի քրիստոսասիրչ վախճանը մի քանի օրուայ հիւանդութիւնից յետոյ մեհենական ամսի տասներեքին158: Եւ երբ պիտի ձեռնասուն աշակերտների մէջից պատուէր եւ Քրիստոսի գնդին խառնուէր, յաւերից թեթեւանալով եւ սթափութեամբ՝ վեր կացաւ նստից ժողովի մէջ եւ ձեռքերը հանապատատած երկինք բարձրացրած՝ բոլոր մնացողներին յանձնարարից Աստուծու շնորհքին, նրանց համար օղնութիւն խնդրից:

Եւ [այնտեղ] ժողովուած պլխաւոր աշակերտների անուններն այս են. առաջինինը՝ Յովսէփ, որ եւ սկզբում պրեցինք. երկրորդինը՝ Թադիկ, պատա [ու] Վարդապետի հրամաններն նկատմամբ չատ պղոյչ մարդիկ: Զինուորական կողմից առաջինի անունը՝ Վահան, Ամատունի ցեղից, որ Մեծ Հայաստանի հազարապետն էր, եւ երկրորդինը՝ Համազասպ159, Մամիկոնեան տոհմից,— պատուական, երկիւղած [ու] Վարդապետի հրամանները կատարող մարդիկ:

Եւ մինչդեռ սրբի ձեռները կարկառուած էին դէպի երկինք, խաչանման, լուսաւոր չողաւոր ձեւով աքանչելի տեսիլ*) երեւաց այն ապարանքի վրայ, ուր վախճանուում էր երանելին. եւ ամէն մարդ ինքը տեսաւ այդ, եւ ոչ թէ ընկերը պատմից: Եւ նա սրբերին սէր ու

*) Աչքի երեւցած պատկեր, տեսած բան:

ինքնաւռս եղեալ, եւ ոչ առ յընկերէ պատմեալ: Եւ սորա սրբոցն զսէր եւ զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս եւ զհետաւորս օրհնութեամբ պսակէր, եւ զհաճոյական աղօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ:

Զոր առեալ Վահանայ եւ Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աչխարհական ամբոխիւ, սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ հոգեւոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք եւ ջահիւք բորբոքելովք եւ խնկօք բուրելովք եւ ամենայն լուսաճաճանչ պնդիւն, եւ այնու խաչանչան լուսաւոր յառաջախաղաց նչանաւն, յ0չականն160 ելանէին, եւ անդի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիչատակն կատարեալ, ապա նչանն աներեւոյթ լինէր, եւ նոքա յիւրաքանչիւր պառնային տեղիան:

Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունւոյ քրիստոսասէր փութով խորան161 սքանչելի կանգնել տաչածոյ վիմօք քանդակելովք, եւ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանդիսան յօրինեալ: Որոյ ապատս վայելուչս, դունագոյնս, պայծառատեսիլս, ոսկւով եւ արծաթով եւ ակամբք պատուականօք՝ ի յիչատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի պատրաստեալ, եւ ամենայն սրբովք ի միասին դումարելովք զմարմին խաչակրօն վկային Քրիստոսի, երանելոյն Մաշթոցի, ի հանդիստ խորանին փոխէր:

1 c յառ ընկերէ l ձա ձր եւ ոչ ի յընկերէ պատմել
1 c յետ սորա
1 bc սրբոյն l միւսն. սրբոցն
1 ձա ձր զսիրոյ փոխ. զսէր
2 ձա ձր զմիաբանութեան պատուիրան աւանդեալ
2 bcde ձա ձր եւ զմերձաւորս
3 ձր պսակել
3 ձա հատուցանել l ձր մատուցանել փոխ. հասուցեալ
4 b Հմայեկ. ի կազմութեամբ
5 ձա ձր աչխարհակոյտ ամբոխիւն
6 c վառելօք l be վառելօք
7 abcdeվ չիf խնկօք բուրելովք
8 ձա ձր լուսովն փոխ. լուսաւոր
8 ձա ձր յառաջ խաղացեալ l միւսն. առաջ խաղաց: ուղղ. յառաջախաղաց
8 ձա ձր չիf նչանաւն
9 ձա ձր մարտիրոսական բնակութիւնն մատուցեալ
9 ձա ձր եւ զօրինաւոր
9 ձա ձր յիչատակն երանելոյն կատարեալ
10 ձր յիւրաքանչիւր l ձա իւրաքանչիւրն I միւսն. իւրաքանչիւր
10 abcdeվ չիf տեղիան
11 bc յետ ամաց երից
11 ձա ձր յաջողելոյ
11–12 c ձա ձր Ամատունւոյ
12 ձա ձր չիf սքանչելի
12 ձա ձր կանգնեալ
13 c քանդակելովք l միւսն. քանդակելով
13–14 ձա ձր յօրինէր
14 ձա ձր սպատս եւս վայելուչս
14 ձա ձր ոսկւով l միւսն. ոսկով
15 ձա ձր չիf ի
15 d յիչատակին
16 ձա ձր պատրաստեալ l միւսն. պատրաստեաց
17 ձա ձր չիf եւ ամենայն սրբովք ի մասին դումարելովք
17 b սրբովքն
17–17 abdeվ ձա ձր չիf զմարմին b խաչակրայ վկային l ձա ձր խաչական վկայն
17–18 c զխաչակրօն վկային Քրիստոսի հանդերձ երանելեաւն Մաշտոցիւ: Ցետոյ ջնջուած եւ այլ ձեռով ուղղ. լուս. զխաչակրօն մարմին վկային Քրիստոսի երանելոյն Մաշտոցի միւսն. խաչակրօն վկայիցն Քրիստոսի հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ (ձա ձր Մեսրոպաւ փոխ. Մաշթոցիւ ուղղ. զմարմին խաչակրօն
18 ձա ձր փոխէր l միւսն. փոխէ

մխաբանութիւն աւանդեց, մերձաւորներին ու հեռաւորներին օրհնութեամբ պարակեց եւ հաճոյական աղօթքը Քրիստոսին հասցնելով՝ հանդեաւ:

Վահանն ու Հմայեակը, աշխարհական բաղմութեան հետ, վերցրին նրան վախճանուածի պատրաստութեամբ, սաղմոսներով եւ օրհնութեամբ ու հոգեւոր ցնծութիւններով, վառած կանթեղներով ու բորբոքած ջահերով եւ բուրող խնկերով, եւ ամբողջ լուսաճաճանչ աշտանակով, եւ այն լուսաւոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական160 եւ այնտեղ մարտիրոսարանի մէջ դրին, օրինաւոր յիշատակը կատարեցին, ապա նշանն աներեւոյթ եղաւ, եւ նրանք ետ դարձան իւրաքանչիւրն իր տեղը:

Իսկ երեք տարի անցնելուց յետոյ՝ Վահան Ամատունուն յայտնուեց՝ քրիստոսասէր ջանքով սքանչելի տաճար161 կանդնել տաշած, քանդակած քարերով, եւ տաճարի ներսում չինեց Սրբի դերեզմանը: Նա Քրիստոսի կենդանարար մարմնի եւ արքան սեղանի համար վայելուչ, դոյնզդոյն, ոսկով եւ արծաթով ու թանկագին քարերով պայծառափայլ անօթներ պատրաստեց ի յիշատակ, եւ մի տեղ հաւաքուած բոլոր սրբերի*) հետ Քրիստոսի խաչակրօն վկայի, երանելի Մաշթոցի մարմինը փոխադրեց տաճարի դերեզմանը: Եւ նրա թա-

*) Այսինքն՝ վանականների, մենակեացների հետ:

եւ զնորին աշակերտ Թադիկ անուն, զայր զղաստ եւ բարեպաշտօն, հանդերձ եղբարբքն, երանութեանն հասելոյ ապաստարս սրբոյն ի վտառս Աստուծոյ կարգէին:

[Իէ]

Եւ զլխաւորս, վերակացուս, անդադարեալ յայտ արարեալ հալոցն կառավարելոց, որոց առաջինն Յովսէփ162, զլխաւոր ժողովոյն, եւ երկրորդն այլ աշակերտ՝ Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր եւ ճշմարտապատում: Որում զկնի լինէր յետ վախճանի սրբոյն, բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկնպատակ բռնութեանն, ի Տիլբոն163 քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ եւ պիտոսովանողական164 անուն ժառանգեաց, ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց:

Իսկ բարեպատարագին վահանայ165, որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր՝ աշխարհածնունդ հայրենեացն անդհական որդի գտեալ չնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից [լինել] վայելէր166:

[Իը]

Եւ զի ըստ օրինակի դրելոցս առ ի սկզբն հարքն ի կառավարումն դարձան՝ ոչ եթէ ի հին համբաւուց անդեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, եւ առընթերակայ հոգեւորական գործոցն, եւ լսող չնորհապատում վարդա-

1 ձա ձբ զթադիկ
1 ձա ձբ եւ զբարեպաշտօն
2 b հասելոյ l միւսն. հասելոց
2 c սրբոյն l abdeվ սրբոց l ձա ձբ հասանելով՝ սպասաւորել սրբոյն. ի վտառս Աստուծոյ զի նմայ իսկ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ: վերջանում են ձա ձբ ձեռագրերը
6 bc կառավարելոց ըստ յառաջադոյն որոց
6 վ ըստ յառաջագոյն կառավարելոյ վարդապետին
7 bc Յովնան. l de Յօհան
10 b Տիսբոն
13 d բարեպատարագիք
13–14 բոլորը յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր, որ. ուղղ. որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր: Տես ծանօթ. 165, 166
14 բոլորը որդի l U որդի
14 բոլորը աշխարհածնեան l U աշխարհածնունդ (= աշխարհ ծնող, վերածնող)
15 de չիf մերոյ
15–16 U մերձաւոր կենացն յաւիտենից լինէր: Տես ծան. 166
18 dվ կառավարմա l միւսն. կատարում ուղղ. կառավարմն
20 bc ականատեսք
21 bde գործոցն l միւսն. գործոց

դիմ անունով աշակերտին, մի պատառ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ*), երանութեան հասած Սրբի համար**) ապատաւոր կարդեցին ի վառս Աստծու:

[ԻԿ]

Եւ վախճանուած հայրերը յայտարարեցին պէսաւորներ, վերակացուներ, տեղապահներ, որոնց առաջինն էր Յովսէփը162, ժողովի պէսաւորը, եւ երկրորդը՝ մի ուրիշ աշակերտ Յովհան անունով,— մի իսկական սուրբ, վարդապետասէր եւ ճշմարտապատում մարդ: Պատահեց, որ սա Սրբի մահից յետոյ Տիզբոն163 քաղաքում Քրիստոսի համար յաղթութեամբ տարաւ, դիմացաւ չատ եւ պէս պէս փորձութիւններին, չղթայակապ վշտերի, մենամարտիկ [լինելով] ընդդէմ երկպատիկ***) բռնութեան, ուստի եւ խոստովանողական164 անուն ժառանգեց, վերադարձաւ Հայոց երկիրն ի նոյն վերակացութիւն:

Իսկ բարեպատարա****) վահանին165, որ յանկարծ [օդնութեան] էր հասնում ամէնքի կեանքին՝ աշխարհածնունդ հայրերի*****) սեպհական որդին******) հանդիսանալով մեր Աստուած Քրիստոսի շնորհիւ, վայել էր մերձաւոր մասնակից [լինել նրանց] կեանքին166:

[ԻԼ]

Եւ որ հայրերը մեր պրածի համեմատ կատարումն*******) ունեցան, այդ ոչ թէ հին պրոյցներից տեղեկանալով եւ մատենադրելով կարդեցինք, այլ մենք հէնց ականատես եղանք նրանց կերպարանքներին, եւ ընթերակայ՝ [նրանց] հոգեւոր դործերին, եւ լսող՝ նրանց

---

*) Այսինքն՝ հոգեւոր եղբայրների, կրօնաւորների հետ:

**) Այսինքն՝ Մաշթոցի համար:

***) Այսինքն՝ կրկնակի, երկու կերպ բռնութեան, «ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ»:

****) «Բարեպատարա» — բարիքի պատճառ, երախտաւոր:

*****) Այսինքն՝ աշխարհը վերածնող հայրերի — Սահակի եւ Մաշթոցի:

******) Հարազատ որդին իրրեւ հոգեւոր ծնունդ:

*******) կեանքի վախճան:

պետութեանն, եւ նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն։ Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից զհօրէն ի-մոյ կարզեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, եւ ի նշանաւոր վիճակացն[167] քաղելով զհամառօտս կարզեցաք, որ ոչ միայն մեզ, այլ եւ որ զմա-
5 տեանս [168] ընթեռնուն՝ յայտնի է։

Քանզի չէաք իսկ հանդուրժօղք՝ զամենայն արարեալն կատակաւ նշանակել զիւրաքանչիւրսն[169]· այլ ի զիւրազոյնս եւ ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատապարեցաք[170]· որոց անցեալ զրաղմա-խուն արդասիօք սրբոցն՝ առ ի մանրակրկիտ առնելոյ զվարեւորա-
10 զոյնս պատմելոյ զհանդամանս։ Ասացաք ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապայծառ հաւատով եւ վարուք[171] ծանուցեալք յարդեցան, այլ յօրինակ քաջալերիչ՝ հոդեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքօք աշակերտելոց լեզն յաղտս ազգաց։

15 [իթ]

Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք քառասուն եւ հինգ, եւ ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. Թագաւորեալ Կրմանայ[172] Պարսից արքայի ամս վեց. եւ Ցազկերտի ամս քսան եւ մի [եւ վեցամսեայ ուրբ
20 եւ տասն][173], եւ յառաջնումն ամի երկրորդ Ցազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին[174]։

1 d *վարդապետութեան*
1 b *արբանակք*
2 bce *սուտապատում*] միւսն. *սուտապատումն*
3 բոլորը *ի նշանագիմակացն*] U *ի նշանաւոր վիճակացն*
4 բոլորը՝ *քակելով* ուղղ. *քաղելով*
4 բոլորը *զհամատուրսն*] U *զհամառօտս*
4–5 b *զյառաջնոցն*] cde *զմատեանն*] միւսն. *զատենանն*] U *զմատեանս*
6 bc *կատակաւսն*
7 U *նշանակել*] միւսն. չիմ *նշանակել*
7 U *ի զիւրազոյնս*] միւսն. *ի զիւրազոյն*
7–8 bc *առաքելականն*
8 e *անդ*
8 d *որոց*] միւսն. *որոյ*] c լուս. *ուղղ. որ եւ*
9 bc *մանրակրկիտ*] միւսն. *մանրակակիտ*] U *մանրակրկիտան*
9–10 bce *զկարեւորագոյնսն*
10 b *զհանդամանսն*
11–12 բոլորը *ամենապայծառ եւ կենդանաւորս խաչիւն*] U *ամենապայծառ հաւատով եւ վարուք։* Ուղղ. *ըստ* U–ի։ *Տես ծանօթ.* 171
12 c *յաղեցան*
14 b *աղտս ազգաց*
16 adeվ չիմ *ամաց*
16 b *երանելոյն*] միւսն. *երանելոյն*
17 bc *եւ դպրութեանն*
18 bc *Դիմանոյ* ուղղ. *Կրմանայ*
19 բոլորը չիմ *եւ վռամայ ամս ուրբ եւ տասն։ Տես ծանօթ.* 173
20 b *եւ յառնումն*
20 c *ամին*

չնորհապատում ուսման, եւ նրանց արբանեակն՝*) ըստ աւետարանական հրամանների: Ոչ թէ սուտապատում ճարտարախօս լինելով մեր խօսքերով՝ իմ հօր մասին կարդեցինք [այս], այլ չատը թողնելով եւ նշանաւոր դիտակներից167 քաղելով՝**) այս համառօտը գրեցինք, որ ոչ միայն մեզ, այլ եւ այս մատեանը168 կարդացողներին յայտնի է: Որովհետեւ իսկապէս չէինք դիմանալ նրանց իւրաքանչիւրի բոլոր արածները գրքի մէջ նշանակելուն169, ուստի պատրաստարուեցինք170 այս աւելի հեշտ ու դիւրինով — առաքելականով: Սրբերի բազմախուռն վաստակները թողեցինք, որպէսզի մանրամասնօրէն պատմենք կարեւորագոյն հանդամանքները***): [Եւ այս] պատմեցինք ոչ ի պատիւ Աստուծոյ սրբերին, որոնք՝ ամենապայծառ հաւատով ու վարքով171 ճանաչուած՝ յարդուեցին, այլ ի քաջալերիչ օրինակ իրենց հոգեւոր զաւակներին եւ այն ամէնքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդէ սերունդ:

[իթ]

Եւ արդ՝ Երանելիի հաւատքի****) տարիների հաշիւը լինում է քառասուն եւ հինգ տարի, եւ հայոց գրերի մինչեւ Սրբի վախճանը՝ երեսուն եւ հինգ տարի, որ այսպէս են համարւում. Պարսից արքայ Կրմանը172 թագաւորել է վեց տարի եւ Յազկերտը՝*****) քսան եւ մէկ տարի [եւ Վռամը տասնուէօթ տարի]173, եւ Վռամի որդի երկրորդ Յազկերտի առաջին տարում վախճանուեց Երանելին174:

---

*) Գործակից փոքրաւոր, սպասաւոր:

**) «Քաղել» — ժողովել, հարկաւ հարց ու փորձ անելով:

***) Բառացի՝ մանրակրկիտ անելու, կարեւորագոյն հանդամանքները պատմելու համար:

****) Կրօնաւորութեան:

*****) Սա Յազկերտ Առաջինն է:

Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդս՝ ամէն կրմանայ արքայի մինչեւ ցառաջի ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ175, եւ դպրութեանն Հայոց յուխտերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն176:

5 Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

2 bc կոմանայ
2 d յառաջին
5 b արում վրդ. եւ Քրիստոսի մարդասիրին

Եւ արդ՝ սուրբ հաւատքի*) տարինների հաշիւն սկսում է կրճատ արքայի չորրորդ տարուց մինչեւ Վռամի որդի երկրորդ Յազկերտի առաջին տարին175, եւ հայոց դպրութիւնն սկսուել է Յազկերտի**) ութերորդ տարուց176:

Եւ մարդասէր Քրիստոսին փա՛ռք յաւիտեանս. ամէ՛ն:

---

*) Կրօնաւորութեան:

**) Սա Յազկերտ Առաջինն է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Բնագրի մէջ ամէն տեղ է Մաշթոց. միայն այստեղ վերնագրի մէջ է Մեսրովպ, իսկ համառօտ վերնագրի մէջ՝ Մեսրոպ: Ես փոխում եմ՝ Մաշթոց: Տես առաջաբան § 9:

2. Ասքանազեան ազգ — հայոց ազգ: Մեր թարգմանիչները հայերին այսպէս կոչել են նկատի ունենալով Աստուածաշնչի հետեւեալ խօսքը. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան դնդին» (երեմիա, ԾԱ. 27): Երրայեցերէնում է՝ «կոչեցէք ի վերայ դորա զթագաւորութիւնս Արարատայ, Մինուէ եւ Ասքանազայ»: «Արարատ» անունը մեկնաբանները նոյնացրել են Հայաստանի հետ եւ նրա հետ յիշուած «Ասքանազեան դունդն» էլ մեկնել են իբրեւ հայկական դունդ: Համմա. եւ Մ. Խորենացի «Հայ. Պատմ.» Ա. իր. «Եւ զի արդարեւ դայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն, վկայէ եւ Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելովնի ի պատերազմ. Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն եւ Ասքանազեան դնդին»: Ասքանազ անունը յիշւում է Ս. Գրքի մէջ նաեւ Ծննդք, ժ. 3. եւ Ա. Մնացորդաց, Ա. 5. իբրեւ նոյն որդի Յաբեթի թոռ:

3. Բնագիրը տպուած է «հոդացայ». ուղղում եմ «հոդայի», որ կարդացուել է նախ՝ «հոդացի», Յ եւ Յ տառերի չխոթումով. ապա՝ սակաւ գործածուող անց. կատարեալ հոգացի ձեւին փոխանակել է սովորական հոգացայ ձեւը:

4. Այս Յովսէփին կորիւնը յիշում է յետոյ էլ երկու անգամ: Մաշտոցի մահուան ժամանակ ժողովուած դլխաւոր աշակերտների մէջ նա յիշւում է իբրեւ առաջինը՝ «դլխաւոր ժողովոյն»: Սահակն ու Մաշտոցը, մահից առաջ, նրան նշանակում են տեղապահ: — Բայց Ղազար Փարպեցին դրում է, թէ Մաշթոցի մահից յետոյ «յայնորդեաց զաթոռ հայրապետութեան աչխարհիս Հայոց սուրբն Յովսէփ, որ էր ի դաւառէն Վայոց Ձորոյ. ի դեղջէն, որում անուն էր Խողոցիմք» (Դր. Ա. ԺԹ.): Այս Յովսէփը վարդանանց պատերազմի չրջանում կատարում է առանձին դեր: Աւարայրի ճակատամարտից (451թ.) յետոյ նա տարւում է Պարսկաստան, ուր եւ նահատակւում է, այսինքն՝ քրիստոնէական կրօնի համար տպանւում 454 թ.: Տես Ծան. 119:

5. Մովսէս մարգարէն, ըստ աստուածաշնչեան աւանդութեան, հին հրէական ազգի առաջնորդն ու օրէնսդիրը, համարւում է հեղինակ Աստուածաշնչի Հին Կտակարանի առաջին հինգ դրքերի, որոնք կոչւում են Հնգամատեան: «Մովսիսական պատմութիւն» ասելով կորիւնը նկատի ունի Հնգամատեանի առաջին երկու դրքերը, որ են՝ Ծննդք եւ Ելք:

6· Ակնարկում է առաջին մարդ Ադամի որդի Աբելի սրած զոհին, որ Աստուած ընդունում է ըստ աստուածաշնչեան զրոյցի (Ծննդոց, Դ· 4)։ Իսկ «արդար» կոչումն առնուած է հետեւեալից· «Հաւատովք լաւ պատարագս Հարկ քան զկայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել» (Թուղթ առ Եբրայեցիս, ԺԱ· 4)։

7· Ակնարկում է աստուածաշնչեան նախահայրերից Ենովքին, որ 365 տարի ապրելուց յետոյ՝ իբր կենդանի փոխւում է այն աշխարհը։ «Եւ հաճոյ եղեւ Ենովք Աստուծոյ, եւ ոչ ուրեք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած» (Ծննդոց, Ե· 24)։ «Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի զմահ մի՛ ճաշակեսցէ, եւ ոչ ուրեք գտանէր· քանզի փոխեաց զնա Աստուած· եւ յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ» (Առ Եբրայեցիս, ԺԱ· 5)։

8· Ակնարկում է Նոյ նահապետին, որ, ըստ աստուածաշնչեան աւանդութեան, համաշխարհային ջրհեղեղի ժամանակ, հետն առնելով կենդանիներից մի մի զոյգ, մտել է տապանը եւ ազատուել խեղդուելուց (Ծննդոց, Զ· Է· Ը։ Առ Եբրայեցիս, ԺԱ· 7)։

9· Ակնարկում է Աբրահամ նահապետին, որ ըստ աստուածաշնչեան առասպելի, մի քանի անգամ տեսնում է Աստուծուն, դաշնակցում է նրա հետ եւ Աստուած խոստանում է տալ նրան եւ նրա սերունդներին «Աւետեաց երկիրը», որ է Պաղեստինը (Ծննդոց, ԺԲ· ԺԳ· ԺԵ· ԺԷ·)։

10· Պօղոս առաքեալը, քրիստոնէութեան մեծ քարոզիչներից մէկը։ Նրա անունով մնում են Նոր կտակարանի 14 թղթեր, որոնցից մէկն է «Թուղթ առ Եբրայեցիս»։ Կորինը նկատի ունի այդ թղթի ԺԱ· գլուխը։

11· «Հաւատովք Ռահաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որ ընկալեալ էր զլրտեսսն խաղաղութեամբ։ Եւ արդ զի՞նչ եւս ասացից, զի չէ բաւական ժամանակ պատմելոյ»... (Առ Եբրայեցիս, ԺԱ· 31, 32)։ Մովսէսի մահից յետոյ՝ նրա յաջորդ Յեսուն երկու մարդ է ուղարկում «Աւետեաց երկիրը» այսինքն խոստացած երկիրը, Քանանացոց երկիրը (Պաղեստինը) լրտեսելու։ Նրանք իջեւանում են Ռահաբ անունով պոռնիկ կնոջ տանը։ Նա պահում, ազատում է երկու լրտեսներին· սրանք էլ նրան են պահում իր ընտանիքով հանդերձ, երբ հրեաները տիրում են Քանանացոց երկրին (Ելք, Բ· Զ·)։

12· Ներրովէ — Քամի որդի Բուզի որդին ըստ Ս· Գրքի։ Համարւում է հիմնադիրը Բարելոն քաղաքի եւ Բաբելոնի թագաւորութեան։ «Նա սկսաւ լինել հսկայ ի վերայ յերկրի։ Եւ նա էր սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ... Եւ եղեւ սկիզբն թագաւորութեան նորա Բաբելովն» (Ծննդոց Ժ· 8—10)։

13· Սամփսոն — հին հրէական առասպելական հերոս ըստ Ս· Գրքի, դատաւորներից մէկը։ Զարհուրանոց մեծ ուժի տէր է· պատանի հասակում սպանում է մի առիւծ, յետոյ շատ կռիւներ է ունենում հրեաների հարեւան փղշտացիների դէմ (Դատաւորք, ԺԳ—ԺԶ)։

14· Դաւիթ — հին հրէական թագաւոր — մարդարէ։ Պատանի հասակում փղշտացիների դէմ պատերազմի ժամանակ սպանում է փղշտացի հսկայ Գողիաթին։ Յետոյ էլ կատարում է ուրիշ քաջագործութիւններ, պատերազմների մէջ յաղթութիւններ է տանում։ Տիրում է Երուսաղէմին, որ եւ դարձնում է իր մայրա-

քաղաքը: Նրա անունով կան Աստուածաշնչի մէջ բազմաթիւ տաղմոսներ — սրբազան երգեր (Ա. Թագաւորաց ԺԶ.—Լ., Բ. Թագ. Ա—ԻԴ., Գ. Թագ. Ա—Բ.):

15. Յովսէի — հրէական նախահայր Յակոբի որդին, որին ըստ Ս. Գրքի եգիպտոսի փարաւոնը (Թագաւորը), նրա իմաստութեան համար, կարգում է իր երկրի կառավարիչ (Ծննդոց, Լէ—Ը):

16. Դանիէլ — չորս մեծ մարգարէներից մէկը, հրէական Դաւիթ Թագաւորի տոհմից. մանուկ հասակում գերի է տարւում Բաբելոն եւ կրթւում է Նաբուզոդոնոսոր Թագաւորի պալատում: Յայտնի է իր մեծ իմաստութեամբ (Մարգար. Դանիէլի):

17. Բաբելոն — հին Արեւելքի չատ նշանաւոր քաղաք, Եփրատ գետի վրայ, արդի Բաղդատ քաղաքից հարաւ, հին բաբելացոց երկրի ու Թագաւորութեան մայրաքաղաքը:

18. «Միթէ իմաստնագո՞յն էիս քան զԴանիէլ, կամ իմաստո՞ւնք խրատեցին զքեզ հանճարովն իւրեանց» (Եզեկիէլ, ԻԸ. 3):

19. Գալիլիա — Պաղեստինի չորս մեծ բաժանմունքներից մէկը, հիւսիսային կողմում: Գալիլիայի Նազարէթ քաղաքում, ըստ աւետարանական պատմութեան, իբր Գաբրիէլ հրեշտակը ողջոյն է տուել Մարիամ կոյսին (Ղուկ. Ա. 26—28): «Օրհնեալ ես դու ի կանայս» (Ղուկ. Ա. 42):

20. Աբրահամն (ըստ Ծննդոց, ԺԸ.) իբր ընդունում է Աստուծուն երկու հրեշտակների հետ եւ հիւրասիրում է նրանց: Աստուած խոստումներ է անում նրան եւ վերջը յայտնում է նրան Սողոմ եւ Գոմոր քաղաքների կործանման մասին, սկսելով այսպէս. «Միթէ թագո՞ւսա ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ զոր ինչ գործելոց եմ»:

21. Սողոմ — քաղաք Պաղեստինում, Մեռեալ լճի ափին, հիւսիսային կողմում: Ըստ Ս. Գրքի, այդ քաղաքը, Գոմոր քաղաքի հետ (Սողոմից հիւսիս) կործանուում է բնակիչների մեծ անառակութեան պատճառով:

22. Յոբ — Աստուածաշնչի «Գիրք Յոբայ» կոչուած վսեմ բանաստեղծութեան հերոսը, որ յայտնի է իր մեծ համբերութեամբ դժբախտութիւնների մէջ: Մի օր հրեշտակները գալիս են Աստուծու առաջ, սատանան էլ հետները: Աստուած սատանայի առաջ գովում է Յոբին, անուանելով նրան՝ «Այր անարատ, ճշմարիտ, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց» (Յոբ, Ա. 8), եւ թոյլ է տալիս, որ սատանան փորձի Յոբին, ամէն դժբախտութիւններ բերելով նրա գլխին: Այս «պատերազմի» մէջ «պատերազմականի», այսինքն սատանայի հետ՝ յաղթող է ելնում Յոբն իր մեծ համբերութեամբ:

23. Հոթոր — Մովսէս մարգարէի անները: Նա խրատում է Մովսէսին, որ ժողովրդից մարդիկ կարգի դատաւորներ (Ելք ԺՀ. 17—23):

24. «Միածին որդի» — Յիսուսի մակդիրը իբրեւ «միամօր որդի»:

25. Լեռան քարոզի ժամանակ Քրիստոսի տուած երանութիւնները (Մատթ. Ե. 3—11):

26. «Սեփական տաննեկուսը» — Քրիստոսի տաննեկու աշակերտները, առաքեալները:

27. Բնագրի մէջ է՝ «յառաջամուտ կարապետ», նոյն եւ Յովհաննէս Մկրտիչ:

Սովորաբար կոչւում է «յառաջընթաց կարապետ», իբրեւ Քրիստոսից առաջ գնացող, ճանապարհ բաց անող:

28· «Ահա արդարեւ այր իսրայէլի, յորում նենգութիւն ոչ գոյ» (Յովհ.Ա.47):

29· Յովհ. Դ. 46—54· Մատթ. Ը. 5—10· «Եւ ոչ իսրայէլի այսպիսի. հաւատս գտի» (Մատթ. Ը. 10): Իսրայէլ — հրեաներ:

30· «Մատեաւ առ նա կին մի, որ ունէր չիչ իւղոյ ծանրագնի, եւ թափեաց ի գլուխ նորա ի բազմականին»... «Ուր եւ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, խօսեսցի եւ զոր արար դա, ի յիշատակ դորա» (Մատթ. ԻԶ. 7—13):

31· «Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո». (Մատթ. ԺԵ. 28):

32· Այրի կինը երկու լումա է ձգում դանձանակը· «Արդարեւ ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին»... (Ղուկ. ԻԱ. 1—4):

33· «Ասէ ցնա Տէր· «Երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց» (Գործք, Թ. 15):

34· «Այլ Աստուծոյ չնորհքն, որ յամենայնի հոչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս Յիսուս եւ հոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն տեղիս» (Բ.Կորնթ. Բ. 14):

35· «Ո՞վ իցէ որ մեզապիր լինիցի ընտրելոց Աստուծոյ» (Հռոմ. Ը. 33):

36· «Գործք Առաքելոց» — Նոր Կտակարանի գրքերից մէկը, որի մէջ պատմուած են առաքեալների գործերը:

37· «Կաթուղիկէք առաքելոց» — Յակոբ, Պետրոս, Յովհաննէս, Յուդա առաքեալների ընդհանրական թղթերը:

38· «Եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական, նախանձաւոր գործոց բարութեան» (Տիտոս, Բ. 14): «Փոյթ արասցեն գործոց բարեաց վերակացու լինել հաւատացեալքն Աստուծոյ» (Տիտոս, Գ. 8):

39· «Զհետ երթայք սիրոյ եւ նախանձաւոր լերուք հոգեւորացն առաւել» (Ա. Կորնթ. ԺԴ. 1):

40· «Այլ վասն պաշտամանն որ ի սուրբսն է, աւելի է ինձ եւ գրել առ ձեզ: Զի գիտեմ զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ի մէջ Մակեդոնացւոցն, թէ Աքայեցիքն ի հերուն հետէ պատրաստ են, եւ ձեր նախանձն զրազումս յորդորեաց» (Բ. Կորնթ. 1—2):

41· «Բայց լաւ է նախանձաւոր լինել ի բարիս յամենայն ժամ» (Գաղատ. Դ. 18):

42· «Հայեսցուք ի զօրակլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս» (Երր. ԺԲ. 2):

43· «Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ բանն Աստուծոյ, հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Երր. ԺԳ. 7):

44· «Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ եւ ի Քրիստոս Յիսուս» (Փիլիպ. Բ. 5):

45· «Օրինակ առէք, եղբարք, չարչարանաց եւ երկայնմտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն Տեառն: Ահաւասիկ երանեմք համբերողաց, զհամբերութիւն Յովբայ լուարուք, եւ զկատարումն Տեառն տեսէք» (Յակ. Ե. 10—11):

46· «Մինչեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց եւ գիտութեան որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի»

(Եփես. Դ. 13)։ «Այլ մեր առաքինութիւն յերկինս է, ուստի եւ փրկչին ակն ունիմք» (Փիլիպ. Գ. 20)։

47. «Կանոնական» ասում են այն դրուածքները, որ քրիստոնէական եկեղեցին ընդունում է իբրեւ աղբիւր այն կանոնների, որոնցով պիտի առաջնորդուեն եկեղեցու բարեկարգութեան, վարչութեան, կարգ ու կանոնի եւ այլի նկատմամբ։

48. «Երկուսից էլ», այսինքն թէ Ս. Գրքից եւ թէ առաքեալներից յետոյ եկած կանոնական դրուածքներից։

49. Բնագրի այս խօսքը՝ «եւ հայրենակատար մեծարեալ պայմանաւ որ առ ի մէնջ՝ հաճեսցի» մութն է համարուել՝ «հայրենակատար» բառի պատճառով, որ հասկանում եմ «հօր վարքը կատարել», այսինքն դրել։ Իսկ «հաճել» — կատարել, վճարել, վերջացնել, ղլուխ բերել։ — «Զարդարեսցի» — զարդարուն կերպով դրել, ծաղկեցնել, ինչպէս սկզբում հէնց ասում է կորիւնը։

50. Տարօն գաւառը, Հայաստանի Տուրուբերան նահանգի մէջ, Տորոսեան լեռներից հիւսիս, Վանայ լճից դէպի արեւմուտք։ Գլխաւոր քաղաքն է Մուշ, որի անունով եւ վերջին դարերում կոչուել է Մշոյ գաւառ։ Կորիւնն այդ գաւառն անուանում է «Տարօնական գաւառ», երկրորդ անգամ՝ «Նահանգ Տարօնոյ»։

51. «Հայեկայց դիւղը» մինչեւ 1915 թ. դեռ մնում էր. անունը փոխուել դարձել է «Խաս գեղ»։

52. Դուռն, դուռն արքունի — պալատ։ Ուրիշ ձեռագրերի մէջ է «գաւառն», որ է Այրարատեան գաւառը։

53. «Հազարապետ» կոչւում էր բարձրագոյն քաղաքացիական պաշտօնեան Հայաստանում եւ Պարսկաստանում, մեծ վէզիր։

54. Գողթն գաւառ, Սիւնիքում, այժմեան Ալուլիսն իր շրջակայ գիւղերով։

55. Մարք, ի կողմանս մարաց — մարեր, մարերի կողմեր։ Այս անուան տակ չպիտի հասկանալ Մեծ կամ Փոքր Մարաստանը, այլ Մասիս լեռան հիւսիս-արեւելեան կողմից սկսած, երասխ գետի երկու կողմերը, Շարուրի դաշտից մինչեւ Նախիջեւան, Խրամ եւ Ջուղա եւ այլն։ Հնումն այստեղ մարերը (մեդացիք) են բնակուելիս եղել, դրա համար այդ կողմերի անունը մնացել է «Մարք»։

Հին դրողները (եւ ոչ միայն մեր մէջ) քրիստոնեայ քարոզիչներից հալածուած եւ իրենց կուռքերի հետ վախչող քրմերին ու կուռքերին անուանում են «դեւ», իսկ կռապաշտներին՝ դիւապաշտ։

56. «Զի արժանաւորին է լինել յոյժ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ։ Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց եւ ազգականաց ըստ մարմնոյ» (Հռոմ. Թ. 2—3)։

57. Գրիգոր Լուսաւորչի տոհմից Մեծն Ներսէս կաթողիկոսի որդին է Սահակը, որ կաթողիկոս է դառնում հաւանօրէն 390—395 թուականների մէջ։ Ստացել է յունական կրթութիւն, եղել է մեծ դիւտաբեան տէր, ժամանակակից երաժշտական ու հռետորական արուեստին հմուտ, ինչպէս եւ փիլիսոփայութեան։ Պարապել է թարգմանութիւններ անելով։ Երբ 428 թ. Հայաստանի վերջին արշակունի թագաւորը դահընկէց է լինում արքայից արքայ Ցազկերտի ձեռով, Սահակն էլ զրկւում է իր կաթողիկոսական իշխանութիւնից։ Բայց նրա եւ Մեսրոպ Մաշտոցի աշակերտները չարունակում են նրան կաթողիկոս ճանաչել։

58· Բնագիրն է· «Որոյ [=Դանիէլի] յանկարծ ուրեմն դրեալ նշանագիրս աղաւաղեսաց հայերէն լեզուի: Եւ իրրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն դրելոյն ի Դանիէլէ»: Այս խօսքերից առաջինի մէջ բայը ձեռագիրների մեծ մասը չունեն: Դա, ըստ իմաստի, պիտի լինի «դռեալ» — դռել է· ձա ձր ունին «դրեալ»: Երկրորդ նախադասութեան մէջ նոյն դերբայն է, միայն աղճատուած ձեւով այսինքն «դռելոյն» դարձած է «դրելոյն»: Այդ խօսքերն աղճատուած ձեւով նշանակում են Դանիէլը «յանկարծ (=պատահաբար) դրել է նշանագրեր»: «Երբ թագաւորից պատմուեց նրանց Դանիէլից դրուածի մասին», սովորական լեզուով՝ «երբ թագաւորը պատմեց նրանց Դանիէլի դրածի մասին»: Բայց անհեթեթութիւն է ասել թէ Դանիէլը յանկարծ (պատահաբար) նշանագրեր է դրել, հնարել· յանկարծ պատահաբար կարելի է դռնել մի բան, ոչ թէ հնարելու նշանակութեամբ, այլ յայտարերելու: Ապա քիչ առաջ թագաւորը չի ասել, թէ ինքը կամ մէկ ուրիշը Դանիէլից դիր առացած լինի: Եւ այդ ևնթադրել էլ կարելի չէ, քանի որ թագաւորը, նշանագրերը բերել տալու համար, իր նամակն ուղղում է ոչ թէ Դանիէլ եպիսկոպոսին, ինչ որ բնական կը լինէր, եթէ նրանից դրութիւն առացուած լինէր, այլ Հարէլ անունով մի քահանայի, որ այն եպիսկոպոսի մերձաւորն էր, որից եւ թագաւորը, հաւանօրէն, իմացած կը լինէր Դանիէլի դռած (ոչ յօրինելու իմաստով) նշանագրերի մասին: ԴՏԵԼՈՑՆ հնչառութեամբ կարող էր աղճատուելով դառնալ ԴՐԵԼՈՑՆ· բաւական էր միայն Տ տառի ներքեւի կարճ մասը ջնջուէր կամ լաւ չկարդացուէր, այդ տառը Ր տառի հետ կը չխոթուէր: Ըստ այմ՝ վերեւի նախադասութիւնը նշանակում է· «երբ թագաւորը պատմեց նրանց՝ Դանիէլի գռածի մասին»... Եւ վերջապէս՝ թէ «դռեալ» բառը պիտի լինի, այդ երեւում է նրանից, որ «յանկարծ գռած» լինելու բովանդակութիւնը քիչ յետոյ կորիւնը յայտնում է ըստ իր սիրած ոճի մի բարդ բառով· «Առեալ հոդաբարձուացն պյանկարծագիւտ խնդրելին»... (ըստ ձեռագիրների մի մասի՝ «պյանկարծագիւտն» =յանկարծ գտնուածը) յանկարծ գտնուած ուզածը», այսինքն իրենց ուզած նշանագրերը, որ պատահաբար գտնուել էին: Պէտք է հասկանալ Դանիէլի յանկարծ (պատահաբար) գռած, եւ ոչ թէ իրենց, քանի որ իրենք յանկարծ (պատահաբար) չէին գռել այդ նշանագրերը:

Ըստ Մարկուարտի («Հանդէս ամսօրեայ», Վիեննա 1911, էջ 663) յիշւում է ասորի Դանիէլ եպիսկոպոս Արզոնի (Աղձնիքի) 410—424 թ.: կայ եւ Մոկայ Դանիէլ եպիսկոպոս, որ նոյնպէս յիշւում է 412 թ.:

59· Վռամշապուհի «հինգերորդ տարի» թուականն աղճատուած է: Վռամշապուհի հինգերորդ տարում «Դանիէլեան» կոչուած նշանագրերը հասցնում են Թագաւորին· մօտ երկու տարի սովորեցնում են այդ տառերով, յետոյ երբ այդ նշանաձրերը բաւական չեն գտնում, մի քանի ժամանակ, ուրեմն 1—2 տարի, նոյն հոգսի մէջ են ընկնում, եւ ապա նոր, 3—4 տարի յետոյ, Մաշտոցը գնում է Միջագետք: Ուրեմն այդ չէր կարող կատարուել նոյն հինգերորդ տարում: Աղճատուած է երեւում եւ Միջագետքից վերադառնալու տարին — Վռամշապուհի վեցերորդ տարին: Տես ծան. 63: Հր. Աճառեանը (Տեղեկագիր Գիտ. Ակ. Հ. Փիլ. 1941 թիւ 1(6)· էջ 170) առաջարկում է առաջին «հինգերորդ» ուղղել «երրորդ»՝ իբր սկզբնապէս գրուած է եղել «երդ» իբրեւ «երրորդ», բայց արտագրողը կարդացել է «ե–րդ»=հինգերորդ:

60· «Ադամ» անունով կոչւում է Ս. Գրքի մէջ Ասորիքը: Այդ անունը տարածւում է նաեւ Միջագետքի եւ Ասորեստանի վրայ: Ծագած է համարւում Նոյի Սեմ որդու ցօթնեղբօր որդի Ադամի անունից, որից եւ այդ երկիրների ժողովուրդները կոչուել են Ադամէացիք: Ադամերէնը չատ հին ժամանակներից ի վեր, յատկապէս պարսկական տիրապետութեան օրով, դառնում է Առաջաւոր Ասիայի յարաբերութեան լեզուն, մինչեւ որ արաբացոց տիրապետութեան ժամանակից սկսած եւ է մղւում արաբերէնի առաջ: Միջագետքի Ադամէական բարբառներից Եդեսիայի եւ Մծբինի բարբառները դառնում են գրական լեզու եւ կոչւում ասորերէն:— «Սեմական ժողովուրդների մէջ չորս լեզուական խմբեր են դանազանւում. 1) բաբելոնեան-ասորեստանեան, 2) քանանական, որի մէջ Իսրայելացիք ու Փիւնիկեցիք, 3) արամէական, որ եւ ասորերէն է կոչւում, եւ 4) արաբական»:

61· Եդեսիա, կոչւում է նաեւ Ուրհա (Ուրֆա) — հին նշանաւոր ամուր քաղաք Հիւսիսային Միջագետքում, Եփրատ գետից արեւելք: Մի ժամանակ եղել է քաղաքական, կրօնական կենտրոն: Յայտնի է եղել իր եպիսկոպոսական աթոռով եւ քրիստոնէական մօտ 300 վանքերով: Եդեսիայի արամէական բարբառը դարձել է գրական լեզու — ասորերէն (տես նախորդ 60րդ ծան.):

62· Ամիդ — այժմեան Դիարբեքիր քաղաքը, Տիգրիս գետի վրայ: Նոսաւայրէ եղել եպիսկոպոսների:

63· «Բարիլաս» անունն առաջարկում են ուղղել «Բարուլաս»: Եդեսիայի եպիսկոպոսական աթոռակալ ընտրուել է 412 թ. (ըստ Մարկուարտի՝ 411—412 թ.) չատ յայտնի Ռաբուլաս եպիսկոպոսը, որ մեռել է 435 թ.: Ըստ այսմ, ուրեմն, Մաշտոցը 411—412 թուից առաջ չէր կարող լինել Եդեսիայում: Բայց այս թուականը չի յարմարւում հայոց պատմութեան (Դանիէլեան նշանագրերի գործածութեան) սկզբի ընդհանրապէս ընդունուած 404 կամ 405 թուականին, որից ամենաչատը երեք-չորս տարի անցնելուց յետոյ, ըստ Կորիւնի պատմելուն, Մաշտոցը կարող էր լինել Եդեսիայում: (Տես՝ ծան. 59): Մարկուարտը կարծում է, թէ «այդ տեղ անտարակոյս անաքրոնիզմ դոյութիւն ունի», այսինքն «Ռաբուլասի» անունն է յիշուած՝ վրանաև նրա նախորդինը յիշուած լինելու:

64· Բնագրի մէջ պակասում է «Եղեսիա» անունը, որ անպատճան պիտի լինի, թէ չէ՝ չարունակութեան մէջ «անտի» (=այնտեղից) եւ «անդ» (=այնտեղ) բառերի իմաստը մնում է անորոշ:— Մաշտոցն, աշխարհագրական դիրքը եւ մի քանի այլ հանգամանքները նկատի ունենալով, նախ հասել է Ամիդ, յետոյ՝ Եդեսիա եւ այստեղից դնացել Սամոսատ: Ուստի պակասած անունը պիտի լինի Եդեսիա եւ ոչ Ամիդ:

65· Սամոսատը գտնւում է Եդեսիայից հիւսիս Եփրատի վրայ, դետի աջ կողմից: Այս քաղաքը 5րդ դարում Հռոմայեցոց կայսրութեան մէջ էր, որի արեւելեան մասում իշխում էր յունարէն լեզուն:

66· «Յորժամ դարձիս եւ յուզոց հանիցես, յայնժամ կեցցես» (Եսայի, Լ. 15):

67· «Նշանակից» — գրիչ, դծագրիչ: «Անուանից» — գրիչ տառերի անուններըը, որ են՝ այբ, բեն, գիմ, դա եւ այլն: «Դասաւորից» (բնագիրը՝ կարգեաց), այսինքն՝ տառերի կարգը, չարքը որոշից: Այդ դասաւորութիւնը յունարէնի ալվաբեաի համեմատ է, միայն չարքի մէջ տեղ տեղ տեղաչրած են այն տառերը, որոնց համապատասխանը չկայ յունարէնում:

68· Բնագիրն է, «յօրինէր սիղոբայիւք եւ կապօք», նոյնպէս քիչ վերեւում Դանիէլեան գրերի մասին՝ «ողջ ածել զսուղղոբայս եւ զկապս»: Յապաւում ենք «եւ» շաղկապը, որովհետեւ «կապ» բառը յունարէն «սիղոբա» բառի թարգմանութիւնն է: Տառերը «յօրինեց սիղոբաններով–կապերով» խօսքից իմացւում է, որ Մաշտոցը յօրինել է գրերն ի վանկ կապելու, կամ «գիր–կապ» կարդալու համար դասագիրք: Այս մասին տեսնել սրա հեղինակի «Մեսրոպ Մաշտոց եւ հայ գրի ու գրականութեան սկիզբն» աշխատութեան մէջ:

69· Բնագրի մէջ է «յեպիսկոպոսացն սրբոյ»· ուղղում եմ «յեպիսկոպոսէն սրբոյ» — սուրբ եպիսկոպոսից, այսինքն Բարիւլաս (Յարուլաս) եպիսկոպոսից կամ թէ չէ՝ պէտք է ընդունել, որ Եղեսիայում եղել են մէկից աւելի եպիսկոպոսներ:

70· Բնագրի մէջ է՝ «զնըրսաղոյնն, զվարճն» պակասում «հասս» բառի համապատասխան բառը: Ձեռագիրների մէջ կայ՝ «զնըրսաղոյնն եւ զլայնագոյնն —բարակըն ու հասսը:

71· Կորիւնն իր ճոռոմ պատկերաւորութեամբ պատմում է քիչ վերեւում, թէ Մաշտոցն «իր սուրբ աչով հայրարար ծնել է նոր եւ սքանչելի ծնունդներ — հայերէն լեզուի նշանագրերը»: Նա ինքը գծագրել, անուանել եւ դասաւորել է այդ նշանագրերը: Իսկ Սամոսատ քաղաքում նա յոյն գրագրի ձեռով, զեղագրութեան եւ յարմարութեան տեսակէտից, վերջնապէս յարդարել է տառերի հաստ ու բարակ եւ երկայն ու կարճ մասերը, ինչպէս եւ առանձինն ու կրկնաւորը: «Կրկնաւոր» բառի փոխանակ ձեռագրների մէջ կայ «կրկնայար», որ նշանակում է երկու տառի միացում: Այդպիսի է միայն «ու» երկտառը, որ մի պարզ ձայնաւորի նշան է եւ այդպէս գրուել է յունարէնի հետեւողութեամբ: Մնացած բոլորն «առանձին» են:

72· Եկեղեաց գաւառ — այժմեան Երզնկայի գաւառը:

73· Պաղանական տուն կամ Պաղնատուն — Պաղնայ գաւառը Ջորջրդ Հայքում (Ծոփքում): Ունեցել է Պաղին անունով բերդ· այժմ Բալուա գաւառում Բալուի եւ Արղնիի միջեւ: Ծովակի Պաղնային է, երեւի, յիշւում իբր թարգմանիչ (տես. ծան. 119):

74· Առակք Սողոմոնի — Աստուածաշնչի գրքերից մէկը· խրատական բովանդակութիւն ունի: Սկսւում է այսպէս՝ «ճանաչել զիմաստութիւն եւ զխրատս, իմանալ զբանս հանճարոյ»· ճիշտ ինչպէս Կորիւնն է բերում:

75 Նոր Քաղաք — Վաղարշապատ քաղաքը, որ այն ժամանակ մայրաքաղաքն էր:

76· Թուականի թիւն աղճատուած է ըստ երեւոյթին: Տես. ծան. 59:

77· Սինա լեռ — Արաբիայի լեռ: Գտնւում է հիւսիս–արեւելքից կարմիր ծովի մէջ ներս մտնող թերակղզու վրայ: Ըստ Աստուածաշնչի՝ այս լեռան գագաթի վրայ իբր Աստուած քառասուն օր երեւացել է Մովսէսին եւ տուել նրան իր օրէնքը: Այդ միջոցին Իսրայելացիները մի ոսկէ հորթ ձուլելով՝ այդ կուռքին էին երկրպագում: Մովսէսը ձեռին բռնած վկայութեան երկու տախտակները, որոնց վրայ գրուած էին պատուիրանները, իջնում էր լեռից: Նա տեսնելով ժողովրդի արարքը՝ սրտնեղութիւնից կոտրատում է տախտակները:

78· Բնագիրն է՝ «ընդունելոցն յաւուրս ուրախութեան՝ դասաւորութիւն ճանապարհացն աւետարերք»: Մութն է, առանձնապէս «դասաւորութիւն» բառի նշանակութիւնը. հաւանօրէն դա դարձածուած է «կայարանի» իմաստով:

79· «Ոհմ» դնա — թերեւս ազճատուած ձեւ է «Երասխ» կամ «Բասախ» անուններից: Բասախ դեպի ընթացքը հնումն կարող էր եւ Վաղարշապատի արեւելահարաւային կողմից լինել: Բայց հաւանօրէն դա «Երասխ» անուան ազճատումն է: Մաշտոցը Վաղարշապատ պիտի վերադառնար Երասխի Տափերական կամրջի վրայով, որ Արտաշատի մօտ էր: Փ. Բուզանդը (III 12) դրում է, թէ Տիրան թագաւորը, երբ լսում է կաթողիկոս ձեռնադրուած Յուսիկի դալը, «ընդ առաջ ելանէր ի դաշտն յայնկոյս դետոյն [Երասխ] Տափերն կամրջի, ամենայն բանակօքն բազմութեամբք»: Նոյնն արել է վռամշապուհը Մաշտոցի համար, միայն Երասխի միւս կողմը չեն անցել:

80· Մարայ կողմերը, տես ծան. 55:

81· Բնագրի մէջ է «ծնունդս կայուցանէին»: Ուղղում եմ ըստ. Նոր. Բիւզանդացու «ծանօթս կայուցանէին» — ծանօթ դարձրին:

82· «Մ'ո դու քեզ տամս մի նոր մեծ եւ պրեսպես ի նմա պրչաւ առն ճարտարի» (Եսայի Ը· 11):

83· «Արդ նիստ եւ պրեա ի տախտակի եւ ի դիրս» (Եսայի Լ· 8):

84· «Գրեսպի այս յապղ այլ» (Սաղմոս, ճա· 19):

85· «Տէր պատմեսցէ գրովք ժողովրդեան» (Սաղմ· ՁՁ· 6):

86· «Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մատթ· ԻԸ· 19): Աշխարհաբարում «գնացէք, բոլոր ազգերը աշակերտեցէք»: Հեթանոս = ազգ, ժողովուրդ:

87· «Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս» (Մատթ· ԻԴ· 14):

88· Այս եւ նախորդ կտորից երեւում է, որ Սահակն ու Մաշտոցը («ի ձեռն երկուց հաւատարելոցն»—երկու հաւատարուածների ձեռքով) թարգմանել են մարգարէական գրքերը, Պօղոս առաքեալի եւ միւս առաքեալների թղթերը, աւետարանները, Ծննդոց գիրքը, ամբողջ Աստուածաշունչը («ամենայն աստուածատուր աւանդութեանցն»), եւ նոյնիսկ «Յայտնութիւն Յովհաննու» գիրքը, քանի որ «կատարածի», աշխարհի վերջի մասին այս գրքի մէջ է խօսւում:

89· Հաւանօրէն նաեւ Լ· 25 «եւ եղիցին ի վերայ ամենայն լերանց բարձանց եւ ի վերայ ամենայն բլրոց բարձրաւանդակաց՝ ջուր բղխեալ»:

90· «Աղաւաղուած բանակն» կամ «բանակն Հայոց», ինչպէս յիշւում է յետոյ, կազմում էին արքունիքը՝ թագաւորով ու թագուհիով հանդերձ, այլ եւ նախարարների զունդը, հազարապետն ու սպարապետը, ինչպէս եւ արքունի դռան եպիսկոպոսը: Երբ թագաւորը որեւէ առթիւ հանդիսաւոր կերպով զնում էր մի տեղ, նա ամբողջ բանակով էր զնում: Թագաւորութեան վերացումից յետոյ մնում էր «Հայոց բանակը», միայն առանց թագաւորի: «Բանակ» նշանակում է, հարկաւ, եւ «զօրաբանակ»:

91· Այս վարդանն է յայտնի վարդան Մամիկոնեանը, Հայաստանի սպարապետը, Աւարայրի ճակատամարտի հերոսը, որի անունով կոչւում է կրօնական պատերազմը «Վարդանանց պատերազմ»: Վարդանը որդին էր Համազասպ Մամիկոնեանի,

որի կինը Սահակ կաթողիկոսի դուստրն էր: Վարդանն, ուրեմն, թոռն էր Սահակի, որ բացի մեկ դուստրից՝ էլ ուրիշ զաւակ չունէր: Վարդանի կնոջ անունն էր Դուստը: Տես ծան. 154:

92· Նորայր Բիւզանդացին*) «Տէր եպիսկոպոսն» համարում է Սահակ կաթողիկոսի համար ասուած: «Տէր» բառը եպիսկոպոսների սիրողն էր և՛ հնումն և՛ նորումս (ինչպէս և «սուրբ» բառը, մեր օրով «սրբազան»), բայց եղել է և «Տէր» յատուկ անուն: Ղազար Փարպեցին Մաշտոցի օրնականների մէջ դնում է «Տէր ի Խորձեանայ», որին կորիւնը անուանում է «Տիրայր ի Խորձենական զաւառէն»: Նոյնպէս և Մ. Խորենացին (Գ. ծղ) ունի՝ «Տէր Խորձենացի»: Տես յաջորդ 93րդ ծան.:

93· կայենականք — «զաւառն կայենոյ», «աշխարհն կայենոյ» (Աղաթեւ–Աղբատաֆիա դեռի հովտում): Այս յիշում է մի քանի անգամ կիրակոս Գանձակեցին՝ «ի կայենականն» — կայեանի կողմերում, կամ կայենոյ զաւառի բնակիչների մէջ: «Կայենոյ զաւառը» կարող էր կորիւնն իր սիրած «ական» ածանցով անուանել «կայանական» զաւառ, իսկ բնակիչներին՝ «կայանականք», ինչպէս քիչ յետոյ «Խորձեան» զաւառը կոչում է «Խորձենական զաւառ»: Բայց անբացատրելի է մնում, թէ ինչու պէտք է կայենոյ զաւառն առանձնացուէր միւս հեթանոսական չորջաններից և «Տէր» անունով մի եպիսկոպոս ուղարկուէր այնտեղ քարոզելու. մինչդեռ ապահովի էր, որ այդ զաւառն էլ, ինչպէս և աշխարհապրօրէն, մանկը Մաշտոցի գործունէութեան վայրերի մէջ, քանի որ նա գործում է՝ Գողթնում, Սիւնիքում, ապա՝ անցնում, գործում է և Աղուանքում ու Գարդմանում և Տաչիրքում, և վերջապէս՝ առաջին եւ երկրորդ անգամ՝ անցնում գործում է նաեւ Վիրքում (Վրաստանում): Միւս կողմից՝ ընդունելի է, որ Սահակ եպիսկոպոսը, այսինքն կաթողիկոսը (տես վերը՝ ծան. 92), քարոզչութեան ելնէր Հայաստանի մի ծայրագաւառ, ինչպէս կայենոյ զաւառն է, թողնելով Այրարատեան զաւառը, արքունիքը, «զթագաւորական տեղիսն» եւ «բանակն Հայոց»: Ես կարծում եմ, որ «կայենականք բառի մէջ պէտք է տեսնել հէնց այդ վերջիններիը եւ «Տէր եպիսկոպոսի» համար ընդունել, որ դա Սահակ եպիսկոպոսն է: Այս դէպքում «կայենականք» բառը բացատրւում է «կայեան» բառից, իբրեւ «կայեաններում» եղողներ: Եղիշէ պատմիչը գրում է Վասակ մարզպանի համար, թէ «յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան եւ աւերեալ զրաղում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զմիերոցս արիուն, որ կայաւիք (գրւում է նաեւ՝ կայեաւիք) զօրացն էին՝ զԳառնին եւ զերամայիս եւ զԴրասխանակերտն՝ զմեծ դաստակերտն, զվարդանաշատն եւ զամուրն Օշական, զփառախառն, զՍարդեանսն, զՅոլակերտն աւան, զԱրուճն, զԱշնակն եւ զամենայն ոստն Արագածու, եւ զնահանգն Արտաշատու եւ զԱրտաշատն ինքնին գլխովին, եւ զամենայն գիւղս եւ զաւանս որ շուրջ գնովաւ էին»: Ցիշատակուած տեղերը գտնւում են Այրարատեան զաւառում կամ բոլորովին մօտիկ սահմանների վրայ: Դրանք մեծ մասամբ, անշուշտ, ռազմական նշանակութիւն են ունեցել իբրեւ արքունի զօրակայաններ, ուստի եւ աւերել է Վասակը, այսինքն՝ դրանց մէջ եղած ուսեստի պաշարը (զռոճիկս) ոչնչացրել: Դրա հետեւանքով Վարդանը չկարողանալով զօրքը կեբակրել այդ տեղերում՝ ցրւում է «ընդ զաւառս», զանազան զաւառներում, «եւ

*) Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք· Տփղիս, 1900, էջ 148, 20:

զսակաւս ի գնդէն յաւազ նախարարացն զործակից իւր թողեալ՝ բռնանալ ի վերայ ունելով զթագաւորանիստ տեղիսն»: Թագաւորանիստ տեղեր են եղել հենց յիշուած «արքունի ամերոցները» հարկաւ, նաեւ մայրաքաղաքը: Այսպէս օրինակ՝ Ագաթանգեղոսն Անակի համար գրում է, թէ «եկեալ յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ամերոցս արքայութեանն հայոց»: Թագաւորն ուրեմն նստում էր ամերոցներում: Բայց այս վերջիններս նաեւ «կայանք զօրացն» էին: Իսկ այդ տեղերի զօրքը միայն «ռամիկ զօրքը» չէր, այլ եւ աղնուականները, որոնք կազմում էին բուն բանակը, «զգաստախումբ բանակ նախարարական զօրացն», այնպէս որ Բուզանդը «զօրք» ասելով՝ ընդհանրապէս աղնուականներին է հասկանում: Գանք հիմա Կորիւնին: Այս տեղեկութիւնից յետոյ, կարծում եմ՝ պարզ է, որ «կայենականք» նշանակում է արքունի զօրակայաններում մի տեղ հաւաքուածները, լինեն «ռամիկ զօրք», թէ «զգաստախումբ բանակ»: Ըստ այսմ՝ Սահակ եպիսկոպոսը պէտք է «ի կայենականն» այսինքն «ի կայեանս զօրացն» եղողներին սովորեցնէր, մնալով Այրարատեան գաւառում, թագաւորանիստ տեղերում: Այսպէս հասկանալով բնագիրը՝ պէտք է հետեւեալ խօսքի մէջ առաջին «այլովքն եւս» բառը յատուկ իրրեւ արտադրութեան ժամանակ առաջացած անյարմար կրկնութիւն:

94· «Սիւնք», «սիւնք» — սիւռուած, գրուած ընդարձակ կողմեր: «Ի սիւնս հեթանոսաց գրեան կենայ սերմանիչեն» խօսքը գրուած է ըստ Ցովհ. Ի· 35 «Մի՞թէ ի սիւնս հեթանոսաց երթայցէ եւ ուսուցանիցէ զհեթանոսս»: Կորիւնի այդ խօսքից երեւում է, որ դեռ կռապաշտ ժողովուրդներ են եղել Դողթնում՝ Սիւնիքում եւ այլն, ուր գնում է քարոզելու Մեսրոպը:

95· Խորճենական գաւառ — Խորճանք, Ջորբորդ Հայքի գաւառներից մէկը Ջիլբատի վրայ:

96· Բնագրի մէջ՝ «երթեալ իջանէր առ ոստս տանն Դողթան, յառաջին դասատակերան իւր», որ բառացի նշանակում է «գնաց, իջաւ Դողթան տան ստորոտի մօտ, իր առաջուայ դասատակերը»: Յայտնի է, որ Կորիւնից շատ կտորներ գրեթէ բառացի կան Ագաթանգեղոսի մէջ: Այստեղ կարդում ենք· «Հասանէր եւ յառաջին դասատակերոսն իւր, յՈտոստանն Այրարատեան գաւառին ի վաղարշապատ քաղաք»: Իսկ ձեռագրերից ընթերցուածներ կան՝ «յոռոդաստանն, յոռդաստանն, յոռոստանն, յրռոստանն, յրռոտոտանն: կոր· առոտստանն (տպ· առ ոստս տանըն): Համմտ· կոր· § 33· (Ագաթանգեղայ Պատմ· Հայոց աշխատութեամբ Գ· Տէր Մկրտչեան եւ Ստ· Կանայեանց: Տփղիս, 1909, 438): — Կորիւնի «առոտստանն» ձեւը bc ձեռագրներից է առնուած: Կորիւնի մէջ այդ բառը պէտք է սկզբից ունենար «յ» նախդիրը «յառոտստանն», ինչպէս է Ագաթանգեղոսի մէջ՝ «յոռոստանն» եւ այլն: Նոր· Բիւզանդացին (162· 4) կարդալով կամ գրածնելով «յառոստանն» ցուցում է անում (տես Առոստանի Հ· Ղ· Ալիշան, Այրարատ, 204 ա): Իսկ այստեղ «Առոստան» չկայ, այլ Ալիշանը վաղարշապատի մասին գրելիս ասում է· «Գտանեմք առ Ագաթանգեղայ կոչեալ եւ այլով իմն մակադրական անուամբ, որ ոչ այլ ուրեք լսի»: Այդ են՝ «յԸռոստանէն, Ըռոտանտան»: Ապա նա աւելացնում է· «Այս բառ նորալուր առ մեզ՝ հաւաստի ի պարսկականէն [ռուսդակ] ըստ վկայութեան

Եաղուբի արաբացւոյ աշխարհագրի ի սկիզբն ԺԴ. դարու, նշանակել երկիր մշակեալ, յորում իցն աւանք, այլ եւ քաղաքք, բայց ոչ մեծամեծք»: Վաղարշապատը մեզնում կոչուել է նաեւ Քաղաք ու Դաշտ*), որ ըստ երեւոյթին, համապատասխանում է պարսկերէնի «ռուստակ» բառի բացատրութեանը: Ըստ այդմ «առոստանն» կամ «առոստակին» պէտք է ուղղել «յառուստակն» կամ ըստ Ագաթանգեղի՝ «յըռոստաստակն», քանի որ «ռ» տառով սկսուղ օտար բառերի սկզբում աւելանում է Ա կամ Ը: Գողթան «Առուստակն» այդ բացատրութեամբ, եթէ այդ առայդ է, եղել է ինչպէս կարծում եմ, Ագուլիսը, Վերին Ագուլիան իբրեւ քաղաք, իսկ Ներքին Ագուլիան իբրեւ դաշտ: Ներքին Ագուլիսը հայերն հէնց այդպէս «Դաշտ» էլ կոչում էին: Իսկ Վերին Ագուլիան իբրեւ Գողթնի կենտրոն՝ իր շուկայով՝ քաղաքի դեր էլ կատարում էր մինչեւս վերջերս: Գառնիկ Ֆնտզլեանն**) ուղղում է այսպէս. «երթեալ իջանէր առ ոստանն Գողթան յառաջին դաստակերտն իւր» — ինաց, իջաւ Գողթնի ոստանի մօտ իր առաջուայ դաստակերտում: Իսկ Ագաթանգեղոսի յիշուած հատուածն ուղղում է այսպէս. «հասանէր առ ոստանն Այրարատեան դաւառին ի Վաղարշապատ քաղաքն»: Այս վերջին ուղղումն անընդունելի է «առ» նախդրի պատճառով, քանի որ Այրարատեան դաւառի ոստանն ու Վաղարշապատ քաղաքը նոյնն են, ուրեմն պէտք է լինէր՝ «հասանէր յոստանն Այրարատեան դաւառին, ի Վաղարշապատ քաղաքն»: Խորենացու անունով յայտնի «Աշխարհացոյցի»***) ձեռագրերի մէջ Աղուանքի դաւառներից մէկը կոչւում է՝ «Ուռուստակ, Ոռոստակ, Ռոստակ աղճատուած ձեւերով, որոնք նման են Կորիւնի եւ Ագաթանգեղոսի մէջ եղած տուեալ անուանը: Ինչ էլ պատահում, որ նոյն աշխարհագրական անունն այլ եւ այլ կողմերում է երեւան գալիս: Անառեան, Հայերէն Արմ. բառ. «Ռոռոստակ» — դէմաւոր քաղաք, դաւառի կամ նահանգի «մայրաքաղաք»: Այդ բառի բացատրութիւնը տե՛ս նաեւ Ն. Մառ. «Ռոռոստակի կարծեցեալ աշխարհագրական անունը Ագաթանգեղոսի պատմութեան մէջ (Ցիշատակարաններ Ռուս. կայսր. Հնագ. Ընկ. Արեւելեան բաժանմունքի, հ. 9, 1894թ.):

97. Սիւնական աշխարհ — Սիւնիք, Հայաստանի նշանաւոր նահանգներից մէկը, հիւսիս-արեւելեան կողմում: Սիւնիքի մէջ էին արդի Հայաստանից Զանգեզուր, Դարալագեազ եւ Գեղարքունիք (Սեւանայ լճի չորքը):

98. Բնագրի մէջ է՝ «եպիսկոպոսս տեսուչս», ուղղում եմ եպակի՝ ըստ յաջորդ նախադասութեան՝ «որոյ անունն»...

99. «Ժառանգաւորք եկեղեցւոյ» կոչւում էին այն պատանիներն ու երիտասարդները, որոնք կրթւում էին կրօնական ուսումով եւ հետագայում դառնում էին եկե-

---

*) Ստեփանոսի Տարօնեցւոյ պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ 1885, էջ 77, 282:

**) Կորիւն, վարք Մաշտոցի, ուղղեալ եւ լուսաբանեալ ի Գառնիկ Ֆնտզլեանէ, Երուսաղէմ, 1930, ներածութիւն էջ ԺԴ: Այս գիրքը ես ստացել եմ աշխատութիւնս ամբողջապէս պատրաստելուց եւ Հայ Պետ. Հրատարակչութեանը յանձնելուց յետոյ. ուստի հնարաւորութիւն չունեցայ անդրադառնալու Գ. Ֆնտզլեանի շատ կարծիքներին, մանաւանդ այնպիսիներին, որոնք անընդունելի են ինձ համար:

***) Տես Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ 1843, էջ 606. ծան. 4:

ղևոս ուխտի ժառանգներ: Կ՚ըմխածնում մինչեւ 1883 թ. կար «ժառանգաւորաց դպրոց»:

100· Սիսական վասակը — չատ յայտնի վասակ Սիւնին, Հայաստանի մարզպանը, որ Վարդանանց պատերազմի ժամանակ (451 թ.) անցաւ պարսիկների կողմը: Կորիւնն այս դէպքից առաջ է դրել իր դիրքը, թէ չէ՝ նա վասակին այդպէս չէր դաւիլ:

101· «Մոռա զժողովուրդ քո եւ զտուն հօր քո» (Սաղմոս, ԽԴ· 11):

102· Բնագրի մէջ է՝ «յորոց եւ իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ» — «որոնցից [Վրաստանում սովորցրած մանուկներից] եւ ես անարժանս եղայ եպիսկոպոսական կարգի, վիճակի մէջ», այսինքն հասայ եպիսկոպոսական կարգի վիճակին: Ըստ այսմ, ինչպէս 18րդ դարից ի վեր կարծել են, Կորիւնը դառնում է Վրաց Թագաւորի իշխանութեան ղանդան կողմերից ժողովուած մանուկներից մէկը, որոնց սովորեցնում է Մաշտոցը Վրաստանում: Նոր· Բիւզանդացին առանց հիմնաւորելու (նր· 385, 3) համարելով աղճատուած՝ առաջարկում է այդ կտորն ուղղել այսպէս· «Յորոց եւ դուն արժանիք եւանել ի կարգ եպիսկոպոսական վիճակի» — որոնցից եւ դուն էլ արժանիներ բարձրանալու եպիսկոպոսական վիճակի կարգին: Այդպիսի աղճատումը միշտ էլ հնարաւոր է· բաւական է, որ երկաթագրի մէջ Դ տառի դլխի ձախակողմեան մասը ջնջուի, իսկ Տ տառի ներքեւի ձախակողմեան մասը բարձրանայ, դրանք էլ կարդացուին մէկը՝ ի, միւսը՝ Մ· եւ կը ստացուի «իմ անարժանիք», որ յետոյ ըստ իմաստի ուղղել են՝ «իմ անարժանիս»: Այդ ուղղումն ընդունելով հանդերձ՝ ես աւելորդ եմ համարում «եղեալ» բառը դարձնել «էլանել», այլ պէտք է ուղղել «էլեալ», քանի որ նոյն իմաստը կարող էր արտայայտուել եւ անցեալ դերբայով: Ուրեմն բնագիրը պէտք է ուղղել այսպէս· «Յորոց եւ դուն արժանիք էլեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ»: Այս ուղղումն ընդունելի եմ համարում , որովհետեւ այդ յարմարւում է իմաստին յաջորդ նախադասութեան, որի սկզբի «որոց» դերանունը վերաբերում է այդ եպիսկոպոսական վիճակին արժանի եղածներին, մինչդեռ նախորդ «յորոց» դերանունը վերաբերում է սովորեցնելու համար դանդան կողմերից ժողոված մանուկներին: Եթէ «իմ անարժանիս» ձեւը պահուի, կորիւնը կը դառնայ այդ մանուկներից մէկը, մինչդեռ դրանից առաջ Կորիւնն իրեն դնում է իրրեւ մէկը վաղարշապատում սովորողներից, որոնց իրրեւ «ի կատարումն դիտութեան» հասածներին, դրանց թւում եւ Կորիւնին, ուղարկում են Հայաստանի դանդան կողմերը սովորեցնելու: Դարձեալ, մի ուրիշ տեղ նրանիկ կողքացու համար ասում է, թէ իր «ընտանեզոյն աննդակիցն» է: Տես առաջարան § 3, էջ 9:

103· Հայաստանը 387 թ. բաժանուել էր երկու հարեւան մեծ տէրութիւնների մէջ: Արեւելեան մասը դանում էր Պարսից Թագաւորի, արքայից արքայի դերիշխանութեան տակ· բայց դեռ մինչեւ 428 թ. ունէր իր առանձին Արշակունի Թագաւորը: Իսկ արեւմտեան մասը Հռոմայեցոց (Հռոմէնների) արեւելեան կայսրութեան իշխանութեան ներքոյ էր: Հայերն անուանում են նաեւ յունական, յունաց կողմեր, իշխանութիւն· որովհետեւ պետական լեզուն էր յունարէնը: Իշխանութեան կենտրոնն էր Կոստանդնուպոլիս քաղաքը: Հայաստանի այս մասում կայսրները չուռով

վերացրին հայկական թագաւորութիւնը եւ երկիրը կառավարում էին առանձին կուսակալներով, որ կոչւում են նաեւ զօրավար, սպարապետ:

104· «Հիւսիսական կողմանք» կոչւում են Հայաստանը եւ Հայաստանից հիւսիս գտնուած երկիրները, այս դէպքում՝ Արեւելեան Հայաստանը եւ Վրաստանը: Համմա. Մ. Խորենացու խօսքը՝ Ողբի մէջ Հայաստանի համար. «Հանուրց հիւսիսականաց վհատոյն»:

105· Թէոդոս Բ., որ գահ է բարձրանում մանուկ հասակում 408 թ. եւ իշխում է մինչեւ 450 թ.:

106· Արկադիոս (395—408 թ.), առաջին կայսրը արեւելեան հռոմէական իշխանութեան:

107· Մելիտինէ — այժմեան Մալաթիա քաղաքը, եփրատ գետից արեւմուտք, Սամոսատ քաղաքից հիւսիս: 4րդ եւ 5րդ դարերում հռոմայեցոց կայսրութեան մէջ էր եւ փոքր Հայաստանի կենտրոնն էր:

108· Դերջան — Մեծ Հայաստանի Բարձր Հայք նահանգի գաւառներից մէկը, Կարնոյ (Արզրում) գաւառից հարաւ-արեւմուտք, Երզնկայից արեւելք, եփրատի հովտում:

109· Բնագիրն է՝ «եւ եւեալ յանապատն դիմոսական եւ բազում պատիւ գտեալ հասանէին ի թագաւորական քաղաքն Կոստանդինական»: Այս հատուածի մէջ «յանապատն» ուղղում եմ «յանդրուարն», որ նշանակում է «կառք, սայլ, սայլակառք, պատգարակ»: Նոյնը վերադարձի համար ասում է. «եւ եղանէին ի դեսպակս եւ ի կառըս արքունատուրս»...

110· Սակերք — սրբազան դիր կայսրի, կայսերական նամակ, sacra rescripta — սրբազան հրամանագիր:

111· Բնագրի մէջ է՝ «վասն ժանտագործ աղին բարբարոսաց», քիչ յետոյ «ձեռըն արկանէր զժպատեհ եւ զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ»: Առաջին դէպքում ուղղում ենք՝ «բարբարիանոսաց»: Մ. Խորենացին (Գ. ծը) ունի՝ «քննել զժանդագործ բորբորիտոնան»: Հաւանօրէն «բարբարիանոս» եւ «բորբորիտոնս» բառերից առաջինը միւսի դծագրական աղճատումն է: Հայկական աղանդների մասնագէտ կարապետ Տ. Միքայէլեանը գրում է իր «Հայոց եկեղեցու պատմութեան» մէջ (Վաղարշ. 1908, էջ 108). «Դժուար է որոշել, թէ մեզ յայտնի քրիստոնէական աղանդներից որի մասին է խօսքը: Բորբորիտոն անունով աղանդաւորներ յայտնի են ընդհանուր եկեղեցու Դ.—ե. դարու պատմութիւնից, որոնց ծագումն ու բնաւորութիւնը մութ են, եւ դժուար թէ սոցա մասին լինի կորիւնի յիշատակութիւնը, այլ աւելի հաւանական է, որ նրա յիշած աղանդը աւելի առնչութիւն ունենայ այն մծղնէութեան հետ, որով... սոսկալուած էին գրաղուել Ս. Մաշթոցի անմիջական աշակերտները»: «Դոկտոր Մինգանա՝ յայտնի ասորագէտը՝ կը կարծէ, թէ burburiani ծանօթ աղանդն է սա, որ վերին Միջագետք եւ անկէ Հայաստան տարածուած էր, եւ որուն դէմ քանի մը տեղեր գրած է Ս. Եփրեմ», Գ. Ֆնտըլեան, Կորիւն, վարք Մաշթոցի, էջ 38):

112· Աւղոստոս, (սուրբ, սրբազան, վեհ, վեհափառ) — Օկտաւիանոս կեսարի մականունն իր միահեծան իշխանութիւնից ի վեր, եւ նրանից յետոյ տիտղոս բոլոր հռոմէական կայսրների եւ կայսերական տան անդամների, սրանցից՝ առանձնապէս

կայսրուհու (augusta)։ Կորիւնն իր սովորական ձեւով ածականաբար է դործածում. «Եւ երկիր պահել Թիրանափառ աւդոստականացն»։ Պէտք է հասկանալ՝ Թէոդոս կայսրին եւ Եւդոքսիա կայսրուհուն։

113· Հայրեր, եկեղեցու հայրեր կոչւում են մեր Թ. առաջին վեց դարերում ապրած այն վարդապետները, որոնց դրուածքները կանոնական են ընդունւում դաւանաբանական տեսակէտով, ինչպէս են՝ Աթանաս, Կիւրեղ Երուսաղեմացի, Բասեղ Կեսարացի եւ ուրիշները։

114· Աղուանք (Ալբանիա) — Մեծ Հայաստանից հիւսիս-արեւելք, կուր գետի ափերից մինչեւ Կասպից ծովն ընկած երկիրը, որ կոչուել է նաեւ Առան։ Հետագայում Հայաստանի մի քանի դաւառներն եւս կուր եւ Երասխ գետերի ստորին հոսանքների միջեւ՝ մասն են համարուել Աղուանքի։ Աղուանները եղել են հայերին բաբեկամ ժողովուրդ։

115· Արտաչէս — Վռամշապուհ արքայի որդին, վերջին Արշակունի թագաւորը Հայաստանի։

116· Բաղասական կողմեր — Բալասական դաշտ Աղուանքում, հաւանօրէն երկրի հիւսիս-արեւելեան կողմերում, հոների մօտիկ սահմաններում։

117· Գարդման, Գարդմանայ ձոր, Գարդմանք — Հայաստանի Ուտիք նահանգի դաւառներից մէկը, այժմեան Շամքոր գետի հովտում։ Այդ գետի վերին հովտում այժմ կայ Գարդմանիկ գիւղը։ Մի ժամանակ մտել է Աղուանքի մէջ։

118 Տաչիր, Տաչիր — Մեծ Հայաստանի հիւսիսային կողմում՝ Վրաստանին սահմանակից Գուգարք նահանգի դաւառներից մէկը, այժմեան Լոռին, հին Լոռի բերդի դաւառը, ուր էր Տաչրատափ, այժմեան Լոռուայ տափաստանը։

119· Կորիւնը սրանից առաջ երկու Յովսէփ է յիշել, երկուսն էլ Մաշտոցի աշակերտներ։ Մէկն սկզբում յիշած Յովսէփն է, որ հրամայում է Կորիւնին դրել Մաշտոցի վարքը (տես ծան. 4)։ Սրա համար յետոյ Կորիւնն ասում է՝ «որ ի սկզբան դրեցաք»։ Երկրորդն է Յովսէփ «ի Պաղանական տանէն» (Պաղնացին), որի հետ Մաշտոցը Սամոսատում Թարգմանութիւն է անում (տես ծան. 73)։ Թարգմանութիւն անելու համար Եղեսիա ուղարկուել է հաւանօրէն այս երկրորդ Յովսէփը, որի համար է դրում՝ «զոր ի վերոյն յիշեցաք»։ Մ. Խորենացին (Գ. կ) էլ եղնիկի հետ Եղեսիա ուղարկուածի համար լոկ Յովսէփ է դրում, առանց որոշելու, թէ որ Յովսէփն է։

120· Եղնիկ — յայտնի Եղնիկ Կողբացին է, Սահակ կաթողիկոսի դործակիցն Աստուածաշնչի Թարգմանութիւնը յունարէնի համեմատ դարձնելու ժամանակ, եւ «Եղծ աղանդոց» դրքի հեղինակը։

121· Նիկիա — քաղաք Բիթանիայի հիւսիսային կողմում (փոքր Ասիայի արեւմտեան կողմում)։ Այստեղ 325 Թ. Կոստանդին կայսրի ժամանակ դումարուել է Նիկիոյ տիեզերական ժողովը, որ նզովել է Արիոսին եւ նրա ուսումը, կազմել է քրիստոնէական «Հաւատքի հանդանակը» («Հաւատամք») եւ հաստատել Թուով 20 կանոններ։ Հայոց եկեղեցուց այդ ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսաւորչի որդին՝ Արիստակէս։

122· Եփեսոս — քաղաք փոքր Ասիայի արեւմտեան կողմում, Էդէեան ծովի ափին, Զմիռնայից հարաւ։ Այստեղ 431 Թ. դումարուել է Եփեսոսի տիեզերական ժո-

գո՛շը, որ բանաղրել է Թէոդորոս Մոպսուեստացու աշակերտ Նեստորի ուսումը, Նեստորականութեան աղանդը:

123· *Կաթոլիկանք — դիրք, դրքեր, առանձնապէս Մ. Գիրքը, որ բաժանուում է երկու մեծ մասի — հին եւ նոր, որոնք կոչուում են առաջինը՝ Հին Կաթոլիկան, երկրորդը՝ Նոր Կաթոլիկան: Երկրորդը քրիստոնէական շրջանին է վերաբերում. առաջինը նախաքրիստոնէական հրէական դրականութիւնն է:*

124· *«Եկեղեցական դրոց դումարութիւն» — եկեղեցական դրքեր. ընդունում են, թէ դրանք եկեղեցում ժամասացութեան ժամանակ դործածած դրքեր են ժամագիրք, պատարագամատոյց, տօնական, որոնց հիմնական մասերը հին են:*

125· *«Հայրապետաց սրբոց ճշմարիտ խոստութիւն» — հասկացուում է եկեղեցական բարձրագոյն աստուածաբանական դիտութեան վերաբերեալ դրքեր: Թէ ինչ դրքեր են թարգմանուած, այդ յայտնի չէ:*

126· *Եղնակ — միեւնոյն եղնիկ կողրացին է:*

127· *«Մեկնութիւն դրոց» — Մ. Գրքի մեկնութիւն: Ընդհանուր եկեղեցական դրականութեան մէջ մեկնաբանական ճիւղն արդէն զարդացած էր 5րդ դարի առաջին կէսին եւ, քանի որ առաջ էին դալիս զանազան աղանդներ, մեկնութիւնը կարեւոր էր համարում՝ Մ. Գիրքն «ուղղափառ» եկեղեցական տեսակէտով հասկանալու համար:*

128· *«Աստուածակարդ պատգամաւորք» — Աստուծու կարդած պատգամաւորները — մարգարէները եւ առաքեալները: Այսպէս կոչուում են նրանք իրրեւ Աստուծու պատգամները, պատուէրները բերող, ասող:*

129· *«Ցօրէնս Տեառն են կամք նորա, եւ յօրէնս նորա խորհեսցի նա ի տուէ եւ ի դիշերի» (Սաղմոս Ա. 2):*

130· *«Մխիթար ընթերցուածոց, մխիթարութեան, վարդապետութեան: Մի անվոյթ առներ զընորհացդ որ ի քեզ են... Ցայդ խորհեաց եւ ի դոյն կանխեաջիր... ի դմին յամենջիր: Զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուցես եւ զայնոսիկ որ քեզն լսիցեն» (Ա. Թուղթ առ Տիմոթէոս, Դ. 13—16):*

131· *«Ճառս յաճախապոյնս, դիւրապատում»: Մեր հին դրականութեան մէջ վայ ճառերի մի ժողովածու, «Ցաճախապատում ճառք» անունով յայտնի: Այդ ճառերը հին ժամանակներից ի վեր վերապրուել են Դրիդոր Լուսաւորչին, անշուշտ, որպէսզի աւելի եւս ընդունելի դառնան հետագայում: Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութեան» մէջ եւս նման խօսքերով ասում է, թէ Գր. Լուսաւորիչը ճառեր է գրել: Բայց Ագաթանգեղոսի մէջ կան բաղմաթիւ բառեր ու դարձուածներ, որոնք կան նաեւ Կորիւնի այս դրքոյկի մէջ. սրանց հիման վրայ Նոր. Բիւզանդացին, իր յիշուած դրքի մէջ եդրակացնում է, թէ Ագաթանգեղոսի պատմութիւնը Կորիւնի գործն է: Բացի այդ, երկուսի մէջ էլ կան բաղմաթիւ ամբողջական նման կտորներ, որոնք բովանդակութեամբ մեծ մասամբ աւելի Մաշտոցին են յարմարում, քան Գր. Լուսաւորչին: Այդ կտորներն ամենայն հաւանականութեամբ Կորիւնից են մուծուել Ագաթանգեղոսի մէջ:*

132· *«Ցայտնութիւն» — այսպէս կոչուում է Ցիսուս Քրիստոսի երկրորդ դալուստը, որին հաւատում էին քրիստոնեաները: Այդ ժամանակ իբր թէ պիտի լինէր «վերջին դատաստանը», եւ արդարները վարձատրուէին, մեղաւորները պատժուէին,*

խակ սպասուրները պիտի մխիթարուէին։ «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին» (Մատթ. Ե. 2)։ «Եւ ահն կալցուք երանելի յուսոյն, եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Ցիսուսի Քրիստոսի» (Տիտոս, Բ. 13)։

133. *«Անճաւատուս» ասածներն իսկապէս ճղնաւորներն են, որ կոչւում են նաեւ «լեռնական»։ Բայց եւ վանքերը կամ մենաստաններըը, «եղբայրանոցները» չինւում էին լեռներում, «չէն եւ անչէն» տեղերում։ Այստեղ ապրում էին խմբերով, իսկ ճղնաւորները «մենակեաց» էին, կամ սակաւաթիւ ընկերներով, աշակերտներով, «սրամտուս ծակախիթ» էին լինում։ «Արդելական» ասածներն էլ վանականներ են, որոնք «արդելուած», այսինքն փակուած ապրում էին իրենց վանքերում, «արդելավանքերում», ինչպէս կոչւում էին առանձնապէս կուսանների վանքերը։*

134. *«Հաճեալ եմ ընդ սկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի, զի յորժամ տկարանամ, յայն ժամ զօրանամ» (Բ. Առ Կորնթացիս, ԺԲ. 10)։*

135. *«Լաւ եւս լիցի ինձ պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի» (Բ. Առ Կորնթացիս, ԺԲ. 9)։*

135բ. *«Եւ մի՛ արբենայք գինով, յորում գեխութիւն է, այլ մանաւանդ լցարուք Հոգւով, խօսել ի սիրտս ձեր սաղմոսիւք եւ օրհնութեամբք» (Եփես. Ե. 18)։*

136. *«Սկսաւ Ցիսուս առնել եւ ուսուցանել» (Գործք Առաքելոց, Ա. 1)։*

137. *Թարոր լեռ — արաբական Ջեբել Տուր, Տիբերիական լճի հարաւ-արեւելքում։ Իբր այս լեռան վրայ է Ցիսուս տուել իր յայտնի «երանութիւնները» (Ա-ւետ. Մատթ. Ե. 1—12)։*

138. *Կանոնական աղօթք — երբայական օրէնքով սահմանուած աղօթք։*

139. *Տիբերիական ծով, այլ եւ Գալիլիայի լիճ, Պաղեստինի հիւսիսում, լճաւին դռնուած Տիբերիա, Տարարիէ քաղաքի անունով։*

140. *Բաղարջակերք, Բաղարջակերաց օրեր — երբայական տօնի օրեր, երբ եօթն օր բաղարջ հաց էին ուտում։*

141. *Զիթենեաց լեռը դռնւում է Երուսաղէմի մօտ։*

142. *«Արթուն կացէք եւ աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն» (Մատթ. ԻԶ. 4)։ Արթուն կացէք եւ յաղօթս կացէք, զի մի՛ մոլիք ի փորձութիւն» (Մարկոս, ԺԴ. 38)։ «Կացէք յաղօթս, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն» (Ղուկաս, ԻԲ. 46)։*

143. *«Զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք, այլ ինքնին Հոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս։ Բայց որ քննէն զսիրտս, գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօս է վասն սրբոց» (Հռոմ. Ը. 26, 27)։*

144. *Տես ծան. 136։*

145. *Խօսքը վերաբերում է քրիստոնէական դաւանութեանը երրորդութեան անձերի մասին։ Ուզում է ասել, թէ երրորդութեան անձերը (Հայր, Որդի, Հոգի) միեւնոյն պատիւն ունեն, ուստի Հոգին բարեխօսել չէր կարող, այլ այդ՝ մարդկանց աւետարանելու համար է։*

146. *Բնագիրն է՝ «առաքելովքն», ուղղում եմ ըստ. Նոր. Բիւզանդացու «առաքելովք» — չատ, չատ ու չատ աւելի, դաւառական «էւելօք»։*

147. *Բնագրի մէջ է՝ Թէոդիոս, ուղղում եմ՝ Թէոդորոս։ Դա Թէոդորոս Մա-*

մեստացին կամ Մոպսուեստացին է, ծնուած 350 թ. Անտիոքում, մեռած 428 թ., Յովհան Ոսկերբերանի աշակերտակիցը, Մոպսուեստի եպիսկոպոս, հեղինակ բազմաթիւ գրուածքների, որոնք 553 թ. նզովուել են Կոստանդնուպոլսի ժողովում, իբրեւ նեստորականութեան սկզբնաւոր գրուածքներ: Աղանդապետ Նեստորը եղել է նրա աշակերտը: Տես ծան. 122:

148· «Սիւնհոդոս» յունարէն բառ է եւ նշանակում է՝ ժողով: Այսպէս կոչւում էին եպիսկոպոսների ժողովները, որոնք կարգաւորում էին եկեղեցական խնդիրները հաւատքի ու բարեկարգութեան վերաբերեալ: Երկու տեսակ ժողովներ են որոշւում. 1) Ընդհանուր կամ տիեզերական կոչուած ժողովներ, որոնց որոշումներն ընդունում են բոլոր քրիստոնեաները: Հայոց եկեղեցին այդպիսի ժողովներից ընդունել է միայն երեքը: 2) Ազգային եկեղեցական, Հայոց եկեղեցու ժողովներ, որոնց մասնակցում էին ոչ միայն հոգեւորականները, այլ եւ աշխարհականները: Ժողովները հրատարակում էին իրենց կանոնները: — «Սիւնհոդոսական հայրապետներ» կոչւում են ժողովներին մասնակցող մեծ «հայրերը», եկեղեցու հայրերը, տուեալ դէպքում Եփեսոսի ժողովին մասնակցող եպիսկոպոսները: Մեզ հասել է մի թղթակցութիւն Եփեսոսի ժողովի երկու ներկայացուցիչների եւ Սահակի ու Մաշտոցի միջեւ Թէոդորոս Մոպսուեստացու ուսման մասին:

149· Բազրեւանդ գաւառ — այժմեան Ալաշկերտի գաւառը:

150· Նաւասարդ ամիս — հայկական տոմարի առաջին ամիսը: Յազկերտ Բ.ի թագաւորութեան առաջին տարում Նաւասարդի 30ը, երբ վախճանուեց Սահակը, ընկնում է 439 Յուլի Սեպտեմբերի 7ին: Տես. ծան. 175:

151· «Անուշահոտ իւղի պաշտամունք» — հիւանդներին, մահամերձներին իւղով օծելու ծէսը, որ կատարում էին նախկին քրիստոնեաները — «օծումն հիւանդաց»:

152· «Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ» (Սաղմ. լ. 6):

153· «Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ» (Գործք Առ. է. 58):

154· Իշխանուհի Դուստր: Տես ծան. 91:

155· Աշտիշատ —նշանաւոր մեհեանի դիւղը, որ հեթանոսական չրջանում պատկանում էր Վահունի քրմապետներին իբրեւ իրենց սեփական դիւղը (Մ. Խորենացի, Բ. ԺԲ), իսկ քրիստոնէութեան ժամանակ անցել էր Գրիգոր Լուսաւորչին եւ նրա ժառանգներին: Հին մեհեանի տեղ (ուր կային Վահագն աստուածու եւ Անահիտ ու Աստղիկ դիցուհիների բազինները) չինուած էր մարտիրոսական խորան, լեռան սարահարթի վրայ, Ս. Կարապետի վանքի արեւելեան կողմում, 6 ժամ ճանապարհի հեռաւորութեամբ:

156· Բնագրի մէջ է՝ «զՏիմոթէոս»: Նոր. Բիւզանդացին առաջարկում է ուղղել «Տիտոս», որովհետեւ այդ բովանդակութիւնը կայ Տիտոսի մասին. «Ոչ եւս հանդիստ հոգւոյ իմում, քանզի ոչ գտի ես անդ [ի Տրովադա] զՏիտոս ղեղբայր իմ» (Բ. Կորնթ. Բ. 13): Դժուար է որոշել, թէ արդեօք սկզբնապէս «Տիտոս» է եղել եւ արտագրողների անզգուշութիւնից դրուած է «Տիմոթէոս», թէ հէնց Կորնթոսի ինքն անուշադրութեամբ «Տիմոթէոս» է դրել:

157· Տպուած է «տէրունական», ուղղում եմ «ծերունական»:

158· Սահակի մահուան տարում մեհենական ամսի 13ն ընկնում է 440 թուի փետրուարի 17ին: Տես· ծան· 174:

159· Հմայեակ Մամիկոնեանը վարդան Մամիկոնեանի եղբայրն է:

160· Օշական դիւղի մի մատուռում, ինչպէս պատմածից երեւում է, առաջ էլ թաղուած են եղել մարտիրոսներ կամ վկաներ, այսինքն քրիստոնէական հաւատի համար նահատակները: Բայց այդ տեղը նշանաւոր է դարձել միայն Մաշտոցի այնտեղ թաղուելուց յետոյ, եւ դա ժողովրդի մէջ մինչեւ վերջերս յայտնի էր միայն իբրեւ «Սուրբ Թարգմանիչ», որ է Թարգմանիչ Մաշտոցը:

161· Մաշտոցի գերեզմանի վրայի տաճարը («խորանը») 1860ական թուականներին բոլորովին խարխուլ դրութեան մէջ է եղել: Այժմեան տաճարը հիմնովին նոր չինուած է 1870ական թուականներին Գէորգ Դ· կաթողիկոսի նախաձեռնութեամբ: 1880ական թուականներին տաճարի մօտ կար մի փոքր կամարակապ ծածկ, որ ցոյց էին տալիս իբրեւ Վահան Ամատունու գերեզման:

162· Յովսէփ տեղապահը: Տես ծան· 4:

163· Տիզրոն քաղաք (Կտեսիփոն) — Տիգրիս գետի ձախ ափին, Բաղդատ քաղաքից մօտ 18 կիլոմէտր հարաւ· հիմնուած է Պարթեւ թագաւորներից, որոնց ձմեռնային նստավայրն էր: Պարսից Սասանեան թագաւորների օրով Իրանի տէրութեան մայրաքաղաքն էր:

164· «Խոստովանող» կոչւում էին քրիստոնէական հաւատի համար չարչարուողները, որոնք իրենց հաւատը չէին ուրանում եւ Քրիստոսին ստուած էին «խոստովանում», այսինքն ճանաչում:

165· Բնագիրն «իսկ բարեացապարտին Վահանայ» բառերից սկսած մասամբ աղճատուած է: Ուղղում եմ կէտադրութիւնը· այն է՝ «վայելէր» բառից յետոյ դրուած միջակէտը դարձնում եմ վերջակէտ եւ շարունակութիւնն սկսում եմ նոր տողից· ապա՝ «դարձան» բառից յետոյ վերջակէտը դարձնում եմ բութ, որին անմիջապէս յաջորդում են՝ «ոչ եթէ»... Ամբողջ բնագիրն ստացւում է այսպէս· «Իսկ բարեացապարտին Վահանայ, որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր՝ աչխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի դառեալ չնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից [լինել] վայելէր:

Եւ ղի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան՝ ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարդեցաք»...

Պէտք է նկատել՝ 1) «Վահանայ» բառից յետոյ եղած «որ» բառը արտադրողի անուշադրութեան հետեւանքով դրուած է «լինէր» բառից յետոյ: Բառերի այսպիսի տեղափոխութիւն սովորական է ձեռագրերի մէջ: 2) «Վահանայ» հոլովը սեռական չէ, այլ տրական· միջադաս երկրորդական նախադասութիւնը դուրս թողնելով ըստացւում է՝ «Վահանայ... վայելէր»...=Վահանին վայել էր, կը վայելէր, Վահանին անկ էր: 3) «Յանկարծահաս կենաց ամենեցուն լինել» նշանակում է յանկարծ, անսպասելի կերպով օգնութեան հասնել ամէնքին եւ փրկել, կեանքի պատճառ լինել, եւ ոչ թէ մեռնել, ինչպէս հասկանում են ուրիշները: «Յանկարծահաս» բառի նշանակութեան համար հմմտ· «արագահաս Ս· Սարգիս» — արագ օգնութեան հասնող: Եւ վերջապէս՝ 4) Վահան Ամատունին, որի համար Եղիշէն գրում է «իրրեւ զհայր վերակացու համարեալ էր աչխարհական քրիստոնէից», նա իրրեւ

աչխարհի հազարապետ իր բարձր պաշտօնով չատ մարդու օդնութեան հասած եւ կեանքի պատճառ դարձած է եղել, ինչպէս դրում է Կորիւնը: Նոյնը, մի փոքր տարբեր ձեւով, դրում է Ղազար Փարպեցին իր նամակի վերջում մարզպան Վահան Մամիկոնեանի մասին. «... յորմանէ ամենայն մարդ ի հայս, յաւագ եւ ի կրտսեր, հասեալ է մեծապէս օգտակարութիւն, եւ զահ եւ վտառք, իսկ ոմանց եւ ի մահուանէ ի կեանս, եւ ի կորսանէ զտանել եւ ի մէջի լինել, զու տէ՛ր, եղեալ ես պատճառ»:

166· Բնագիրն է՝ «մերձաւոր կենակից վայելէր»: Սուտ-կորիւնի մէջ է՝ «մերձաւոր կենացն յաւիտենից լինէր» — «յաւիտենական կեանքին մերձաւոր էր լինում» Վահանը: Բայց այդ Սուտ-կորիւնի ըմբռնումն է, որի համեմատ նա փոփոխել է բնագիրը: Իսկական կորիւնի դրածի իմաստն է՝ «մերձաւոր կենակից կենացն լինել վայելէր», որ է՝ Վահանին վայել էր մերձաւոր մասնակից լինել նրանց (=սուրբ հայրերի) կեանքին, գործունէութեանը: Եւ կորիւնի այս վկայութիւնից երեւում է, որ Վահանը նոյնպէս դարձել է մեր աչխարհը վերածնող հայրերի հարազատ որդին, հարկաւ, իբր հողեւոր ծնունդ, եւ մօտիկ մասնակցութիւն է ունեցել նրանց կեանքին, գործունէութեանը: Տարօրինակ չպիտի թուի «կենակից կենացն» կրկնութիւնը, որ հազուադէպ չէ, ինչպէս օրինակ, կորիւնը մի փոքր վերեւում դրում է. նոյն Վահան Ամատունու եւ Հմայեակ Մամիկոնեանի համար, թէ էին «հրամանակատարք վարդապետական հրամանաց» — վարդապետի, այսինքն Մաշտոցի հրամանների հրամանակատար: Բայց եւ այնպէս աւելի պարզ լինելու համար միայն՝ Սուտ կորիւնից առնելով՝ աւելացրել եմ միայն «լինել», որ, իմ կարծիքով, սկզբնապէս եղել է բնագրի մէջ: Սուտ կորիւնը պարզել է խօսքը դուրս ձգելով «վայելէր» բառը եւ «լինել» բառը դարձնելով «լինէր». ըստ այսմ եւ «բարեացապարտին Վահանայ» դարձնելով ուղղական հոլով:

Անհասկանալի է, թէ ինչպէս այս հաստատից եզրակացնում են ոմանք, թէ Վահան Ամատունին արդէն վախճանուած է եղել այն ժամանակ, երբ կորիւնը գրելիս է եղել այդ տողերը. մինչդեռ Վահանն ըստ Ղազար Փարպեցու դեռ ապրել է եւ մասնակից է եղել Վարդանանց պատերազմին: Ապա ուրեմն հետեւցնում են, կորիւնի երկն աւելի ուշ ժամանակի գործ է, քան 440ական թուականների առաջին տարիները: Ոչ մի հիմք չկայ այդպէս մտածելու. նոյնիսկ կորիւնի գործածած բայերի ժամանակը՝ «լինէր», «վայելէր» թոյլ չի տալիս այդպէս մտածելու: Զգալի մոռանալ, որ կորիւնն անցեալ ժամանակի համար է գրում, եւ այն, որ այդ գրելիս նա նկատի ունի Մաշտոցի ժամանակը, իսկ Մաշտոցն արդէն վախճանուած էր: Այդպիսի դէպքերում հին եղելութիւնը միշտ էլ անցեալ ժամանակով է պատմւում:

167· Բնագրի մէջ է. «ի նշանակադիմակացն քակելով զհամատուրսն կարգեցաք»: Սուտ-կորիւնի մէջ է. «ի նշանաւոր գիտակացն պատմելով՝ զհամառօտս պատմեցաք» — «քակելով» բառն ուղղելով «քաղելով»՝ բնագիրը վերականգնում եմ այսպէս. «ի նշանաւոր դիտակացն քաղելով՝ զհամառօտս կարգեցաք» — նշանաւոր դիտակ (=տեղեակ) անձերից քաղելով՝ այս համառօտը կարգեցինք: «Նշանաւոր դիտակներն», անշուշտ, Մաշտոցի միւս աչակերտներն են: Կորիւնը, հարկաւ, ամէն բան չէր կարող իմանալ, պէտք է ուրիշներից էլ հարցնէր: Թէ «համառօտ» է գրել, այդ երեւում է նախորդ եւ յաջորդ խօսքերից, թէ չատ բան թողել է, նրանց բոլոր արածները չի գրել եւ այլն:

168· Բնագրի մէջ է «այլ եւ որ զատեանն ընթեռնուն՝ յայտնի է»: Ուղղում եմ ըստ Սուս–կորիւնի՝ «զմատեանս»: Ըստ այմ կորիւնն ասում է, թէ իր զբաժնները ոչ միայն իրեն են յայտնի, այլ իր մատեանը՝ դիրքը կարդացողներին: Իսկ այդ դիրքը կարդացողներն առաջին հերթին՝ էին Մաշտոցի աշակերտները, որոնք պիտակ էին իրենց ուսուցչի գործերին, որոնցից եւ քաղել է, այսինքն ժողովել է իր գրածները մասամբ:

169· Բնագիրն է, «Քանզի չէաք իսկ հանդուրժողք զամենայն արարեալսն կատակաւ դիւրաքանչիւրսն»: Սուս–կորիւնն ունի. «Քանզի եւ ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն դրով նշանակել դիւրաքանչիւրսն»: Բնագրի մէջ պիտի առնել «նշանակել» բառը:

170· Բնագիրն է. «ի դիւրագոյնս եւ ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատասպարեցաք» — այս ասելի հեշտ ու դիւրինի, առաքելականի մէջ պատըսպարուեցինք (=պաշտպանուեցինք): Տես Առաջաբան § 6:

171· Բնագիրն է. «որք ամենապարծ եւ կենդանատուր խաչին ծանուցեալք»: Սուս–կորիւնն ունի. «որք ամենապայծառ հաւատով եւ վարուք ծանուցեալք»: Ուղիղն ընդունում եմ Սուս – կորիւնինը: Խաչանշան լուսաւոր ձեւը վերաբերում է միայն Մաշտոցին: Որեւէ մէկին է մոցրել այդ, առանց մտածելու, որ կորիւնն այս վերջի մասում խօսում է Սահակի ու Մաշտոցի համար դրելով՝ սրբոցն, իւրեանց, նոքօք եւ այլն:

172· Բնագիրն ունի՝ «Դիմմոնայ». ուղղում եմ «կրմանայ»:

173· Բնագրի մէջ պակասում են Վռամ Թագաւորի տարիները: Պէտք է լինի Յաղկերտի տարիներից յետոյ այսպէս. «Եւ Վռամայ ամս ութ եւ տասն»: Սկզբնապէս անպայման եղել է այդ. թէ չէ Մաշտոցի կրօնաւորութեան տարիների հաշիւը սխալ կը լինի, մինչդեռ դրանով ճշտւում է 45 թիւը. 6+21+18=45: Յաղկերտ Բ.ի առաջին տարին հաշուի չի առնւում:

174· Սահակը վախճանուել է 439թ.հայոց նաւասարդ ամսի 30ին, որ է Սեպտեմբերի 7ին, Հինգշաբթի օրը: Մաշտոցը վախճանուել է մեհեկան ամսի 13ին, որ է 440 թ. փետրուարի 17ին, Շաբաթ օրը: Տես «Արարատ» ամսագիրը, Էջմիածին 1912, թիւ 5—6, էջ 500—503· Գալուստ Տ. Մկրտչեանի յօդուած՝ «Հայ գրերի 1500ամեակի առթիւ»:

175· Յաղկերտ Բ.ի առաջին տարին, որ կորիւնը հաշուի չի առնում, ընկնում է 439/440 թուականներին: Մաշտոցի կրօնաւորութեան տարիների թիւը 45 է, որ հանելով 439ից՝ առանում ենք 394: Այս թուականին է սկսուել Մաշտոցի կրօնաւորութիւնը:

176· Հայոց դպրութեան սկիզբը կամ հայկական գրերի գիւտը դնում են՝ 402/403, 404, 404/405, 405, 406 թուականներին, նայելով թէ ո՛ր հեղինակը ինչպէս է անում հաշիւները: Յաղկերտ Ա.ի ութերորդ տարին ընկնում է 407 թուին, երբ եւ ըստ կորիւնի եղել է հայ դպրութեան, այսինքն «Դանիէլեան» նշանագրերի գործածութեան սկիզբը, եթէ միայն այս «ութերորդ» թիւն աղճատուած չէ: Միւս կողմից՝ կորիւնն ասում է, հայոց դպրութիւնից մինչեւ Մաշտոցի մահը 35 տարի է. ուրեմն Յաղկերտ Բ.ի առաջին տարուց՝ 439—35=404: Կը նշանակի ըստ այմ՝

404 թ. է եղել գրերի դիւտի սկիզբը, եթէ միայն այս դէպքում էլ 35 թիւն ազճատուած չլինի:

Աւելորդ չէ նշել այստեղ հետեւեալ Սասանեան թագաւորների տարիներն ըստ Կրումբախերի.*) Վռամ Դ. (որեւ կրման, Քիրմանշահ) 389—399. Յազկերտ Ա. 399—420. Վռամ Ե. 420—439. Յազկերտ Բ. 439—457: Այս թուականներին համապատասխան են կարծես յիշած տարեթիւերը:

Մ. ԱԲԵՂԵԱՆ

*) Krumbacher, Gesch. der Byz. Lit., էջ 1146.

ՅԱՆԿ ԱՆՈՒՆՑ

Ագաանազեան· Ասաանազեան ազգ· 22:
Ականիոս եպսկ· Ամդայ 46:
Ականիոս եպսկ· Մելիտինէի· 66:
Անուսիտ· 64:
Աղուանից· 70, 72, 78:
Ամատունեաց ազգ· 92:
Ամիդ· 46:
Այրարատ· 50, 58, 74, 92:
Անանիաս եպսկ· 60:
Անատոլ· Անատոլիս· 64:
Աշուշայ· 74:
Աշտիշատ· 88:
Առաւան հազարապետ· 36:
Ասորիք· 46, 50, 74:
Ատտիկոս· 66:
Արամ, երկիր· 46:
Արկադ· 64:
Արծիւղ թգր· վրաց· 72:
Արշակունիք· 36:
Արսվաղ· Արսվաղէ· թգր· 70:
Արտաշէս, թգր· 70:

Բաբիլաս եպսկ· 46:
Բագրաւանդ· Բագրեւանդ· 86:
Բակուր թգր· վրաց· 62:
Բաղասական կողմանք· 72:
Բարբարիանոս· Բորբորիանոս աղանդ· 68:
Բենիամէն երէց աղուան· 68:
Բլրոցաց գիւղ· 86:

Գարդման· 72:
Գարդմանական ձոր· 72:
Գինք եպսկ· Դերջանոյ· 66:
Գլուտ Սիւնի· 60:
Գողթն· 40, 60:

Դանան· 70:
Դանիէլ ասորի եպսկ· 42, 44:
Դերջան· 66:
Դիսմոն· 98:
Դուստր· 88:

Եդեսիա· 46, 74:
Եզնիկ· Եզնակ· 74, 76:
Եկեղեաց գաւառ· 50:
Ենովք· 70:
Երեմիա եպսկ· 70:
Երեմիա, պաշտօնեայ Սահակայ· 88

Թադիկ· Թոդիկ· 92, 96:
Թէոդորոս հերձուածող· 86:
Թէոդոս· 64:

Խորձենական գաւառ· 60:
Խուրս իշխան Գարդմանից· 72:

Կայենականք· 60:
Կողբ գիւղ· 74:
Կոստանդինական քաղաք, Կոստանդնուպոլիս· 66, 74:
Կորիւն· 74:
Կրման· 98, 100:

Հարէլ· 44:

Հայաստան ազգ· 42:
Հայաստան· 22, 50, 58, 74, 86:
Հայք· 36, 44, 46, 56, 58, 64, 66, 68, 76, 78, 96, 98:
Հայք Մեծք· 36, 50, 70, 74, 92:
Հացեկաց գիւղ· 36:
Հմայեակ Մամիկոնեան· 92, 94:
Հռոմք· 64:
Հռոփանոս· 48:

Ղեւոնդէս, Ղեւոնդէոս երէց· 66, 74:

Մամիկոնեան որեար· 58:
Մամիկոնեան տոհմ· 92:
Մաշքոց· 22, 36, 44, 46, 60, 78, 86, 90, 94:
Մարք· 40, 54:
Մելիտինէ· 66:
Մեսրոպ· 22:
Մուշէ· 60:
Մուշեղ եպսկ· 72:
Մովսէս եպսկ· վրաց· 62:
Մխոստովանող· 96:

Յազկերտ Բ· 86, 98, 100:
Յոյնք· 64, 74:
Յովհան Եկեղեցացի· 50:
Յոհան խոստովանող· 96:
Յովնաթան Հիմյ· 72:
Յովսէփ կաթողիկոսական տեղապահ· 22, 92, 96:
Յովսէփ Պաղնացի· 50, 74:

Նոր Փաղաք· 50, 70, 92:

Շաբաթ իշխ· Գողթան
Շաբիր 40, 60:

Պաղանական տուն· 50:
Պարսք· 86, 98:

Ջաղայ· 62:

Ռահ գետ· 54:
Ռոտաստակ· 60:

Սահակ կաթող· 42, 44, 46, 58, 64, 70, 74, 76, 86, 92:
Սամուէլ եպսկ· 64, 74:
Սամոսատական Փաղաք· 46, 48:
Սիւնական աշխարհ, Սիւնիք· 60:
Վահան Ամատունի· 92, 94, 96:

Վահրիմ· 44:
Վաղենակ իշխ· Սիւնեաց· 60:
Վասակ Սիսական· 62:
Վարդան հայր Մաշքոցի· 36:
Վարդան կամ Վարդկան Մամիկոնեան· 58, 88:
Վիրք· 62, 64, 72, 78:
Վռամ· 86, 98, 100:
Վռամշապուհ 42, 46, 50:

Տարօն, Տարօնական գաւ· 36, 60, 88:
Տաշիրք· 72:
Տիգրոն· Տիսպոն· 96:
Տիրայր խորճենացի· 60:

Օշական· 94:

Archbishop
Vicken Aykazian